ՀՀ ԱՃԹՆ-Ի ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

30 ապրիլ 2018թ.

Պատրաստվել է
Հայաստանի ամերիկյան համալսարանի
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի համար

«Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագրի շրջանակներում,

որը ֆինանսավորվում է Երևանում բրիտանական դեսպանատան կողմից

Բովանդակություն

Հապավումներ....3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....4
1.1. ԱՃԹՆ-Ն ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ....4
1.2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ....4
1.3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....5
2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ....6
2.1. ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐ....6
2.2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ....7
3. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ....10
3.1. ՇՀՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ....10
3.2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ....11
3.3. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ....12
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ....18
4.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՀՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ....18
4.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ....19
4.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ....22
5. ՀՀ ԱՃԹՆ-Ի ԿԱՅՔ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՈՐՏԱԼԸ....23
6. ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ....24
6.1. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՇԽ-Ի ՄԻՋԵՎ....24
6.2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ....25
6.3. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԻՐԵՆՑ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ....25
6.4. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ....26
7. ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐ....27
7.1. ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ....27
7.2. ԿԱՐԳԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԿԱՂԱՊԱՐ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ....28
7.3. ԲՐԵՆԴԱՎՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԴԻԱՅԻՆ....29
7.4. ԲՐԵՆԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ....29
7.5. ԼԵԶՈՒՆԵՐ....31
8. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ....32
9. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ....33
9.1. ԱՃԹՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ....33
9.2. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....36
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....38
1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ....39
2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ....43
3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ....45
4. ՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ....46
5. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ (2015, 2016, և 2017թթ.)....47
6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ, ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....52
7. ԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ....54
8. ՍԹՅՈՒԴԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ....57
9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ....59
10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ....60
11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ, ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ....61
12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ....62
13. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....64
14. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....65
15. ԱՃԹՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԹ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ....66
16. ԱՄՆ ՄԶԳ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ....68
17. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԱՃԹՆ-Ի ԿԱՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....70

Հապավումներ

ԱԳՆ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ԱՆ	ՀՀ արդարադատության նախարարություն
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն
ԳԶԲ	Գերմանական զարգացման բանկ
ԳԶԲ	Գերմանական զարգացման բանկ
ԵԶԲ	Եվրասիական զարգացման բանկ
ԵՄ	Եվրոպական միություն
ԷԵԲՊՆ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ԻԻՎ և ԳԾ	Իրավական և ինստիտուցիոնալ ուսումնասիրություն և գործողությունների ծրագիր Հայաստանի համար
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԱՀ ՊՀԿ	ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
ՀՌԳԾ	Հաղորդակցության ռազմավարություն և գործողությունների ծրագիր
ՀՏՀ	Հաճախակի տրվող հարցեր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՆՈՒ	Նախնական ուսումնասիրություն Հայաստանի ԱՃԹՆ զեկույցի համար
ՏԶՆՆ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ԱՃԹՆ-Ն ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) նավթի, գազի և հանքային ռեսուրսների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որն իրականացվում է 51 երկրի կողմից: 2017 թ. մարտի 9-ին ԱՃԹՆ միջազգային խորհրդի կողմից թեկնածության հայտի հաստատումից հետո Հայաստանը դարձել է անդամության թեկնածու երկիր: Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է իր առաջին ԱՃԹՆ զեկույցը հրապարակել թեկնածու դառնալուց հետո 18 ամսվա ընթացքում (մինչև 2018 թ. սեպտեմբերի 9-ը):

Միանալով նախաձեռնությանը՝ Հայաստանի կառավարությունը հանձնառություն է ստանձնում տեղեկատվություն հրապարակել արդյունահանող ոլորտի ֆինանսական հոսքերի վերաբերյալ և ապահովել թափանցիկության ավելի բարձր մակարդակ հանքարդյունաբերության ոլորտում և այս նպատակով ստեղծել է բազմաշահառու խումբ (ԲՇԽ)՝ կազմված երեք խմբակցություններից՝ կառավարության, քաղաքացիական հասարակության և արդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչներ: ԲՇԽ-ն, ԱՃԹՆ-ի որոշումներ կայացնող գլխավոր մարմինը, մշակել է աշխատանքային ծրագիր, որտեղ շարադրվել է այն հարցերի շրջանակը, որոնց պետք է անդրադառնա հայաստանյան ԱՃԹՆ-ն: Հայաստանի ԲՇԽ-ի կողմից ընդունված աշխատանքային ծրագիրն անդրադառնում է հետևյալ հարցերին.

- ոլորտի ֆինանսական թափանցիկություն,
- հանքարդյունաբերող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտում,
- հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության ձևավորում,
- ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում,
- ԱՃԹՆ ստանդարտի վերաբերյալ հանրային իրազեկվածության և ընկալման բարձրացում:

Բոլոր այն միջոցառումները, որոնք թույլ կտան անդրադառնալ այս հարցերին, պետք է իրականացվեն ԲՇԽ-ի անդամների լիարժեք ներգրավմամբ և հասանելի լինեն հանրությանը:

1.2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում բրիտանական դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագրի շրջանակներում Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊՀԿ) ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի համար պատրաստել է սույն հաղորդակցության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը (ՀՌԳԾ):

ԱՃԹՆ-ի 2016թ. ստանդարտում ամրագրված է, որ բազմաշահառու խմբի պարտականությունների մեջ է մտնում քաղաքացիական հասարակության խմբերի և ընկերությունների հետ արդյունավետ կապ հաստատելու գործողությունների նախաձեռնումը, այդ թվում՝ հաղորդակցության այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են մեդիան, կայքը և նամակագրությունը՝ նպատակ ունենալով շահագրգիռ կողմերին տեղեկացնել ԱՃԹՆ-ն իրականացնելու կառավարության հանձնառության և ընկերությունների ու քաղաքացիական հասարակության կենտրոնական դերի մասին: ԲՇԽ-ն պետք է նաև լայնորեն տարածի հանրային այն տեղեկատվությունը, որը հասանելի կդառնա ԱՃԹՆ-ի գործընթացի արդյունքում, ինչպիսին, օրինակ, ԱՃԹՆ-ի զեկույցն է:[1]

[1] ԱՃԹՆ ստանդարտ, 2016թ. (ԱՃԹՆ 2017), էջ 15:

Ավելին, հաղորդակցությունն անհրաժեշտ է ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին համապատասխանելու համար: ԱՃԹՆ-ի վավերացման չափանիշներից մի քանիսը հստակ կերպով նշում են հաղորդակցության գործողությունների անհրաժեշտության մասին, այլապես բարդ կլինի ստանդարտի իրականացումը առանց արդյունավետ հաղորդակցության[2]: Ցանկացած երկրում ԱՃԹՆ ստանդարտի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ հաղորդակցության գործառույթները ներառում են մասնակցության հրավերներ (օրինակ՝ ԲՇԽ հանդիպումներին), տեղեկատվության և բացահայտումների տրամադրում, բանավեճերի և քննարկումների խրախուսում կամ ԱՃԹՆ ձեռքբերումների և հնարավորությունների վերաբերյալ կարծիքների և խորհուրդների ընդունում:

ԱՃԹՆ-ն ցանկացած երկրի համար հավակնոտ նախաձեռնություն է: Այն գործ ունի արդյունահանող բարդ ոլորտի հետ, առնչվում է հարկային, ֆինանսական, պայմանագրերի կնքման, ընդերքօգտագործման թույլտվությունների թափանցիկության, արտադրության և այլ հարցերի շուրջ բացահայտումների հետ, որոնք ունեն գլխավորապես տեխնիկական և ոչ պարզ բնույթ: Այս ամենը անհրաժեշտություն է դարձնում հաղորդակցության ծրագիր ունենալը, որը կիրականացնի իրազեկող, ներգրավող և վստահություն ամրապնդող գործառույթներ:

1.3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՃԹՆ-ի ՀՈԳԾ-ի պատրաստումը ներառել է՝

- *Միջազգային օրինակների ուսումնասիրություն:* Ուսումնասիրվել են ութ երկրների հաղորդակցության ռազմավարություններ (Ալբանիա, Ադրբեջան, Գերմանիա, Գանա, Լիբերիա, Նիգերիա, Միացյալ Թագավորություն, Ղազախստան), վերլուծվել են դրանց մոտեցումներն ու կառուցվածքները: Իրականացվել է ԱՃԹՆ-ի անդամ երկրների համաշխարհային փորձի ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով ներկայացնել առաջարկություններ և տեխնիկական օժանդակություն տրամադրել ԱՃԹՆ ԲՇԽ-ին՝ Հայաստանի համար արդյունավետ հաղորդակցության ռազմավարություն մշակելու միջոցով: :
- *Յոթ երկրների ԱՃԹՆ-ի կայքերի ուսումնասիրություն:* Ուսումնասիրվել են յոթ երկրների (Ղազախստան, Գերմանիա, Ուկրաինա, Ամերիկայի միացյալ նահանգներ, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ և Մոնղոլիա) կայքերի բովանդակություններն ու մատչելիությունը: Բովանդակությանը վերաբերող պարամետրերը ներառել են տեղեկատվության հասանելիությունը և ամբողջականությունը, ներկայացվող տեղեկատվության ընկալելիությունը (ինֆոգրաֆիկայի կիրառում և այլն) և այլն: Մատչելիությանն առնչվող պարամետրերը ներառել են լեզուներ, էջը բեռնելու արագություն, վիզուալ պարզություն և այլ գործոններ:
- *Քննարկումներ և հարցազրույցներ ԲՇԽ-ի աշխատանքային խմբի անդամների հետ:* ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության հարցի շուրջ կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ ԲՇԽ-ի աշխատանքային խմբի հետ՝ նպատակ ունենալով սահմանել ռազմավարության կառուցվածքը և առանցքային տարրերը: Աշխատանքային խումբը կազմված է եղել կառավարության, ՔՀԿ-ների և արդյունահանող ոլորտի ընկերությունների ներկայացուցիչներից: Հաղորդակցության ռազմավարության կառուցվածքի, հիմնական ուղերձների և թիրախային լսարանների շուրջ ձեռք է բերվել համաձայնություն և ամրագրվելսույն փաստաթղթում:
- *ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների և ուղեցույցների ուսումնասիրություն:* 2016թ. ԱՃԹՆ-ի ստանդարտը (կետ 7) պահանջում է, որ արդյունահանող ոլորտին վերաբերող տվյալները ոչ միայն բացահայտվեն և հասանելի լինեն հանրության համար, այլև լինեն հասկանալի և ձևավորեն հանրային երկխոսություն: Ռազմավարության մեջ արտացոլվել է ոչ միայն ԱՃԹՆ-ի օգուտների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման, այլև հաղորդակցությունը հստակ և հասկանալի դարձնելու մասին դիտարկումը:

[2] «Խոսող թափանցիկություն». արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության հաղորդակցության ուղեցույց, (ԱՃԹՆ 2008թ.), էջ 13 /Talking Transparency: A Guide for Communicating the Extractive Industries Transparency Initiative (EITI 2008), p. 13:

2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ

Հանրությանը և շահագրգիռ կողմերին՝ երկրի արդյունահանող ոլորտին վերաբերող հարցերում բանավեճերի և քննարկումների մեջ ներգրավելը ԱՃԹՆ-ի ստանդարտի անկյունաքարերից է: ԱՃԹՆ-ի գործընթացը հստակ նշում է, որ ոլորտի կառավարմանը վերաբերող հիմնական տեղեկությունները պետք է տեղ գտնեն ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվության մեջ՝ այդ ոլորտի կառավարումը բարելավող առաջարկությունների հետ միասին: Այս տեղեկությունները պետք է լայնորեն տարածվեն՝ նպատակ ունենալով նպաստել հանրային բանավեճին և ապահովել ներկայացված առաջարկությունների իրականացումը: Հաղորդակցությունը՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխանելու կարևոր բաղադրիչներից է և առանցքային դեր է խաղում երկրի վավերացման գործընթացի ժամանակ:

ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է, որ տվյալ երկրում ԱՃԹՆ-ի գործընթացն ընդգրկի հանրային բանավեճեր (պահանջ 7.1) և առաջարկի տվյալների հանրամատչելիություն (պահանջ 7.2): Ստանդարտն ունի նաև բաց տվյալների քաղաքականությանը վերաբերող գլուխ: Հանրային ներգրավվածությունը դիտարկվում է որպես կարևոր գործոն՝ ամենամյա զեկույցներում ներկայացվող առաջարկությունների և դրանց հետամուտ գործողությունների իրականացման առումով (7.3 և 7.4 պահանջներ): Հանրության և ՋԼՄ-ների առավել լայն ներգրավվածությունը կնպաստի ԱՃԹՆ-ի 7.3 և 7.4 պահանջների և ԲՇԽ-ի կողմից ձեռնարկվելիք բոլոր անհրաժեշտ քայլերի իրականացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, քաղված դասերից բխող միջոցառումների իրականացում, անհամապատասխանությունների բացահայտում, դրանց պատճառների հետաքննում և վերացում, ինչպես նաև ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված առաջարկությունների դիտարկում:

2.1. ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐ

Սույն ՀՌԳԾ հստակեցնում են, թե հայաստանյան ԱՃԹՆ-ի գործընթացն ինչպես կարող է ապահովել համապատասխանությունը ԱՃԹՆ-ի ստանդարտի տառին և ոգուն՝ **թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև հանրային բանավեճի և ներգրավվածության հարցերի առնչությամբ:** ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության գլխավոր նպատակն է՝ նպաստել արդյունահանող ոլորտի բաց ու հաշվետու կառավարմանը և բարեփոխումների խթանման նպատակով ապահովել հանրային բանավեճեր ու մասնակցություն: Սա իրականացնելու համար ՀՌԳԾ-ն կենտրոնանում է մի քանի մակարդակների և առանցքային տարրերի վրա, որպեսզի ապահովի հայաստանյան ԱՃԹՆ-ի գործընթացի արդյունավետ և համապարփակ հաղորդակցությունը (պատկեր 1):

Պատկեր 1: ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի ընդհանրական կառուցվածքը.



ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության միջոցառումների առանցքային մակարդակներն ու տարրերն ընդգրկում են՝

1. **Ազգային հաղորդակցություն**. կապ զանգվածային լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության, հանքարդյունաբերական համայնքների, արդյունահանող ընկերությունների, պետական կառույցների և այլ շահագրգիռ կողմերի հետ, որոնք հետաքրքրված են հանքարդյունաբերությանն առնչվող հարցերով:

2. **Միջազգային հաղորդակցություն.** կապ միջազգային հանքարդյունաբերողների, օտարերկրյա ներդրողների, դոնորների, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, հայկական սփյուռքի և Օսլոյում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, այլ ԱՃԹՆ-ն իրականացնող երկրների ազգային քարտուղարությունների և ԲՇԽ-ների անդամների հետ:

3. **ԱՃԹՆ-ի հայաստանյան կայք.** ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի օգտագործումը՝ որպես հաղորդակցության միջոց և գործիք բոլոր ասպարեզներում: Կայքը նաև հասանելի կդարձնի ԱՃԹՆ-ի հաշվետվություններ ներկայացնող տնտեսվարող սուբյեկտների և պետական կառույցների տրամադրած տվյալները:

4. **Ներքին հաղորդակցություն.** կապ ԲՇԽ-ի անդամների միջև, ինչպես նաև ԲՇԽ-ի անդամների և նրանց ընտրողների միջև, ԲՇԽ-ի և ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) միջև: Սա ներառում է այնպիսի հաղորդակցություն, որը թույլ կտա ԲՇԽ-ի բոլոր անդամներին և ԱՃԹՆ-ի առանցքային պատասխանատուներին լինել բավարար չափով տեղեկացված՝ որպես ԱՃԹՆ-ի դեսպաններ հանդես գալու համար:

5. **Բրենդավորում և լեզուներ**. լոգոների, կարգախոսների, տառատեսակների, գույների, բլանկների և գրենական պիտույքների, կաղապար տեքստերի (շաբլոն-տեքստեր), նշանների և պաստառների, պրեզենտացիոն կաղապարների, հաշվետվության կաղապարների, էլեկտրոնային փոստի ստորագրությունների, փաստագրական թերթիկների քննարկում՝ նպատակ ունենալով ստեղծել հետևողական և ճանաչելի հաղորդակցություն, որը կհանգեցնի ուշադրության, վստահության և ներգրավվածության աճի: Այս բաղադրիչը նաև կանդրադառնա ՀՀ ԱՃԹՆ-ի լեզուների հարցին:

2.2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Առաջարկվող ՀՌԳԾ-ում հաղորդակցության միջոցառումները կազմակերպվում են գլխավորապես ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի հիմնական ժամանակահատվածների կամ փուլերի հիման վրա: Հաջորդ երկու և կես տարվա ընթացքում ՀՀ ԱՃԹՆ-ն ունի ութ փուլ, որոնք առնչվում են ԱՃԹՆ-ի պահանջների իրականացման, զեկույցների և հաշվետվությունների ներկայացման և վավերացման հարցերին: Այս ժամանակահատվածներից յուրաքանչյուրն ունի հաղորդակցության իր ուրույն մարտահրավերներն ու հնարավորությունները: ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացից երկու և կես տարի անց կարելի է վերանայել հաղորդակցության ռազմավարությունը, թեև շատ գործողություններ, հնարավոր է, մնան անփոփոխ:

Աղյուսակ 1-ում ամփոփված են այս ութ փուլերը և առաջարկվում են նպատակներ յուրաքանչյուրի համար: Ժամանակահատվածներից յուրաքանչյուրը և դրանց համապատասխան նպատակները կարող են ունենալ ազգային, միջազգային, կայքին առնչվող և ներքին հաղորդակցություններ ու բրենդավորման հետ կապված գործողություններ:

Աղյուսակ 1. ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության ընդհանուր պատկերը՝ ըստ հիմնական ժամանակահատվածների և մակարդակների/տարրերի.

Հ/Հ	Ժամանակահատված (ամսաթվեր)	Հաղորդակցության հիմնական նպատակ	Ազգ.	Միջ.	Կայք.	Ներ.	Բրենդ.
I	Օրենսդրական փոփոխություններ, պետական մարմինների և հանքարդյունաբերող ընկերությունների կողմից հաշվետվությունների ներկայացում (հունվար-հունիս 2018թ.)	1. ԱՃԹՆ-ի հաշվետու կազմակերպությունները պատրաստ են հաշվետվության տեսքով ներկայացնելու (առցանց ձևաչափերի կիրառմամբ) ֆինանսական և այլ տվյալներ՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի և ՀՀ օրենսդրության պահանջների	✓		✓		
		2. Հիմնական շահագրգիռ կողմերը տեղեկացված են և ներգրավված են	✓	✓			
		3. Հանրությունն իրազեկված է ՀՀ ԱՃԹՆ-ի մասին	✓	✓			
		4. ՀՀ ԱՃԹՆ կայքը գործում է			✓		
		5. ԱՃԹՆ Հայաստանը ունի հետևողական բրենդավորում և ոճ					✓
II	Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստում (մայիս-սեպտեմբեր, 2018թ.)	1. Հաշվետու կազմակերպություններից (պետական և մասնավոր) տեղեկատվության ժամանակին և ամբողջական հավաքագրում	✓				
III	Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցի հրապարակում (սեպտեմբեր, 2018 թ.)	1. Զեկույցի լայն և համակողմանի լուսաբանում զանգվածային և նեղ մասնագիտացված լրատվամիջոցների կողմից	✓	✓			
		2. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, արդյունահանող ոլորտի, ակադեմիական շրջանակների, փորձագետների ներգրավում	✓				
IV	Զեկույցին հաջորդող ժամանակահատված (հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018թ.):	1. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, արդյունահանող ոլորտի, ակադեմիական շրջանակների, կառավարության, փորձագետների ներգրավում (ներառյալ՝ իրական սեփականատիրոջ վերաբերյալ հաշվետվության)	✓				
V	Հայաստանի երկրորդ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստում (հունվար-օգոստոս, 2019թ.)	1. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, ակադեմիական շրջանակների, փորձագետների ներգրավում	✓				
VI	Վավերացման հետ կապված այցեր (սեպտեմբեր-հոկտեմբեր, 2019թ.)	1. Վավերացման գործընթացի լուսաբանում զանգվածային լրատվամիջոցների կողմից	✓	✓			
		2. Լրատվամիջոցների և ՔՀԿ-ի իրազեկում իրական սեփականատիրոջ բացահայտման վերաբերյալ					
VII	Հայաստանի 2-րդ ԱՃԹՆ զեկույցի հրապարակում (նոյեմբեր, 2019թ.)	1. Զեկույցի լայն լուսաբանում զանգվածային լրատվամիջոցների կողմից	✓	✓			
		2. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, ակադեմիական շրջանակների, արդյունահանող ոլորտի,	✓	✓			

		փորձագետների ներգրավում					
VIII	2-րդ զեկույցին հաջորդող ժամանակահատված (ԲՇԽ նոր անդամների ընտրություն և իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմի գործարկում), նոյեմբեր- դեկտեմբեր, 2019թ.	1. ԲՇԽ-ի նոր անդամների վերաբերյալ հանրային տեղեկացում:	✓	✓	✓	✓	✓
		2. Վերապատրաստում ԲՇԽ-ի նոր անդամների համար			✓	✓	
		3. Շահագրգիռ կողմերի իրազեկում իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմի օգտագործման վերաբերյալ					
		4. Հաղորդակցության ռազմավարության վերանայում	✓	✓	✓	✓	✓

3. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային հաղորդակցության ընդհանուր նպատակը պետք է լինի հիմնական շահագրգիռ կողմերի և թիրախային լսարանների իրազեկումը և արդյունավետ ներգրավումը երկրի արդյունահանող ոլորտի կառավարման շուրջ բանավեճերում ու քննարկումներում: Սրա համար պահանջվում են հաղորդակցության համապատասխան միջոցներ, ժամանակային առումով ճշգրիտ և համապատասխան գործողությունների կազմակերպում և այնպիսի ուղերձների մատուցում, որոնք կընդլայնեն շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը ոլորտում:

3.1. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՀՀ ԱՃԹՆ-ն ունի հանրային իրազեկվածության բարձրացման պահանջներ: Սա իրականացվում է գլխավորապես զանգվածային լրատվամիջոցներին ներգրավելու միջոցով: Մինչ այդ, սակայն, ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության միջոցառումների մեծ մասը պետք է հասցեագրված լինի մասնագիտացված խմբերի, քանի որ թեմաները կարող են լինել տեխնիկական բնույթի կամ առավել մտահոգիչ լինել կոնկրետ խմբի համար (օրինակ՝ ազդակիր համայնքներ կամ ՔՀԿ-ներ): Ազգային մակարդակում մասնագիտացված թիրախային խմբերը ներառում են՝

Գործարար ոլորտ
- մետաղական հանքարդյունաբերական ընկերություններ և ներդրողներ (ներառյալ՝ բանկեր, ֆոնդային բորսա և այլն)
- հաշվապահական/աուդիտորական և իրավաբանական խորհրդատվական ընկերություններ
- հանքարդյունաբերական ոլորտի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող մասնագիտական խմբեր, օրինակ՝ ոլորտում մասնագիտական ասոցիացիաներ, մենեջմենթի կոնսալտինգային ընկերություններ, և այլն:

Կառավարություն
- պետական մարմիններ (նախարարություններ, պետական կոմիտեներ)
- տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետարաններ
- հանքարդյունաբերական գործողությունների ազդակիր համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ

Քաղաքացիական հասարակություն և ազդակիր համայնքներ
- ազդակիր համայնքների բնակիչներ
- հակակոռուպցիոն, լավ կառավարման, համայնքային ֆինանսավորման, տնտեսական զարգացման, սոցիալապես պատասխանատու գործարարության, շրջակա միջավայրի պահպանության և այլ ոլորտներում գործող ՔՀԿ-ներ

Մեդիա
- մասնագիտացված մեդիա (օրինակ՝ գործարար ոլորտի և ֆինանսական հարցերով թղթակիցներ կամ հետաքննող լրագրողներ)
- մասնագիտական կամ առևտրային ամսագրեր
- զանգվածային լրատվամիջոցներ (սա սովորաբար լայն հանրությանն իրազեկելու համար է կիրառվում, բայց կարելի է նաև օգտագործել գործարար ոլորտում, քաղաքացիական հասարակության մեջ և այլ ոլորտներում՝ ավելի որոշակի թիրախների հասանելի լինելու համար)

Ակադեմիական շրջանակ
- ուսանողներ, դասախոսներ, հետազոտողներ և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ, օրինակ՝ դասախոսներ, որոնք մասնագիտացած են , հանքարդյունաբերության, շրջակա միջավայրի, սոցիալական զարգացման, գործարարության, ֆինանսների, կորպորատիվ և պետական ոլորտի կառավարման ու այլ հարցերում:

Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններ

- Հայաստանում գործող դոնոր ընկերություններ և զարգացման գործակալություններ (օրինակ՝ ԱՄՆ ՄԶԳ, ԳՄՀԸ, ԳԶԲ), միջազգային կազմակերպություններ և Հայաստանում գործող միջազգային ֆինանսական հաստատություններ (ԵՄ, ՄԱԿ, ԱՄՀ, ՀԲ, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵԶԲ և այլն)
- Օտարերկրյա դեսպանատներ:

Հավելվածներ 4-10-ում նշված են վերը թվարկված յուրաքանչյուր թիրախային խմբի հետ առնչվող ընկերությունները, կազմակերպությունները կամ գործակալությունները: Այս խմբերից յուրաքանչյուրի հետ գործի կդրվեն նրանց նախընտրած հաղորդակցության միջոցները և ուղերձները: Հաջորդող գլուխներում այս թեմաները լրացուցիչ կքննարկվեն: Հաղորդակցության ազգային ռազմավարության եզրափակիչ գլխում առաջարկվում են այն թիրախային խմբերը, հաղորդակցության միջոցները և բոլոր գործողությունների համար անհրաժեշտ այն հիմնական ուղերձները, որոնք նպաստում են ազգային հաղորդակցության նպատակների իրականացմանը:

3.2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սույն զեկույցում «հաղորդակցության միջոց» արտահայտությունը կիրառվում է «տեղեկատվական հոսքերի ուղի» իմաստով: Տեղեկատվության հոսքերը կարելի է բաժանել միակողմանի (օրինակ՝ լուրերի թողարկումներ, բրոշյուրներ կամ տեղեկագրեր) կամ երկկողմանի հոսքերի (օրինակ՝ ասուլիսներ, սեմինարներ կամ վերապատրաստումներ): Միակողմանի հոսքի պարագայում հեռարձակողը շարադրում է տեղեկատվությունը և մշակութային համապատասխան և հասկանալի ոճով ու մոտեցմամբ ապահովում դրա ընկալելիությունը: Երկկողմանի հոսքը կարող է անել նույնը, սակայն այն թիրախային լսարանին նաև ընձեռում է պատասխանելու, պարզաբանումներ պահանջելու, ավելի խորը ուսումնասիրելու, ներկայացված նյութը վիճարկելու և այլ հնարավորություններ: Աղյուսակ 2-ում նշված են յուրաքանչյուր տեսակի համար հաճախակի կիրառվող հաղորդակցության միջոցները: ԱՃԹՆ-ի համար հաղորդակցության երկու տեսակներն էլ պետք է օգտագործվեն:

Աղյուսակ 2. Կիրառման ենթակա հաղորդակցության միջոցների երկու տեսակ

Միակողմանի	Դիալեկտիկական
• Զեկույցներ և հրապարակումներ • Առցանց պորտալ կամ կայքէջ • Տվյալների փաստական բացատրական ամփոփագրեր կամ տեսանյութեր • Պարբերական տեղեկագրեր (տպագիր կամ էլեկտրոնային) • Տպագիր պաստառներ, բրոշյուրներ և նյութեր • Ինֆոգրաֆիկա (էլեկտրոնային) • Մամլո հաղորդագրություններ Մեդիայի կողմից լուսաբանում (տպագիր կամ էլեկտրոնային) • Հեռուստանախագծեր և հեռուստատեսային կամ ռադիոբանավեճեր առանց հանրության մասնակցության • Սոցիալական մեդիա առանց մեկնաբանելու հնարավորության • Երրորդ կողմի կայքեր • Մասնագիտական և մասնագիտացված ամսագրեր առանց մեկնաբանության հնարավորության	• Ասուլիս • Սեմինարներ և համաժողովներ • Հանրային ելույթներ և բանավեճեր • Վերապատրաստումներ և աշխատաժողովներ (այդ թվում՝ նոր ուսումնական ծրագրեր մասնագետների համար) • Սոցիալական մեդիա • Թոք շոուներ և հեռուստատեսային կամ ռադիո բանավեճեր հանրային մասնակցության հնարավորությամբ • Մեկնաբանության և գնահատականի հնարավորությամբ մասնագիտական և մասնագիտացված ամսագրեր • Բլոգեր և տեսաբլոգեր

Քարտուղարության հաղորդակցությունների և հանրային կապերի հարցերով պատասխանատու անձը պետք է ապահովի, որպեսզի ուղերձները ձևակերպվեն պատշաճ, արդյունավետ կերպով հաղորդվեն,

իսկ երկխոսությունները վարվեն համապատասխան մակարդակով: Այն դեպքերում, երբ սրանք կիրականացվեն քարտուղարության կամ ԲՇԽ-ից անկախ խմբերի կողմից, ԱՃԹՆ-ի մամուլի/հաղորդակցության պատասխանատուի դերը կլինի դրանց հնարավորինս ընդգրկուն դիտարկումը և ներառումը Հայաստանում ԱՃԹՆ-ի հետ առնչվող հաղորդակցության միջոցառումների գնահատման գործընթացում: Այս կետի վերաբերյալ լրացուցիչ քննարկում ներկայացվում է «Մոնիտորինգ և գնահատում» գլխում:

3.3. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ազգային մակարդակում պետք է պարբերաբար կիրառվեն հաղորդակցության ուղերձներ՝ միտված հետաքրքրություն առաջացնելուն, իրազեկվածության բարձրացմանը և թիրախային խմբերի ներգրավմանը: Բացի այդ, մի շարք թիրախային խմբերի, մասնավորապես հանքարդյունաբերական ընկերությունների, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, հանքարդյունաբերական համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և այլոց համար, պետք է լինեն հաղորդակցության միջոցներ, որոնք հստակորեն հաղորդում են տեղեկատվություն առ այն, թե ինչպես պահպանել ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները և ապահովել ամբողջական և ճշգրիտ հաշվետվություն:

Ազգային հաղորդակցության ցանկացած գործողության միջոցով հաղորդվող ուղերձները կախված են լինելու շատ գործոններից, ինչպիսիք են օրինակ այն փուլը, որտեղ այդ պահին գտնվում է ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացը (զեկույցի հրապարակում, վավերացում և այլն), կոնկրետ թիրախային խումբը (ԱՃԹՆ-ի հաշվետու կազմակերպություններ, քաղաքացիական հասարակություն և այլն) և այլն: Այս գլխում առաջարկվում է ազգային մակարդակի ուղերձների մշակման ընդհանուր մեթոդաբանություն:

Վերը շարադրված կետ 1-ը ենթադրում է, որ ՀՌԳԾ-ի գլխավոր նպատակն է՝ նպաստել արդյունահանող ոլորտի բաց և հաշվետու կառավարմանը և բարեփոխումների խթանման նպատակով ապահովել հանրային բանավեճեր ու ներգրավվածություն: Սրան հասնելու համար Հայաստանի ԱՃԹՆ-ի համար կարևոր գործոն է լինելու վստահելի համարվելը և դիտարկվելը որպես իրական և լուրջ ջանք, որն ուղղված է բարեփոխելու մետաղական հանքարդյունաբերության ոլորտը:

Ուղերձների մշակման ընդհանուր ուղենիշներ

Հաղորդակցություն պետք է իրականացվի բազմաշահառու գործընթացի մասին՝ քննարկելով առկա մարտահրավերներն ու հաջողությունները: Բացի այդ, պետք է շարունակաբար հիմնավորվի, թե ինչու է սա ոլորտի բարեփոխման ճիշտ ճանապարհը: Հետևյալ կետերը՝ որպես ուղենիշներ կարող են կիրառվել ուղերձների և տեղեկատվության մշակման հարցում.

- Խուսափել ոլորտի կամ գրանցված առաջընթացի չափից դուրս լավատեսական կամ չափից դուրս վատատեսական նկարագրությունից: Լինել ազնիվ սպասվող մարտահրավերների մասին նշելիս, սակայն նաև հստակ ձևակերպել գրանցված հաջողություններն ու առաջընթացը:

- Հստակ կերպով նշել այն մասին, թե ինչպես ավելի լայն թափանցիկությունը կհանգեցնի բարձր հաշվետվողականության և կդառնա հզոր զենք կոռուպցիայի դեմ:

- Լինել հստակ և հասկանալի ոչ միայն մասնագետների, այլ նաև հանրության համար: Ուղերձները պետք է շարադրվեն հեշտ ընկալելի եզրույթներով:

- Հստակ կերպով նշել, թե ինչպես կարող է բարդ տնտեսական ոլորտի կատարելագործված կառավարումը հանգեցնել ավելի մեծ սոցիալական և բնապահպանական պատասխանատվության:

- Ոլորտից Հայաստանի ստացած օգուտները ներկայացնելիս լինել հավասարակշռված: Օրինակ, ԱՃԹՆ-ն՝ հիմնականում որպես դեպի Հայաստան հանքարդյունաբերական ներդրումներ

գրավելու գործիք շեշտադրելը կարող է հակառակ արդյունքն ունենալ: Թեև սա կարող է լինել ԱՃԹՆ-ի արդյունքներից մեկը, վերջինիս գլխավոր նպատակը ոլորտի կառավարման բարելավումն է:

Առանցքային թեմաների ուղերձները

Կան մի քանի առանցքային թեմաներ կամ նպատակներ, որոնց շուրջ կարող են մշակվել կոնկրետ ուղերձներ: Օրինակ թեմաներից մեկը կարող է լինել այսպիսին՝ «Հայաստանի կառավարությունը հանձնառու է երկրի արդյունահանող ոլորտում ապահովել թափանցիկության և հաշվետվողականության բարձր մակարդակ»: 2018թ.-ի մարտ ամսին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք կբարելավեն տեղեկատվության ձեռք բերման մատչելիություն՝ կապված պետության ստացած հանքարդյունաբերական եկամուտների, ընկերությունների կողմից արվող վճարումների և պայմանագրերի հետ[3]: Բայցևայնպես, պարզունակ մոտեցում կլինի համարել, որ օրենսդրական փոփոխությունները ինքնին կարող են հանգեցնել ոլորտի լիարժեք թափանցիկությանն ու հաշվետվողականությանը: Հաշվի առնելով նախորդ բաժնում նշված դիտարկումները՝ միգուցե տեղին կլինի սա ընդգծելը, սակայն կարևոր է, որպեսզի նշվի իրական առաջընթացի մասին: Շատ հազվադեպ է պատահում, որ երկրները ընդամենը մեկ կամ երկու տարվա ընթացքում արձանագրեն թափանցիկության և հաշվետվողականության «հրաշք»: Սովորաբար սա դանդաղ և բարդ գործընթաց է: Ուստի լավագույն դեպքում թերահավատորեն կընդունվի այն պնդումը, որը ԱՃԹՆ-ի առաջին տարվա զեկույցից հետո Հայաստանն արդեն ունի բաց և թափանցիկ հանքարդյունաբերության ոլորտ:

Սակայն փաստ է, որ Հայաստանը ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման գործին շատ լուրջ է մոտենում: ՀԱՀ պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի (ՊՀԿ) բրիտանացի երկու խորհրդատուներն էլ, պարոնայք Քրիս Նըրսը և Ջերեմի Ուիթը, այն կարծիքին են, որ Հայաստանի մոտեցումը ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրությանը եղել է ավելի հանգամանալից, քան նրանք տեսել են որևէ այլ երկրում: Սա մի փաստ է, որը պետք է լայնորեն տարածվի և ամրապնդի Հայաստանի հանձնառության մասին հիմնական ուղերձը:

Մյուս կողմից, քաղաքացիական հասարակությունը կարող է գտնել, թե առաջընթացը սպասվածից դանդաղ է: Նման դեպքերում, ՔՀԿ-ները հանրային հարթակներում հաճախ արտահայտում են իրենց դժգոհությունը: Սակայն այնպես, ինչպես չափից շատ լավատեսական ուղերձները կարող են ընդունվել կասկածամտությամբ, նույն կերպ կարող են ընկալվել չափից ավելի հոռետեսական ուղերձները: Օրինակ, ՀՀ նոր հարկային օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2018թ.-ին, պարունակում է դրույթներ, որոնք ակնկալվում է, որ կկրճատեն տրանսֆերային գնագոյացման հնարավորությունները, ինչը պետության համար լուրջ եկամուտների աղբյուրների կորուստ է: Սա դրական զարգացում է, որը կապվում է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Հարկման բազայի քայքայում և շահույթի տեղափոխում» ծրագրին Հայաստանի մասնակցության հետ: Խնդիրն այս պահի դրությամբ այն է, որ Հայաստանը պետք է ընդունի համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, որպեսզի կենսագործվեն հարկային օրենսգրքի՝ տրանսֆերային գնագոյացմանը վերաբերող համապատասխան դրույթները: Խնդիրը կոնկրետ մատնացույց չանելու դեպքում ՔՀԿ-ները կարող են ենթարկվել քննադատության այն առումով, որ իրենց պնդումներն անհիմն են, պարզունակ կամ նույնիսկ անարդար: Բավական չէ պարզապես նշելը, որ տրանսֆերային գնագոյացումը խնդիր է Հայաստանում: Այն խնդիր է ամբողջ աշխարհում: Ուշադրություն պետք է դարձվի այն բանին, թե կոնկրետ ինչ է իրականացվում և արդյոք այս գործողությունները բավարար են:

Հատուկ ուղերձները կարող են պատրաստվել մի շարք առանցքային թեմաների կամ նպատակների վերաբերյալ, որոնք հնարավոր կլինի գնահատել բոլորի կողմից, քանզի առկա իրավիճակը (պատկեր 2) տեսանելի է նրանց համար: Այս թեմաները հիմնված են ԱՃԹՆ-ի ստանդարտի սկզբունքների և

[3] Տես հաստատված և ընդունված օրենսդրական փոփոխությունները: http://www.president.am/hy/signed-laws/item/2018/03/28/President-Serzh-Sargsyan-signed-into-law-28-03/:

նպատակների, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի վրա: Լրացուցիչ թեմաներ են մշակվել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող *«Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում»* ծրագրի համար: Այս լրացուցիչ առանցքային թեմաները, որոնցից մի քանիսը պատկեր 2-ում նշված թեմաների տարբերակներ են, ներկայացված են հավելված 20-ում և կարող են դիտարկվել ուղերձները պատրաստող անձանց կողմից:

Պատկեր 2. Առանցքային թեմաները՝ որպես ուղերձների մշակման գործիք

ԱՃԹՆ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐ ԿԱՄ ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Հայաստանի կառավարությունը հանձնառու է արդյունահանող ոլորտում թափանցիկության բարձր աստիճան ապահովելուն, ինչն ակնկալվում է, որ կհանգեցնի հաշվետվողականության բարձր մակարդակի և գործիք կհանդիսանա կոռուպցիայի դեմ պայքարում:
- Հայաստանի կառավարությունը հանձնառու է բնական պաշարները կայուն տնտեսական զարգացման համար կարևոր շարժիչ ուժ դարձնելուն, որը կնպաստի կայուն զարգացմանը և աղքատության նվազեցմանը: Ոչ պատշաճ կառավարման դեպքում, ոլորտը կարող է առաջացնել բացասական տնտեսական և սոցիալական հետևանքներ:
- Բնական պաշարների օգտագործումը ի բարօրություն երկրի բնակչության կառավարությունների ինքնիշխան իրավունքն է, որը պետք է կիրառվի իրենց ազգային զարգացման շահերից ելնելով:
- ԱՃԹՆ-Հայաստանը նպատակ ունի խրախուսել արդյունավետ երկխոսություն կառավարության, քաղաքացիական հասարակության և հանքարդյունաբերական ընկերությունների միջև՝ ձգտելով ԱՃԹՆ նպատակների իրագործմանը
- Հայաստանում ԱՃԹՆ ստանդարտի իրականացումը կհանգեցնի քաղաքական և տնտեսական ավելի մեծ կայունության: Բացի այդ, ստանդարտի իրականացումը ներդրումներ կգրավի դեպի թե կառավարությունը, թե արդյունահանող ոլորտը:
- ԱՃԹՆ-Հայաստանը արդյունավետ գործիք է հանքարդյունաբերական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համար:
- ԱՃԹՆ-Հայաստանը մի գործիք է, որի օգնությամբ հնարավոր է դրական քայլեր ձեռնարկել դեպի երկրում պատասխանատու արդյունաբերության մշակույթի ձևավորում, այդ թվում նաև պատասխանատվություն շրջակա միջավայրի նկատմամբ:

Կառավարություն

- Կառավարությունը կարող է այս հնարավորությունն օգտագործել և նշել այն կոնկրետ քայլերը, որոնք արվում են այս նպատակներին հասնելու համար

Քաղաքացիական հասարակություն

- Քաղաքացիական հասարակությունը կարող է մատնացույց անել կառավարության, գործարար ոլորտի կամ իր սեփական թերացումները կամ ձախողումները, որոնք խոչընդոտում են այս նպատակների իրագործմանը:
- Քաղաքացիական հասարակությունը կարող է առաջարկել լուծումներ, որոնք դեռևս չեն իրականացվում կամ քննարկվում:

Արդյունահանող ոլորտ

- Արդյունահանող ոլորտը կարող է մատնանշել ուղիները, որոնցով այն նպաստում է այս նպատակների իրագործմանը:
- Արդյունահանող ոլորտը կարող է առաջարկել լուծումներ, որոնք դեռևս չեն իրականացվում կամ քննարկվում:

Ակադեմիական շրջանակ

- Ակադեմիական շրջանակի ներկայացուցիչները կարող են պարբերաբար գնահատել նման պնդումները:
- Ակադեմիական շրջանակը կարող է առաջարկել միջազգային համեմատություններ և լավագույն փորձի օրինակներ:

Մասնավոր թեմաներ կամ «զամբյուղներ»

ԱՃԹՆ-ի ստանդարտն ունի համեմատաբար լավ ձևակերպված թեմաներ, որոնց շուրջ կարելի է մշակել համապատասխան ուղերձները: Այդ թեմաներից են որոշումների կայացման բազմաշահառու մեխանիզմը, պայմանագրերը և ընդերքօգտագործման թույլտվությունները հանրային դարձնելու հարցը, եկամուտների և վճարումների հետ կապված տվյալները, իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների և բարեփոխումների նկարագրությունը և այլն: Հայաստանում ԲՇԽ-ն որպես առաջնահերթություն նաև ընդգրկել է պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի խթանումը: Այս թեմաներից ցանկացածի շուրջ հնարավոր է մշակել համապատասխան ուղերձ: Պատկեր 3-ում ցուցադրվում է այն թեմաների դասակարգումների կամ «զամբյուղների» շրջանակը, որոնց շուրջ կարող են ձևավորվել ՀՀ ԱՃԹՆ-ի այս առանձին ուղերձները:

Պատկեր 3. Թեմաների դասակարգումներ, որոնց շուրջ կարող են ձևավորվել ՀՀ ԱՃԹՆ-ի ուղերձները.

Օրինակ՝ Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացի սկզբնական փուլերում զգալի ուշադրություն պետք է դարձվի առաջին «զամբյուղին», մասնավորապես ԱՃԹՆ-ի գործընթացին ու վերջինիս նշանակությանը Հայաստանի համար: Համապատասխան առանցքային ուղերձները կարող են ներառել հետևյալը.

- ԱՃԹՆ-ն կոռուպցիայի, սոցիալական և շրջակա միջավայրի նկատմամբ անպատասխանատվության դեմ պայքարելու գործիք է և առնչվում է Հայաստանի երկարաժամկետ տնտեսական օգուտներին:

- ՀՀ ԱՃԹՆ-ն հաջողությամբ որդեգրել է որոշումների կայացման բազմաշահառու ընթացակարգ, թեև դեռևս կան լուծման ենթակա մարտահրավերներ:

Առաջարկվող այս ութ «զամբյուղները» կարող են լրագրողներին, և այլ շահառուներին, օրինակ՝ դասախոսներին, տնտեսագետներին, գործարարներին, օժանդակել իրենց աշխատանքում: Հետաքննող լրագրողը, օրինակ, կարող է կենտրոնանալ «Ընկերությունների վճարումներ և հանրային եկամուտներ. . . » կետի վրա՝ նպատակ ունենալով գտնել բացատրության ենթակա անհամապատասխանություններ կամ թվեր: Մեկ ուրիշը կարող է կենտրոնանալ «Արդյունահանման և հետախուզման» տվյալների վրա և տալ դրանց ճշգրտությանը կամ թերացումներին վերաբերող հարցեր: Քաղաքացիական հասարակությունը կարող է օգտագործել «Ընդերքօգտագործման պայմանագրեր» և «Սոցիալական ծախսեր» թեմաները՝ ապահովելու համար պայմանագրերի իրականացումը և բացահայտելու պոտենցիալ կոռուպցիոն ռիսկերը: Մյուսները կարող են կենտրոնանալ «Պատասխանատու հանքարդյունաբերության» թեմայի վրա և փորձել պարզել, թե ԲՇԽ-ի կողմից ընդունված առաջարկությունները և վերլուծությունը ինչքանով են համարժեք կամ իրատեսական:

Շահագրգիռ կողմերի շահերը և հաղորդակցության ուղերձները

Ուղերձները պետք է նաև կազմվեն՝ հաշվի առնելով տարբեր շահագրգիռ կողմերի և թիրախային խմբերի շահերը: Շահագրգիռ կողմերի շահերին չանդրադարձող ուղերձը հավանական է, որ չի նկատվի: Այս խմբերից յուրաքանչյուրը Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացում կունենան իրենց շահերը: Թեև այդ շահերից մի քանիսը կարող են ընդհանուր լինել բոլոր շահագրգիռ կողմերի/թիրախային խմբերի համար, մյուսները կլինեն խմբի համար յուրահատուկ: Աղյուսակ 3-ում ամփոփ ներկայացված են յուրաքանչյուր խմբի շահերը: Ակնհայտ է, որ նշված յուրաքանչյուր շահ չի կարող պատկանել առանձին կազմակերպությանը կամ ընկերությանը: Օրինակ, մոնոպոլ կամ մոնոպսոն դիրքից օգտվող ընկերությունները դժվար թե «խաղի հավասար կանոններ» սահմանելու ցանկություն հայտնեն: Բացի այդ, ոչ բոլոր ՔՀԿ-ը ոգեշնչված կարող են լինել "համընդհանուր բարօրության" գաղափարով, ինչպիսին, օրինակ, ''բնական ռեսուրսների պատասխանատու օգտագործում''-ն է: Կարող են լինել կազմակերպություններ, որոնք հանդես են գալիս որպես ՔՀԿ-ներ, բայց առաջ են մղում որոշակի շահեր, ինչպիսիք են, օրինակ, որևէ մասնավոր ընկերության կամ որոշակի քաղաքական կուսակցության շահերը:

Աղյուսակ 3. Շահագրգիռ կողմի/թիրախային խմբի առանցքային շահերը Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի մեջ

	Գործարար ոլորտ	Կառավարություն	Քաղաքացիական հասարակություն և ազդակիր համայնքներ	Մեդիա	Ակադեմիական շրջանակ	Միջազգային կազմակերպություններ
Օրինական շահեր	1. Կապիտալ հոսքերի աճ 2. Հավասար խաղի կանոններ 3. Հստակ օրենքներ և կանոնակարգեր 4. Շահույթի աճ 5. Դրական կերպարի պահպանում հաճախորդների, բաժնետերերի և հասարակության մոտ	1. Ներդրումների աճ 2. ՀՆԱ-ի և արտադրողականության աճ 3. Զբաղվածության աճ 4. Պետական ոլորտի եկամուտների աճ 5. Առողջ ազգաբնակչություն 6. Առողջ շրջակա միջավայր 7. Թափանցիկ և հաշվետու պետություն, բիզնես և քաղաքացիական հասարակություն 8. Կայուն զարգացում	1. Բնական պաշարների պատասխանատու օգտագործում 2. Թափանցիկ և հաշվետվողական գործարար ոլորտ, կառավարություն, մեդիա, միջազգային կազմակերպություններ 3. Առողջ բնակչություն 4. Առողջ շրջակա միջավայր 5. Արագ արձագանքող կառավարություն և տնտեսվարող սուբյեկտ 6. Պատշաճ վարձատրությամբ աշխատատեղեր և աշխատանքային պայմաններ	1. Թափանցիկ և հաշվետվողական գործարար ոլորտ, կառավարություն, քաղաքացիական հասարակություն, միջազգային կազմակերպություններ 2. Ազատ մեդիա 3. Ընթերցելիության և լսարանի աճ	1. Հետազոտություններ և ուսումնական ծրագրեր կայուն զարգացման շուրջ, այդ թվում՝ պատասխանատու արդյունահանում/հանքարդյունաբերություն, գործարար ոլորտի աճ, զբաղվածություն և այլն 2. Մտքի և ակադեմիական ձգտումների ազատություն	1. Դոնորային աջակցության հնարավորությունների բացահայտում 2. Ապահովել ներդրումների համապատասխանությունն իրենց կազմակերպությունների առաքելությունների 3. Բարելավված բիզնես միջավայր ինտեգրվածների համար

Ստորև բերված աղյուսակ 4-ում պատկերված են տարբեր շահագրգիռ կողմերի որոշ վիճելի շահեր, թեև նման խնդրահարույց շահերը միշտ չէ, որ հնարավոր է տարածել ողջ թիրախային խմբի վրա և կարելի է վերագրել շահագրգիռ կողմերի խմբերի միայն մեկ կամ մի քանի անդամների: Այնուամենայնիվ, կարևոր է դրանք ճանաչելը, <u>քանզի դրանք հիշելը կարևոր է ԱՃԹՆ-ի շուրջ հաղորդակցության առաջին փուլերի գլխավոր նպատակի՝ վստահության ամրապնդման գործընթացում:</u>

Աղյուսակ 4. Շահագրգիռ կողմերի շահեր, որոնք կարող են խաթարել վստահությունը

	Գործարար ոլորտ	Կառավարություն	Քաղաքացիական հասարակություն և ազդակիր համայնքներ	Մեդիա	Ակադեմիական շրջանակ	Միջազգային կազմակերպություններ
Վիճելի շահեր	Մրցակցության վերացում Ծախսերի կրճատում հանրային առողջության և շրջակա միջավայրի հաշվին Վճարների հայթայթում (օրինակ՝ արտադրողականության և գործարար հարաբերությունների բարելավման փոխարեն սուբսիդիաների, արտոնությունների և այլնի փնտրտուք)	Կոռուպցիոն հնարավորությունների ստեղծում Անհատի կամ ընկերության շահերի պաշտպանություն հանրային շահի քողարկման ներքո	Անհատի կամ ընկերության, կամ քաղաքական կուսակցության շահերի պաշտպանություն քաղաքացիական հասարակության քողարկման ներքո	Անհատի կամ ընկերության շահերի պաշտպանություն անաչառ լրատվամիջոցի քողի ներքո	Շահերի կողմնակալ պաշտպանություն	Մարդկանց, շրջակա միջավայրի և երկրի տնտեսական հեռանկարների համար վնասակար շահերի պաշտպանություն

Հաղորդակցության միջոցառումներից յուրաքանչյուրը կունենա իր թիրախը և ուղերձը (ուղերձներ), որոնք կմանրամասվեն յուրաքանչյուր միջոցառման մշակմանը զուգահեռ: Վերը շարադրված ընդհանուր ուղեցույցները, շահագրգիռ կողմերի շահերը և թեմաների «զամբյուղները» պետք է օգտակար լինեն յուրաքանչյուր միջոցառման համար արդյունավետ ուղերձների մշակման հարցում: Ընդհանրապես բոլոր այս միջոցառումները պետք է նպատակ ունենան նպաստելու արդյունահանող ոլորտի բաց և հաշվետու կառավարմանը և ապահովել արդյունավետ հանրային բանավեճերին և ներգրավվածությանը միտված բարեփոխումների իրականացում:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՃԹՆ-ի միջազգային հաղորդակցության միջոցառումների առաջնային նպատակը երկրից դուրս գտնվող շահագրգիռ կողմերին երկրում իրականացվող ԱՃԹՆ-ի գործընթացի և սահմանված բարեփոխումների մասին իրազեկելն է: Սա, մասնավորապես, կարող է նպաստել հետևյալին.

- օժանդակել Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացմանը, որն իրականացվելու է միջազգային փորձագետների կողմից,
- գրավել ներդրողների, որոնք կաշխատեն ավելի լայն թափանցիկության և հաշվետվողականության պայմաններում,
- միջազգային դոնորներին և կառավարություններին ազդակներ հաղորդել տնտեսության զարգացումների մասին,
- ակադեմիական շրջանակներին և քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռել մասնակցելու միջազգային քննարկումների և նախաձեռնությունների, որոնք ա) իրենց հերթին կօգնեն զարգացնել երկրի ներքին կարողությունները և բ) կարևոր միջազգային ուշադրություն կհրավիրեն Հայաստանի բարեփոխումների վրա,
- հայկական սփյուռքին իրազեկ դարձնել իրականացվող բարեփոխումներին և ապահովել նրանց ներգրավվածությունը հայաստանյան գործընթացներում:

ՀՀ ԱՃԹՆ-ի միջազգային հաղորդակցությունը արդյունավետ դարձնելու նպատակով էական է, որ նյութեր պատրաստվեն բացի հայերենից նաև այլ լեզուներով: Չնայած այն բանին, որ օգտակար կլինի բովանդակություն ունենալ մի քանի լեզուներով, ռեսուրսների սղության պատճառով անհրաժեշտ է կենտրոնանալ այն լեզվի վրա, որը հասանելի ԱՃԹՆ-ի թիրախային լսարանի ամենաընդգրկուն խմբին: Անգլալեզու լսարանը ամենամեծն է: Հետևաբար, շատ կարևոր կլինի աշխատել գերազանց անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթերի վրա, ուստիև ԱՃԹՆ ԲՇԽ-ն և ՀՀ կառավարությունը պետք է ռեսուրսներ հատկացնեն այս նպատակի համար: ԲՇԽ-ն և ՀՀ կառավարությունը ռեսուրսների առկայության պարագայում կարող են նաև որոշել նյութեր պատրաստել ռուսերեն լեզվով:

4.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Միջազգային շահագրգիռ կողմերն ու թիրախային խմբերը ներառում են.

Գործարար ոլորտ

- մետաղական հանքարդյունաբերական ընկերությունները և ներդրողները
- ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ընկերությունները
- հանքարդյունաբերական ոլորտի հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող մասնագիտական խմբերը

Միջազգային գործակալություններ, դոնորներ և կառավարություններ

- ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը, այլ երկրների ազգային քարտուղարություններ
- գործընկեր կառավարությունները (ՄԹ, ԱՄՆ, Գերմանիա, Շվեդիա, ԵՄ այլ երկրներ և այլն)
- միջազգային հիմնադրամները («Ֆորդ», «ՄաքԱրթուր», «Ռոքֆելլեր», «Սորոս» և այլն)
- միջազգային կազմակերպությունները (ՄԱԿ, ՎԶԵԲ, ԱԶԲ և այլն)

Քաղաքացիական հասարակություն

- միջազգային ՀԿ-ները, որոնք ուշադրության կենտրոնում են հակակոռուպցիոն, լավ կառավարման, համայնքային ֆինանսավորման, տնտեսական զարգացման, սոցիալապես պատասխանատու գործարար ոլորտի, շրջակա միջավայրի պահպանության և այլ ոլորտների հարցեր («Pubslish What You Pay», Բնական ռեսուրսների կառավարման ինստիտուտ, «Ադամ Սմիթ» ինստիտուտ)

Միջազգային մամուլ

- մասնագիտացված մամուլը (գործարար և ֆինանսական հարցերով թղթակիցներ կամ հետաքննող լրագրողներ)
- մասնագիտական կամ առևտրային ամսագրերը
- զանգվածային լրատվամիջոցները (քաղաքական և տնտեսական բարեփոխումների լուսաբանման նպատակով)

Ակադեմիական շրջանակ

- արտասահմանյան ԲՈՒՀ-երի ուսանողները, դասախոսները, հետազոտողները և գործարար, ֆինանսական, հանքարդյունաբերական, շրջակա միջավայրին առնչվող, սոցիալական զարգացման, առևտրային և պետական ոլորտի կառավարման ու այլ հարցերում մասնագիտացած ակադեմիական շրջանակները

Հայկական սփյուռք

- ԱՄՆ և Կանադա
- ՄԹ, Գերմանիա, Ֆրանսիա և եվրոպական այլ երկրներ
- Մերձավոր Արևելք
- Ռուսաստան
- Կենտրոնական և Հարավային Ամերիկա
- Ավստրալիա
- Ասիա

Այս թիրախային խմբերից յուրաքանչյուրը պետք է ունենա հաղորդակցության համապատասխան ձևերը և ուղերձները: Հաջորդ բաժիններում դրանք ներկայացվում են առավել մանրամասն: Միջազգային հաղորդակցության ռազմավարության եզրափակիչ բաժնում առաջարկվում են թիրախային խմբեր, հաղորդակցության միջոցներ և հիմնական ուղերձներ բոլոր այն միջոցառումների համար, որոնք ուղղված են ազգային հաղորդակցության նպատակների իրականացմանը:

4.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես ազգային հաղորդակցության պարագայում, միջազգային հաղորդակցությունը նույնպես առաջարկում է հաղորդակցության երկու ընդհանուր միջոց՝ միակողմանի և դիալեկտիկական: Աղյուսակ 5-ը ներկայացնում է միջազգային հաղորդակցության այն միջոցները, որոնք Հայաստանը կարող է կիրառել:

Աղյուսակ 5. Կիրառման ենթակա միջազգային հաղորդակցության միջոցների երկու տեսակ

Միակողմանի	Դիալեկտիկական
• Զեկույցներ և հրապարակումներ • Կոմյունիկեներ (դիվանագիտական, համապատասխանություն պայմանագրերին/համաձայնագրերին և այլն) • Առցանց պորտալ կամ կայքէջ • Փաստագրական թերթիկներ կամ տեսանյութեր • Պարբերական տեղեկագրեր (տպագիր կամ էլեկտրոնային) • Ինֆոգրաֆիկա (էլեկտրոնային) • Մամլո հաղորդագրություններ • Լուսաբանում մեդիայում (տպագիր կամ էլեկտրոնային) • Սոցիալական մեդիա առանց մեկնաբանությունների հնարավորության	• Հանդիպումներ, համաժողովներ և գիտաժողովներ • Մասնակցություն միջազգային միջոցառումներին որպես թրեյներներ • Սոցիալական մեդիա • Մասնագիտական և մասնագիտացված ամսագրեր մեկնաբանությունների և գնահատականի հնարավորությամբ • Բլոգեր և տեսաբլոգեր

- Երրորդ կողմի կայքեր
- Մասնագիտական և մասնագիտացված ամսագրեր առանց մեկնաբանության հնարավորության

Սույն բաժնի մնացած հատվածում թվարկվում են միջոցները, որոնք հնարավորություն կտան Հայաստանին ապահովել նպատակային միջազգային հաղորդակցություն: Թեպետ սրանք բոլորը հաղորդակցության կարևոր միջոցներ են, հարկ է հիշել, որ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը նույնպես հաղորդակցության առանցքային միջոց է (https://eiti.org/armenia): Այդպիսին կլինի նաև ՀՀ ԱՃԹՆ-ի կայքը, որի մեկնարկը կտրվի մոտ ապագայում:

Հարթակներ և անդամակցություն առաջարկող կազմակերպություններ

ԲՇԽ-ի անդամներին և այլ շահագրգիռ կողմերին խորհուրդ է տրվում հետևել, հաղորդակից լինել կամ անդամակցել հետևյալ կազմակերպություններին և հարթակներին: Հաղորդակցության՝ Աղյուսակ 5-ում նշված որոշ միջոցներ հասանելի կդառնան տարբեր կազմակերպություններին անդամակցելու միջոցով: Օրինակ, ստորև բերված կազմակերպությունների անդամները կարող են բովանդակային նյութեր տրամադրել այդ կազմակերպությունների տեղեկագրերի և մամլո միջոցառումների համար.

- «GOXI» - http://goxi.org/
- Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդ (ՀՄՄԽ)-- https://www.icmm.com/en-gb
- Հանքարդյունաբերության, մետալուրգիայի և հետախուզման ընկերակցություն (ՀՄՀԸ) -- https://www.smenet.org/

Հավելված 10-ը առաջարկում է լրացուցիչ մանրամասներ վերը նշված կազմակերպությունների վերաբերյալ:

Հանդիպումներ, համաժողովներ, գիտաժողովներ

Կան բազմաթիվ միջազգային հանդիպումներ և համաժողովներ, որտեղ Հայաստանից մեկնած մասնակիցները կարող են պրեզենտացիաներ ներկայացնել, ներգրավվել քննարկումներում և միջազգային գործընկերություններ ձևավորել: ԱՃԹՆ-ի նպատակներին անմիջականորեն առնչվող հարթակը ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերն ու կոնֆերանսներն են, որոնք տեղի են ունենում տարեկան երկուսից չորս անգամ (https://eiti.org/about/board-meetings): 2018թ.-ին նախատեսված է երկու հանդիպում, դեռևս մնացել է ստորև ներկայացվածը՝

- ԱՃԹՆ միջազգային խորհրդի 40-րդ նիստ, հունիսի 28-29, 2018թ, Բեռլին, Գերմանիա

Բացի այդ, կան հանքարդյունաբերական հարցերով տարեկան համաժողովներ և գիտաժողովներ, որտեղ կարող են ներկայացվել և քննարկվել ԱՃԹՆ-ին առնչվող հարցեր: Խորհուրդ է տրվում հնարավորության դեպքում մասնակցել այս միջոցառումներին և անպայման ներկայացնել Հայաստանում ԱՃՆ զարգացումները: Ներքևում նշված ցանկը ներկայացնում է 2018թ-ի համար նախատեսված միջոցառումների ժամանակացույցը, որոնցից շատերը տարին մեկ անգամ իրականացվող միջոցառումներ են, որոնք տեղի են ունենալու նաև հաջորդ տարիներին: Ստորև ներկայացվում են այն միջոցառումները, որոնց կարող են մասնակցել և նյութեր ներկայացնել նաև մասնակիցներ Հայաստանից.

- Որոնողների և շահագործողների կանադական ասոցիացիա (PDAC) 2018թ.-ի համաժողով, մարտի 4-7, 2018թ., Տորոնտո, Կանադա (http://www.pdac.ca/convention): (Տարեկան, հիմնականում տեղի է ունենում մարտ ամսին):

- Ահեանի միջազգային հանքարդյունաբերական գիտաժողով, մայիսի 23-24, 2018թ., Ահեան, Գերմանիա (http://www.aims.rwth-aachen.de/call-for-paper): (Տարեկան, հիմնականում տեղի է ունենում մայիս ամսին):
- Հանքարդյունաբերական ներդրումներ Եվրոպա (2րդ տարեկան), հունիսի 6-7 2018թ., Ֆրանկֆուրտ, Գերմանիա (https://www.mininginvestmenteurope.com/): (Տարեկան, առաջին տարին տեղին է ունեցել դեկտեմբերին, երկրորդ տարին՝ հունիսին):
- Հանքարդյունաբերության համաշխարհային կոնգրես, հունիսի 19-22, 2018թ, Աստանա, Ղազախստան (https://www.wmc2018.org/en/congress/about-congress): (Տեղի է ունենում 2-3 տարին մեկ, տարբեր ամիսների):
- Բաց տվյալների միջազգային 5-րդ համաժողով, սեպտեմբերի 21-22, 2018թ, Բուենոս Այրես, Արգենտինա (http://opendatacon.org, https://twitter.com/opendatacon): (Տեղի է ունենում տարին երկու անգամ, տարբեր ամիսների):
- 18-րդ միջազգային հակակոռուպցիոն համաժողով, հոկտեմբերի 22-24, 2018թ., Կոպենհագեն, Դանիա (Թրանսպարենսի Ինթերնեշնլ՝ https://iaccseries.org/about/):(Հիմնականում տեղի է ունենում տարին երկու անգամ աշնանը, թեպետ եղել է մեկ բացառություն):

Հանքարդյունաբերության հետ առնչվող համաժողովների և սեմինարների ամբողջական ցանկը հասանելի է հետևյալ հղումով՝http://www.infomine.com/events/:

Քաղաքացիական հասարակության համապատասխան ուղղվածություն ունեցող կազմակերպություններ

Ստորև ներկայացված են համապատասխան ուղղվածություն ունեցող մի շարք ՔՀԿ-ներ: Այս միջազգային կազմակերպությունների և ցանցերի հետ շփումները կհզորացնեն Հայաստանի քաղաքացիական հասարակությանը և նրանց հնարավորություն կընձեռեն միջազգային հաղորդակցություն ծավալել ՀՀ ԱՃԹՆ-ի շուրջ:

- «Publish What You Pay» (PWYP) -- http://www.publishwhatyoupay.org/: («Էկոհրավունք» ՀԿ-ն հանդիսանում է այս գլոբալ ցանցի անդամ, նրա հիմնադիր Արթուր Գրիգորյանը Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամ է):
- «IndustriALL» համաշխարհային միություն -- http://www.industriall-union.org/sectors-list?sectors=Base+metals
- Բնական ռեսուրսների կառավարման ինստիտուտ (ԲՌԿԻ) -- https://resourcegovernance.org/
- «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) -- https://www.transparency.org/: ԹԻ գործում է Հայաստանում որպես «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն:
- Բաց հասարակության ինստիտուտ (ԲՀԻ) -- https://www.opensocietyfoundations.org/ «Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստան»-ը ԲՀԻ-ի հայաստանյան ներկայացչությունն է;
- «Գլոբալ Ուիթնես» -- https://www.globalwitness.org/en/
- Ադամ Սմիթի ինստիտուտ-- https://www.adamsmith.org/
- «Օքսֆամ» -- https://www.oxfam.org/ այլևս Հայաստանում չի գործում: Մինչ իր գործունեության դադարեցումը, այն ստեղծել է «Օքսիջեն» կազմակերպությունը, որը զբաղվում է «Օքսֆամ» –ի նպատակներով:
- «Կարիտաս» -- https://www.secours-catholique.org/ ակտիվ է: Այն հիմնականում զբաղվում է սոցիալական պաշտպանության խնդիրներով, հանրային առողջությամբ և աղետների ռիսկերի կառավարմամբ:

Հավելված 12-ը առաջարկում է լրացուցիչ մանրամասներ վերը նշված կազմակերպությունների վերաբերյալ:

Միջազգային մասնագիտացված հրատարակություններ

Մասնագիտական հրապարակումները նպատակաուղղված են փորձագետների, մասնագետների, ոլորտի աշխատողների և քաղաքականություն մշակողների թիրախային խմբերի հետ հաղորդակցությանը: Ստորև ներկայացված են հրատարակությունների հղումներ, որոնք կարող են օգտագործել ՀՀ ԱՃԹՆ-ն, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, արդյունահանող ոլորտը, կառավարությունը, ակադեմիական շրջանակներն ու այլոք.

- Հանքարդյունաբերության ամսագիր -- http://www.mining-journal.com («Հանքարդյունաբերական ներդրումների և գործարար ոլորտի աշխարհի առաջատար ամսագիր, որը լուսաբանում է ոլորտի բոլոր ասպեկտները»)
- Mining.com -- http://www.mining.com/ («Առաջատար թվային հրատարակություն, որն անդրադառնում է համաշխարհային հանքարդյունաբերության հարցերին»)
- «InfoMine» (Ամսագրերի և թերթերի տվյալների բազա) -- http://www.infomine.com/library/links/508/publications/magazines.and.newspapers.aspx
- «InfoMine» (Լրագրերի տվյալների բազա) -- http://www.infomine.com/library/links/505/publications/journals.aspx

Հանքարդյունաբերական փորձառություն ունեցող կառավարման խորհրդատվական ընկերություններ

Կառավարման խորհրդատվական ընկերությունները կարող են տեղեկատվության կարևոր օղակ հանդիսանալ միջազգային ներդրողների համար, որոնք ցանկանում են Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտի, կանոնակարգումների ու պետական բարեփոխումների մասին իմանալ ավելին: Նման խորհրդատվական կազմակերպությունների թիվը մեծ է: Ստորև ներկայացված են համաշխարհային մասշտաբով գործող նման չորս մեծ ընկերությունների տվյալներ.

- «McKinsey» -- https://www.mckinsey.com/industries/metals-and-mining/our-insights («McKinsey»-Մոսկվայի գրասենյակի ավագ գործընկերն է Ավետիք Չալաբյանը, ով ղեկավարում է ընկերության համաշխարհային գործունեությունը մետաղների մասով)
- «Deloitte» -- https://www2.deloitte.com/global/en/pages/energy-and-resources/topics/mining.html?icid=top_mining («Deloitte»-ի՝ հանքարդյունաբերական հարցերով համաշխարհային թիմն առաջարկում է հանքարդյունաբերության ոլորտի փորձ»)
- «EY Metals» -- http://www.ey.com/gl/en/industries/mining---metals
- «PWC Global» -- https://www.pwc.com/gx/en/industries/energy-utilities-resources/mining-metals.html

4.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Միջազգային հաղորդակցության համար նախատեսված ուղերձների մշակման ժամանակ կիրառելի են ազգային ուղերձների մշակման վերաբերյալ արված առաջարկությունները: ՀԱՀ ՊՀԿ-ն առաջարկում է, որ ազգային ուղերձներին նվիրված բաժինը կիրառվի միջազգային հաղորդակցության ուղերձներ մշակելու գործում՝ որպես ուղեցույց:

5. ՀՀ ԱՃԹՆ-Ի ԿԱՅՔ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՈՐՏԱԼԸ

Ներկայումս ՀՀ ԱՃԹՆ-ին վերաբերող տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ կառավարության կայքէջում՝ ԱՃԹՆ-ին հատկացված անկյունում (www.gov.am/en/eiti/): ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի գործարկվելուց հետո բոլոր փաստաթղթերն ու տեղեկատվությունը կտեղադրվեն նոր կայքում:

ԱՃԹՆ-ի կայքը ամբողջապես պատրաստ լինելուն պես կդառնա ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության առանցքային տարրերից մեկը: Կայքը պետք է լինի առաջնային տեսակի հաղորդակցության միջոցառումների համար (ներքին, ազգային և միջազգային) և դրանց համապատասխան թիրախային խմբերի հետ հաղորդակցության առաջնային միջոցը: Այն նաև բրենդավորում իրականացնելու և բրենդավորման նյութերի պահպանման գործիք է (տե՛ս 7-րդ գլուխը ստորև): Ընդհանրապես, Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության հարցերով պետք է հղում կատարվի կայքին: Դրան հնարավոր է հասնել՝ ունենալով կայքում հղումներ դեպի ԱՃԹՆ բոլոր հաշվետու մարմիններ (պետական և բիզնես), որտեղ տեղադրվում է օրենքով նախատեսվող տեղեկատվությունը: Կայքում կարող են լինել նաև հղումներ դեպի ՔՀԿ-ի և հիմնադրամների կայքէջեր, որոնք ֆինանսավորում են ստանում հանքարդյունաբերական ընկերություններից:

Հաղորդակցության ռազմավարության հարցերով ԲՇԽ-ի աշխատանքային խումբը ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի բովանդակության, գործառույթների և կարողությունների հետ կապված խնդրել է բովանդակային նյութեր հետևյալ թեմաներով սույն ռազմավարությունը մշակողներից:

1. հիմնական տեղեկատվության և փաստաթղթերի ցանկ, որը հանրամատչելի կերպով պետք է տեղադրվի կայքում,
2. համապատասխանություն ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին՝ կապված բաց տվյալների սկզբունքի հետ (ԱՃԹՆ բաց տվյալների քաղաքականությունը ընդունվել է 2017թ-ի դեկտեմբերին: Սա նշանակում է, որ ներկայացված տեղեկատվությունը պետք է տրամադրվի Excel փաստաթղթի տեսքով կամ նմանատիպ ներբեռնվող ձևաչափերով հանրային օգտագործման համար)
3. ընկերությունների և կառավարության կողմից տվյալների անվտանգ և վստահելի փոխանցում՝ ապահովելու համար անկախ ադմինիստրատորին հաշվետվությունների չմիջնորդավորված տրամադրումը,
4. տեխնիկական նկարագրություններ, օրինակ՝ էջի բեռնման արագություն (համակարգչով և հեռախոսով), հեռախոսով բացելու հնարավորություն,
5. լեզուներին առնչվող հարցեր— խոսքը գնում է կայքէջի լեզվին (հայերեն, անգլերեն և ռուսերեն) և առանձին հատվածների լեզվին ներկայացվող պահանջների մասին, մասնավորապես, արդյո՞ք պետք է ողջ բովանդակությունը հասանելի լինի բոլոր լեզուներով, թե, հաշվի առնելով թարգմանչական և պահպանման ծախսերը, պետք է լինի ընտրովի մոտեցում, և բոլոր լեզուներով հասանելի լինեն միայն որոշ հատվածներ),
6. վիզուալ գրավչություն և փնտրելու դյուրինություն,
7. համեմատություն այլ երկրների և ԱՃԹՆ-ի միջազգային կայքերի հետ և առաջարկություններ:

ԱՃԹՆ-ն ներկայումս գտնվում է իր ինտերնետային կայքէջի վերջնականացման փուլում: ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը ներկայացրել է վերը նշված հարցերի մասին իր վերլուծությունները և առաջարկությունները ավելի վաղ՝ 2017թ.-ի օգոստոսին: Մեր առաջարկությունների և ԲՇԽ-ի հետ հետագա քննարկումների հիման վրա, ԱՃԹՆ Հայաստանը հրապարակեց կայքի համար Տեխնիկական առաջադրանք 2017թ.-ի սեպտեմբերին: ՀԱՀ ՊՀԿ-ի վերլուծությունները և առաջարկությունների ներառված են Հավելված 17-ում: ԱՃԹՆ-ի կողմից մշակված և հրատարակված ՏԱ-ը ներառված է Հավելված 17-ում:

6. ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունավետ ներքին հաղորդակցությունը էական նշանակություն ունի ԱՃՊԹՆ-ի գործընթացի հաջողության համար: Այն առնչվում է հաղորդակցության միջոցառումների չորս տեսակին.

1. հաղորդակցություն քարտուղարության և ԲՇԽ-ի անդամների միջև,
2. հաղորդակցություն ԲՇԽ-ի անդամների միջև,
3. հաղորդակցություն ԲՇԽ-ի անդամների և իրենց ավելի լայն խմբակցության հետ,
4. քարտուղարության և ԲՇԽ-ի անդամների պատրաստվածությունը իրազեկ և պատասխանատու կերպով ԱՃՊԹՆ-ին առնչվող թեմաներ քննարկելու համար Հայաստանում և երկրի սահմաններից դուրս իրենց ընտրողների և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ:

6.1. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՇԽ-Ի ՄԻՋԵՎ

Հաղորդակցության գործընթացները և արձանագրությունները

ԲՇԽ-ի կողմից կատարվող գործողությունները և վերջինիս հարաբերությունները քարտուղարության հետ սահմանված են *Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խմբի աշխատակարգում*:[4] ԲՇԽ-ի կողմից 2016թ. դեկտեմբերի 26-ին ընդունված այս փաստաթուղթը սահմանում է հետևյալը ԲՇԽ-ի մասին՝

- գործառույթներ,
- կառուցվածք ու իրավասություններ,
- գործունեության/կազմակերպչական ասպեկտներ,
- նիստերի կազմակերպման ընթացակարգ,
- նիստերի արձանագրություններ (նիստի օրակարգն ու համապատասխան փաստաթղթերը պետք է ուղարկվեն նիստից 7 աշխատանքային օր առաջ, քվորումի հետ կապված պահանջներ և այլն),
- որոշումների ընդունում և քվեարկություն,
- շահերի բախում և վարվեցողության կանոններ և այլն:

Էլ. փոստային հաղորդակցություն քարտուղարության և ԲՇԽ-ի անդամների միջև

ԲՇԽ-ի որոշ անդամներ նախընտրում են քարտուղարությունից պաշտոնական հաղորդակցություն ստանալ պաշտոնական գրասենյակային էլեկտրոնային հասցեից, օրինակ՝ eiti.am: Ընդհանուր առմամբ, նման անհատականացված էլեկտրոնային փոստի հասցեն կարող է նաև օգնել ՀՀ ԱՃՊԹՆ-ի բրենդինգին, երբ վերջինիս մասին լուրեր, մամլո հաղորդագրություններ, հայտարարություններ և այլ նյութեր են տարածվում (տես գլուխ 7, «Բրենդինգ և լեզու» բրենդինգի վերաբերյալ լրացուցիչ առաջարկների համար):

Պարբերական նորություններ

Արդեն իսկ գոյություն ունեն եռամսյակային հաշվետվություններ ԱՃՊԹՆ-ի գործընթացի առաջխաղացման վերաբերյալ, իսկ եռամսյակային հաշվետվություններից բացի հնարավոր է առավել կարևոր իրադարձությունների մասին տեղեկատվությունը կամ ԱՃՊԹՆ գործընթացին ուղղակիորեն չառնչվող նորությունները տարածել ավելի արդիական ժամանակահատվածում:

[4] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_TOR%20_Armenia_Eng.pdf

6.2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ԲՇԽ-ն պետք է ապահովի համապատասխան պայմաններ, որպեսզի գոյություն ունենա հարթակ երկխոսությունների և քննարկումների համար: ԲՇԽ-ի անդամների միջև հաղորդակցության ամենապարզ ձևաչափը ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված ԲՇԽ նիստերն են (տես՝ 6.1 վերևում): Այս կանոնավոր հանդիպումներից զատ, ԲՇԽ-ն կարող է որոշել իր անդամների միջև այլ հանդիպումների հաճախականությունն ու ձևաչափը:

ԲՇԽ-ն ունի ըստ թեմաների բաժանված մի քանի աշխատանքային խմբեր: Կան աշխատանքային խմբեր իրական սեփականատերերի, պատասխանատու հանքարդյունաբերության, հանրային հարցերի և այլ թեմաներով: Դրանք են՝ հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խումբ, իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խումբ, ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքային խումբ, օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խումբ: Սա նույնպես լավ հնարավորություն է, որ ԲՇԽ անդամները երկխոսություն ծավալեն յուրաքանչյուր շահագրգիռ կողմին մտահոգող հարցերի շուրջ:

6.3. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԻՐԵՆՑ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ԲՇԽ-ի անդամներն ընտրվում են որպես իրենց շահագրգիռ խմբերի (խմբակցության) ներկայացուցիչներ: Այդ առումով հաղորդակցությունը ԲՇԽ-ի անդամների և իրենց խմբակցությունների միջև ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներից է:

Որպես կանոն, ԲՇԽ-ում տեղի ունեցող քննարկումները գրանցվում են ԲՇԽ-ի նիստի արձանագրության մեջ, որն այնուհետև առցանց կերպով հասանելի է դառնում հանրությանը: Ընդհուպ մինչև 2018թ. փետրվարի վերջը այս տեղեկատվությունը տեղադրվել է ՀՀ կառավարության կայքի՝ ԱՃԹՆ-ին հատկացված անկյունում (www.gov.am/en/eiti/): ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի վերջնական մեկնարկից հետո ԲՇԽ ողջ փաստաթղթերը կտեղափոխվեն նոր կայք:

Մեկ ուրիշ լրացուցիչ մոտեցում կարող է լինել ԱՃԹՆ նիստերի ուղիղ հեռարձակումը համացանցով: Հայաստանում սա սովորաբար կատարվում է խորհրդարանական նիստերի համար, և չկա որևէ պատճառ, թե ինչու ԱՃԹՆ նիստերը նույնպես չպետք է հեռարձակվեն հանրության համար: Հանրային հեռարձակման առավելությունն այն է, որ դրանք կարող են օգտագործվել համայնքին և շահագրգիռ կողմին ներգրավելու, մեկնաբանություններ ստանալու, բանավեճեր և քննարկումներ առաջացնելու համար: Նշվածով հանդերձ, առաջին ԱՃԹՆ զեկույցի պատրաստման հետ կապված սահմանափակ ռեսուրսների և բարդության պատճառով միգուցե ավելի ճիշտ կլինի այս ամենն իրականացնել ԱՃԹՆ առաջին զեկույցի հրապարակումից հետո:

Հազվագյուտ դեպքերում կարող են լինել գաղտնի համարվող տեղեկություններ, որոնք չպետք է ներառվեն ԲՇԽ նիստի արձանագրության մեջ կամ ԲՇԽ-ն ցանկանա դրանք պահպանել գաղտնի: ԲՇԽ-ի Տեխնիկական առաջադրանքը սահմանում է գաղտնի խորհրդակցությունների վարման ընթացակարգերը: Բացի այդ, յուրաքանչյուր խմբակցության անդամ նիստերի արձանագրության պատրաստ լինելու դեպքում պետք է իր խմբակցության ավելի լայն, ոչ ԲՇԽ անդամներին էլ. փոստով նույնպես ուղարկի արձանագրությունը:

6.4. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ԱՃԹՆ-ի հաջողությունը մասամբ կախված է նրանից, թե որքան են տեղեկացված քարտուղարությունն ու ԲՇԽ-ի անդամները: Ակնկալվում է, որ քարտուղարությունն ու ԲՇԽ-ի անդամները պետք է լինեն պատշաճորեն տեղեկացված և կարողանան հստակ նկարագրել ԱՃԹՆ-ի գործընթացը, ստանդարտն ու նպատակները: Ինչ-որ առումով նրանք հանդես են գալու որպես ԱՃԹՆ-ի դեսպաններ:

Քարտուղարությունն և ԲՇԽ-ի անդամների այդ կարողությունը ներառում է հետևյալ թեմաները ճշգրտորեն նկարագրելու ունակությունը՝

- ԱՃԹՆ-ի ստանդարտ
- ԱՃԹՆ-ի 10 սկզբունքներ
- ԱՃԹՆ-ի գործընթաց և վերջին զարգացումներ
- ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիր
- ԱՃԹՆ-ի զեկույց և այլ ուսումնասիրություններ ու փաստաթղթեր

Այս կարողությունն ապահովելու նպատակով քարտուղարության աշխատակազմն ու ԲՇԽ անդամները պետք է՝

- իրենց տրամադրության տակ ունենան ուսուցողական նյութեր, գերադասելի է ժամանակային առումով ճկուն ձևաչափով, օրինակ, կարճ առցանց տեսանյութեր ԱՃԹՆ-ի գործընթացի, ստանդարտի, իրական սեփականատերերի, վավերացման քայլերի և պահանջների, պատասխանատու հանքարդյունաբերության և այլնի վերաբերյալ (արդեն իսկ կան հոլովակներ, բայց լրացուցիչ նյութեր հետագայում պահանջվելու են),
- մասնակցեն մեդիայի հետ դեմառդեմ հարցազրույցների շուրջ վերապատրաստումների,
- ծանոթ լինեն ՀՏՀ-ներին,
- ծանոթ լինեն ԱՃԹՆ-ի մասին ստանդարտ թեմաներին:

7. ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐ

7.1. ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ

Կարևոր է ՀՀ ԱՃԹՆ-ի տեսանելիությունն ու ճանաչելիությունն ապահովելու հետևողականությունը: Բրենդավորումը և այդ շրջանակներում առաջարկվող նյութերի փաթեթը տալիս են դա իրականացնելու գործիքները: Լոգոները, կարգախոսները, տառատեսակները, գույները, բլանկները և գրենական պիտույքները, կաղապար տեքստերը (շաբլոն-տեքստեր), նշանները և պաստառները, պրեզենտացիոն կաղապարները, հաշվետվության կաղապարները, էլեկտրոնային փոստի ստորագրությունները և այլ նման միջոցները ապահովում են հետևողական և ճանաչելի հաղորդակցություն, որն ուշադրություն է գրավում, նպաստում վստահության ամրապնդմանը և գործընթացում ներգրավվածությանը:

Լոգոները բրենդավորման ամենահայտնի տարրերն են: ՀՀ ԱՃԹՆ-ն արդեն հաստատել է ազգային լոգոն (պատկեր 5)[5]:

Figure 5. EITI Armenia's logo

Լոգոյից բացի կան նաև բազմաթիվ «կողմնակի նյութեր», որոնք պետք է պատրաստել բրենդավորման համար: Աղյուսակ 6-ը ամփոփ ներկայացնում է ազգային մակարդակում այն նյութերն ու միջոցառումները, որոնց համար պետք է կատարվի բրենդավորում և թե ինչպես պետք է դա արվի: Աղյուսակում նշվում են մի քանի «կողմնակի նյութեր», որոնք ամենայն հավանականությամբ պետք է պատրաստվեն գրաֆիկ դիզայների օգնությամբ: Այս նյութերը ներառում են՝

- նամակագրական պարագաներ
- հաշվետվությունների կաղապար(ներ)
- պրեզենտացիաների կաղապար(ներ)
- էլ. փոստի ստորագրություն(ներ), հիմնական ուղերձը փոխանցող կարգախոսով:

Աղյուսակ 6. Բրենդավորման ենթակա նյութերի և միջոցառումների ցանկ և թե ինչպես կատարել բրենդավորում

ԻՆՉՆ Է ՊԵՏՔ ԲՐԵՆԴԱՎՈՐԵԼ	ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ
Հաղորդակցության նյութեր	
• Նամակներ և գրենական պիտույքներ • Էլ-փոստեր և ստորագրություններ • Պաստառներ և նշաններ • Վիդեո/աուդիո նյութեր • Ինֆոգրաֆիկա և պաստառներ	→ ՀՀ ԱՃԹՆ-ի լոգոյի տեղադրում → Համապատասխանող տառատեսակ և գունային սխեմա → Հիմնական ուղերձը հետևողականորեն փոխանցող կարգախոս → Գործընկերների լոգոներ (հնարավորության դեպքում) → Հրապարակումների վերաբերյալ ԱՃԹՆ-ի կամ ֆինանսավորող գործընկերների իրավունքների մասին

[5] Միջազգային ԱՃԹՆ-ի՝ լոգոների մշակման համար տես https://eiti.org/logo-policy:

• Պրեզենտացիոն կաղապարներ • Հաշվետվությունների կաղապարներ • Համապատասխան այլ նյութեր	տեղեկություններ (եթե դրա անհրաժեշտությունը կլինի: Ստուգել ֆինանսավորող կազմակերպության հետ)
Հրապարակումներ	
• Հաշվետվություններ և ուսումնասիրություններ • Մամլո հաղորդագրություններ • Մամուլի ծանուցումներ • Թռուցիկներ • Պրեզենտացիաներ • Ծրագրի համառոտագրեր • ՏԱ-ներ	→ ՀՀ ԱՃԹՆ-ի լոգոյի տեղադրում → Համապատասխանող տառատեսակ և գունային սխեմա → Հիմնական ուղերձը հետևողականորեն փոխանցող կարգախոս → Գործընկերների լոգոներ (հնարավորության դեպքում) → Հրապարակումների վերաբերյալ ԱՃԹՆ-ի կամ ֆինանսավորող գործընկերների իրավունքների մասին տեղեկություններ (եթե դրա անհրաժեշտությունը կլինի: Ստուգել ֆինանսավորող կազմակերպության հետ) → Համապատասխանության ապահովում ԱՃԹՆ-ին առնչվող եզրույթների գործածման ժամանակ, օրինակ՝ ԲՇԽ
Գործողություններ/միջոցառումներ	
• Ասուլիսներ • Նիստեր • Վերապատրաստումներ • Հարցազրույցներ • Այլ միջոցառումներ	→ Տեսանելիության նյութերի ցուցադրում (օրինակ՝ ՀՀ ԱՃԹՆ-ի պաստառներ և դրոշներ) → ՀՀ ԱՃԹՆ-ի նյութերի բաժանում → Մամլո փաթեթ → Ապահովել, որպեսզի հարցազրույցներում և հոդվածներում նշվի ՀՀ ԱՃԹՆ-ի մասին → Համապատասխանության ապահովում ԱՃԹՆ-ին առնչվող եզրույթների գործածման ժամանակ, օրինակ՝ ԲՇԽ

7.2. ԿԱՐԳԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԿԱՂԱՊԱՐ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Կարգախոսներ

Կարգախոսը հակիրճ տեքստ է, որը հստակ ներկայացնում է ընկերության կամ նախաձեռնության ցանկացած միտք, առաքելություն կամ նպատակ: Կարգախոսները կարելի է լոգոների հետ միասին կիրառել կայքում, գրենական պիտույքների և տպագիր նյութերի վրա և այլն:

Առաջարկում ենք, որ ՀՀ ԱՃԹՆ-ն որդեգրի կարգախոս և սկզբի համար այն ներառի իր էլ. փոստային հաղորդակցության ստորագրություններում: Հետագայում այն կարելի է նաև կիրառել ՀՀ ԱՃԹՆ-ի կայքում և գրենական պիտույքների վրա: Դիտարկման համար ստորև ներկայացվում են մի քանի կարգախոսներ.

Natural resources for citizens
Բնական ռեսուրսներ քաղաքացիների համար

Open and accountable
Բաց և հաշվետու

Հետագա տարիներին այս կարգախոսները կարող են փոփոխվել հետևյալի՝

From transparency to accountability
Թափանցիկությունից՝ հաշվետվողականություն

Արդյունավետ կարգախոս գտնելը հեշտ չէ և պահանջում է հաղորդակցության միջոցառումների փորձ: Սակայն պատշաճ կարգախոսի ընտրության և դրա տեղին գործածման պարագայում հնարավոր է

զգալիորեն մեծացնել բրենդավորման արդյունավետությունը: Կարգախոսների նոր տարբերակներ գտնելու և փորձարկելու նպատակով քարտուղարությունը և ԲՇԽ-ն կարող են աշխատել հաղորդակցության փորձագետների հետ:

Կաղապար տեքստ

Հաղորդակցության մեջ կաղապար տեքստը չփոփոխվող տեքստն է, որն օգտագործվում է տարբեր փաստաթղթերում: Հաղորդակցության միջոցառումների համատեքստում սա վերաբերում է լրատվական հոդվածի, մամլո հաղորդագրության և նման տեքստերի վերջում նշվող ստանդարտ տեքստին: Բոլոր մամլո հաղորդագրությունները, հրավերները, տեղեկատվական փաթեթները, թռուցիկները և այլն պետք է վերջում ներառեն կաղապար տեքստ ՀՀ ԱՃԹՆ-ի մասին և պարունակեն նախաձեռնության կայք ուղղորդող հղում: Ստորև բերված է նման կաղապար տեքստի օրինակ: ՀՀ ԱՃԹՆ կայքի հասցեն նշված է պայմանական, քանզի նման հասցե այս պահին գոյություն չունի:

> *Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ)բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է (eiti.org)՝ հիմնված այն համոզման վրա, որ դա թույլ կտա ապահովել, որպեսզի բնական պաշարներից ստացված հարստությունից օգտվեն այդ երկրի բոլոր քաղաքացիները: ԱՃԹՆ-ի գործընթացը բոլոր երկրներում ղեկավարվում է կառավարությունից, գործարար ոլորտից և քաղաքացիական հասարակությունից կազմված բազմաշահառու խմբի միջոցով: http://eiti.am*

7.3. ԲՐԵՆԴԱՎՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԴԻԱՅԻՆ

ՀՀ ԱՃԹՆ-ի կայքում կարելի է տեղադրել մեդիայի համար հատուկ ցուցումներով բրենդավորման նյութեր: Տեսնելու համար, թե սա ինչպես կարող է արվել, այցելեք՝ http://branding.aua.am/: Բրենդավորման նման էջ կարող է տեղադրվել ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի «Մամուլի կենտրոն» անկյունում:

7.4. ԲՐԵՆԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Էլ. փոստի հասցեներ

Ներկայումս ԱՃԹՆ Հայաստանի քարտուղարությունը օգտագործում է @gov.am հասցեն իր պաշտոնական էլ. նամակագրության համար: ԲՇԽ-ն կարող է դիտարկել ստեղծել էլեկտրոնային փոստի հասցեները, որոնք հիմնված են մեկ ընդհանուր դոմեյնի վրա, ինչպիսին է @eiti.am: Դա կարող է թույլ տալ քարտուղարությանը ունենալ թե՛ գրասենյակային, թե՛ անհատականացված ՀՀ ԱՃԹՆ-ի էլեկտրոնային փոստի հասցեներ: Ոչ-անհատականացված և անհատականացված ԱՃԹՆ-ի էլ.փոստի հասցեների օգտագործումը կօգնի ՀՀ ԱՃԹՆ-ի բրենդինգին, հատկապես լուրեր, մամլո հաղորդագրություններ, հայտարարություններ եւ այլն նյութեր տարածելիս: Էլ. փոստի հասցեի տիրույթները և ընդլայնումները պետք է համահունչ լինեն ԱՃԹՆ-ի կայքի URL- ին: ԲՇԽ-ն պետք է հաշվի առնի, որ էլ. փոստի հնարավորություններով դոմեյնի ձեռք բերումը կապված է որոշակի փոքր տարեկան ֆինանսական ծախսերի հետ:

Ուղեցույցներ թվային մեդիայի համար

Թվային մեդիան պետք է օգտագործվի որպես հաղորդակցության միջոց բոլոր թիրախային խմբերին ԱՃԹՆ-ի մասին տեղեկություններ տրամադրելու համար: ՀՀ ԱՃԹՆ-ն պետք է իր կայքում և ֆեյսբուքում հաճախակի կատարի թարմացումներ՝ հաշվի առնելով, որ վերջինը Հայաստանում ամենատարածված սոցիալական հարթակն է: Պետք է փորձել, որ հրապարակումները կատարվեն ամսական առնվազն չորս անգամ: Ֆեյսբուքյան գրառումները կարող են գովազդվել (վճարովի եղանակով) և էջի համար լսարան ձեռք բերել: Բովանդակությունը կարող է ներառել ԱՃԹՆ-ին վերաբերող ցանկացած հանրային միջոցառում կամ գործողություն: ՀՀ ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջի պատշաճ վարումը կարող է ընդգրկել հետևյալը.

- էջը «հավանելու» հրավերի ուղարկում,
- սեմինարների, աշխատաժողովների և տեղեկատվական իրադարձությունների համար ֆեյսբուքյան միջոցառումների ստեղծում,
- տեղեկատվական գովազդների և գրաֆիկայի ստեղծում,
- կարևոր իրադարձությունների համար ուղիղ հեռարձակումների կազմակերպում,
- ՀՀ ԱՃԹՆ-ի համար հեշթեգների կիրառում (օրինակ՝ #EITI, EITIArm, EITIArmenia, #EITIArmenia, #mining, #transparency, #ԱՃԹՆ, #ԱՃԹՆՀայաստան #հանքարդյունաբերություն, #թափանցիկություն) և առանձին հեշթեգների կիրառում հատուկ իրադարձությունների և միջոցառումների համար (օրինակ՝ #EITIArmeniaReport, #EITIBeneficialOwnershipDisclosure, #EITIArmeniaCandidacy):

Մամլո փաթեթ

ԱՃԹՆ-ի գործընթացների վերաբերյալ առանցքային տեղեկատվություն տրամադրող տարբեր իրադարձությունների ժամանակ (միջոցառումներ, ասուլիսներ, կլոր սեղան քննարկումներ, աշխատաժողովներ և այլն) պետք է լինեն մեդիայի համար նախատեսված փաթեթներ: Այս փաթեթը պետք է համապատասխան նյութեր պարունակի ՀՀ ԱՃԹՆ-ի նախապատմության, ԲՇԽ-ի անդամների և նրանց գործառույթների, գործողությունների, հաշվետվությունների մասին տեղեկություններ: Մամլո փաթեթը պետք է ներառի՝

- կոնկրետ իրադարձության օրակարգը,
- բանախոսների ներկայացրած ոլորտը, ընկերությունը, պաշտոնը,
- անվանապիտակ (բեջ),
- նոթատետր,
- գրիչ,
- կարելի է նաև ներառել բրենդավորված USB կրիչ ԱՃԹՆ-ի մասին տեղեկություններով:

Մամլո հաղորդագրություններ կամ հրավերներ

Կանոնավոր կերպով պետք է տրամադրվեն մամլո հաղորդագրություններ կամ հրավերներ առաջիկա միջոցառումների, նոր հրապարակումների վերաբերյալ հայտարարությունների և նման այլ գործողությունների ընթացքում: Հայաստանի քաղաքացիների համար լրատվության գլխավոր աղբյուրը հեռուստատեսությունն է: Համապետական սփռում ունեցող հեռուստաընկերությունների թվում են՝ «Հ1», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Արարատ» հեռուստաընկերությունները: Ռադիոալիքներից Երևանում և մարզերում կարելի է օգտվել ռադիոյով տեղեկություններ տարածելու ժամանակ (հատուկ շեշտ դնելով «Ազատություն» ռադիոկայանի վրա): Թերթերի և ամսագրերի շրջանառությունը թե տպագիր, թե էլեկտրոնային տարբերակներով հիմնականում ցածր է: Թեպետ մի շարք հոդվածներ կարող են հրապարակվել տպագիր եղանակով (*լրատվամիջոցների ցանկի համար տես՝ հավելված F*): Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացների շուրջ հաղորդակցության գործին կարող են նպաստել նաև միջազգային կազմակերպությունները (օրինակ՝ Հայաստանում ԵՄ պատվիրակություն, ԳՄԸՀ, ՄԱԿ/ՄԱԿ-ի ԶԾ, ՀԲ, ԱՄՆ ՄԶԳ, ԱԶԲ, ՎԶԵԲ, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամ և Հայաստանում հավատարմագրված դեսպանություններ):

Միջոցառումների պլանավորման ուղեցույցներ

Որպես ընդհանուր առաջարկ, ցանկացած միջոցառումից առաջ դրա վերաբերյալ հայտարարությունները պետք է արվեն *մեկ ամսից մինչև մեկ շաբաթվա* ընթացքում նախքան անկացման համար նախատեսված ամսաթիվը: Առանցքային մասնակիցների համար անհատական հրավերները պետք է պատրաստվեն և ուղարկվեն միջոցառումից *առնվազն երկու շաբաթ առաջ*: Միջոցառման մասնակիցները պետք է հաստատեն իրենց մասնակցությունը, իսկ նախատեսված միջոցառման մասին հիշեցումները պետք է ուղարկվեն անցկացման համար նախատեսված ամսաթվից *մինչև երեք աշխատանքային օր* առաջ:

Պետք է պատրաստվեն միջոցառման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, ինչպիսիք են օրինակ անվանապիտակները, անվանաքարտերը, թռուցիկները, գնահատման թերթիկները, ցուցանակները, պաստառները և այլն: Պետք է ապահովվեն անհրաժեշտ տեսաձայնային սարքեր և սպասարկող անձնակազմ (օրինակ՝ էկրաններ, պրոյեկտորներ, թարգմանիչներ):

Միջոցառման ընթացքում պետք է հավաքվեն մասնակիցների մանրամասն տվյալները (անուն, հասցե, էլ-փոստ, կազմակերպություն/հաստատություն, պաշտոն, հեռախոս): Միջոցառումը պետք է մեկնարկի օրակարգի մասին հակիրճ ներկայացմամբ, որին կհետևեն ելույթներ, քննարկումներ և հարցերի համար հատկացված մասը:

Միջոցառման ավարտից հետո կպատրաստվի միջոցառման վերջնական օրակարգի, մասնակիցների, ինչպես նաև բանախոսների, նոր քննարկված հարցերի և առաջարկությունների մասին տեղեկություններ պարունակող զեկույց:

7.5. ԼԵԶՈՒՆԵՐ

Լեզուների հետ կապված հարցը քննարկվել է կայքերին վերաբերող բաժնում: Այստեղ նորից վերահաստատում ենք, որ որպես ՀՀ ԱՃԹՆ-ի բրենդավորման բաղադրիչ, որքան մեծ թվով լեզուներ ներառվեն, այնքան նախաձեռնությունն ավելի շատ կդիտվի որպես բաց և թափանցիկ գործընթաց: **Հայերենը** Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն է, և հետևաբար, բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հայերենով: **Անգլերենը** կարևոր է, քանի որ միջազգային հանրության մեծ մասն այն կիրառում է հաղորդակցության նպատակով: Առանց անգլերենի կկորի ԱՃԹՆ-ի հետ գործ ունեցող փորձագետների հետ կապի և օգտակար միջազգային քննարկումների հնարավորությունը: Եթե լինեն միջոցներ, ապա կարելի է ավելացնել նաև **ռուսերենը**: Սա, մասնավորապես, նշանակություն կունենա Ռուսաստանում և նախկին խորհրդային երկրներում բնակվող հայկական սփյուռքի հետ կապ ապահովելու առումով:

8. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոնիտորինգի և գնահատման բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն քարտուղարության կողմից: Յուրաքանչյուր գործողություն ունի համապատասխան ցուցիչ, որը կօգնի տեսնել, թե արդյոք ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության խնդիրներն իրականացվել են, թե՝ ոչ: Աղյուսակ 7-ում ամփոփ ներկայացվում են համապատասխան գործողությունները, ցուցիչները և տեղեկությունների աղբյուրները:

Որակի գնահատման համար առաջարկվում է օրինակ վերապատրաստումներից հաշխատաժողովներից հետո անցկացնել հարցումներ: Նշված միջոցառման օրը մասնակիցներին կարելի է ուղարկել հակիրճ մի հարցաշար: Այս հարցաշարերը պետք է պարունակեն հարցեր, որոնք գնահատում են մասնակիցների ընկալումները ուղերձների վերաբերյալ, ինչպես նաև նրանց ընդհանուր բավարարվածության աստիճանը տվյալ միջոցառումից: Ինչ վերաբերում է մեդիային, ապա հաղորդակցության մասնագետը/բաժինը կարող է գնահատել, թե արդյոք լուսաբանումը դրական էր, բացասական, թե՝ չեզոք:

Քանակական ցուցիչների մասով հաշվետվությունները պետք է լրացվեն հաղորդակցության հարցերով պատասխանատու անձի կողմից ամսական կամ երկու ամիսը մեկ անգամ սկզբունքով: Կարող են կատարվել գործողությունների, ուղերձների և հաղորդակցության միջոցների փոփոխություններ և խմբագրումներ՝ կախված մոնիտորինգից և գնահատումից ստացված արդյունքներից:

Աղյուսակ 7. Գործողությունների իրականացման ցուցիչներ և դրանց աղբյուրներ

Գործողություն	Ցուցիչ	Աղբյուր
Ազգային հաղորդակցություն		
Միջոցառումներ	Միջոցառումների քանակ	ԱՃԹՆ Հայաստան համակարգող գրասենյակ
Միջոցառումներ – մասնակիցներ	Մասնակիցների թիվ	Մասնակիցների ցանկ
Միջոցառումներ – մամուլ	Միջոցառումը լուսաբանող լրատվամիջոցի քանակ	Մասնակիցների ցանկ
Վերապատրաստումներ	Մասնակիցների թիվ	Մասնակիցների ցանկ
Լուսաբանում մամուլի կողմից – հարցազրույցներ	Հարցազրույցների քանակ, դիտումների քանակ,	Հաղորդակցության հարցերով մասնագետ
Լուսաբանում մամուլի կողմից – հրապարակումներ ՀՀ ԱՃԹՆ-ի մասին	Հոդվածների/գրառումների քանակ	Հաղորդակցության հարցերով մասնագետ
Ֆեյսբուք	«Հավանումների»/կիսվելու/մեկնաբանությունների քանակ	Ֆեյսբուքի վիճակագրություն
Միջազգային հաղորդակցություն		
Միջազգային համաժողովներ/գագաթաժողովներ	Մասնակցած միջոցառումների, քննարկումների և պրեզենտացիաների թիվ	Հաղորդակցության հարցերով մասնագետ
Լուսաբանում մամուլի կողմից	Հոդվածների/գրառումների թիվ	Հաղորդակցության հարցերով մասնագետ
Ներքին հաղորդակցություն		
Էլ-փոստերի ուղարկում	Էլ-փոստի նամակներին արձագանքների թիվ	ԲՇԽ
ԱՃԹՆ-ի նիստեր	Նիստերի մասնակիցների թիվ	ԲՇԽ
Ներդրում աշխատանքային գործընթացում	Արձագանքների ծավալ	ԲՇԽ
Կայքեր		
Կայք (հայերեն տարբերակ)	Այցելուների, այցելությունների աշխարհագրության, թրաֆիկի աղբյուրների քանակ	Կայքի վիճակագրություն
Կայքի այցելություններ (անգլերեն տարբերակ)	Այցելուների, այցելությունների աշխարհագրության, թրաֆիկի աղբյուրների քանակ	Կայքի վիճակագրություն
Էլեկտրոնային տեղեկագիր	Բաժանորդների քանակ	Էլ-փոստի աքաունթի վիճակագրություն

9. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

9.1. ԱՃԹՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Աղյուսակ 8. ԱՃԹՆ Հայաստան գործողությունների ծրագիր

Հ/Հ	Ժամանակահատված/նկարագիր	Գլխավոր նպատակներ	Միջոցառումներ		
			Միջոցառման նկարագիր	Իրականացման ժամանակահատված	Ֆինանսավորման աղյուրները
I	Օրենսդրական փոփոխություններ, ընկերությունների և պետական մարմինների հաշվետվությունների կազմում (2018թ. հունվար-հունիս)	1. ԱՃԹՆ-ի հաշվետու կազմակերպությունները պատրաստ են հաշվետվության տեսքով ներկայացնելու (առցանց ձևաչափերի կիրառմամբ) ֆինանսական և այլ տվյալներ՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի և ՀՀ օրենսդրության պահանջների	a) Ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների տեղեկացում ԱՃԹՆ-ի և օրենսդրական փոփոխություններին մասին	Ապրիլ 2018	Երևանում Բրիտանական դեսպանատուն
			b) Վերապատրաստում հաշվետու կազմակերպությունների ընկերությունների համար	June 2018	Համաշխարհային բանկ
			c) Անկախ ադմինիստրատորի կողմից հաշվետու կազմակերպություններին ցուցադրում, թե ինչպես պետք է պատշաճ կերպով լրացնել հաշվետվության ձևանմուշները, ինչպես նաև կոնտակտային անձի տվյալների տրամադրում, ով հաշվետվությունների լրացման ժամանակահատվածում կպատասխանի հաշվետու կազմակերպությունների ներկայացուցիչների հարցերին	Հունիս 2018	Համաշխարհային բանկ
		2. Հիմնական շահագրգիռ կողմերը տեղեկացված են, ներգրավված են:	a) ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների եռամսյակային հաշվետվություններ	Յուրաքանչյուր եռամսյակը մեկ	Ֆինանսավորում չի պահանջում
			b) ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի նիստերի արձանագրություններ	ԲՇԽ-ի յուրաքանչյուր նիստից հետո	Ֆինանսավորում չի պահանջում
			c) ՁԼՄ-ների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների վերապատրաստում	Մայիս 2018	Երևանում Բրիտանական դեսպանատուն
			d) Հոլովակների նկարահանում և տարածում (գովազդային արշավ)	2018-2020	Համաշխարհային բանկ
			e) ՀՀ ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջի խթանում	2018-2020	Համաշխարհային բանկ
		3. Հանրությունն իրազեկված է ՀՀ ԱՃԹՆ-ի մասին	a) Հրապարակումներ սոցիալական մեդիայում (ՀՀ ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջ, ՀՀ ԱՃԹՆ-ի թվիթերյան էջ)	Շարունակակակա՝ ամսական 1-2	Ֆինանսավորում չի պահանջում
			b) ՀՀ ԱՃԹՆ-ի մշտապես թարմացվող կայք	Շարունակակակա	Ֆինանսավորում չի պահանջում
			c) ԱՃԹՆ-ի առաջընթացի մասին տարեկան հաշվետվության հրապարակում կայքում	2018թ. հունիսի ավարտ	Ֆինանսավորում չի պահանջում

			(նշենք, որ սա զեկույց է Հայաստանում ԱՃԹՆ-ի առաջընթացի մասին. այն տարբերվում է ԱՃԹՆ- ի տարեկան հաշվետվությունից)		
		4. ԱՃԹՆ Հայաստան կայքի/պորտալի գործարկում	a) Կայքի գործարկում և հաշվետվության համար EITI վեբ կայքի առցանց համակարգի իրականացում	Մայիս 2018	ՄԱԶԾ
		5. Համապատասխան բրենդինգ և ոճ	a) ՀՌԳԾ-ում առաջարկած բրենդինգային նյութերի մշակում	Հունվար-հուլիս 2018	USAID?
II	Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում (2018թ. մայիս-սեպտեմբեր)	1. Հաշվետու կազմակերպություններից տեղեկատվության ժամանակին և ամբողջական հավաքագրում	a) See Activity I.1.c (անկախ ադմինիստրատոր, ով տրամադրում է ուղեցույցներ հաշվետու անձանց...)	Մայիս-սեպտեմբեր 2018	Ֆինանսավորում չի պահանջում
III	ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի հրապարակում (2018թ. սեպտեմբեր)	1. Զեկույցը լայն և համակողմանի լուսաբանվում է զանգվածային լրատվամիջոցների կողմից	a) Մամուլի հաղորդագրություն	Յուրաքանչյուր հանրային միջոցառման կամ կարևոր իրադարձության դեպքում	Ֆինանսավորում չի պահանջում
			b) ԱՃԹՆ-ի զեկույցի հանրամատչելի տարբերակի կայքում հրապարակում	Սեպտեմբեր 2018	Համաշխարհային բանկ
			c) ԱՃԹՆ-ի զեկույցի հանրամատչելի տարբերակի տարածում (մարզային այցելություններ, կոնֆերանս և այլն)	Սեպտեմբեր-դեկտեմբեր 2018	Ֆինանսավորում չի պահանջում
			d) Սոցիալական մեդիայի հրապարակում (ՀՀ ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջ, ՀՀ ԱՃԹՆ-ի թվիթերյան էջ)	Շաբաթական 2 հատ՝ հայերեն և անգլերեն լեզուներով	Ֆինանսավորում չի պահանջում
			e) ԱՃԹՆ-ի կոնֆերանս	Սեպտեմբեր-նոյեմբեր 2018	Համաշխարհային բանկ
		2. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, արդյունահանող ոլորտի, ակադեմիական շրջանակի, փորձագետների ներգրավվածություն	a) Տարածաշրջանային/մարզային հանդիպումներ	Սեպտեմբեր-հոկտեմբեր 2018	Համաշխարհային բանկ
IV	Զեկույցին հաջորդող ժամանակահատված (2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր)	1. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, արդյունահանող ոլորտի, ակադեմիական շրջանակի, փորձագետների ներգրավվածություն (ներառյալ՝ իրական սեփականատիրոջ վերաբերյալ հաշվետվություն)	a) Սոցիալական մեդիայի հրապարակում (ՀՀ ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջ, ՀՀ ԱՃԹՆ-ի թվիթերյան էջ)	Շաբաթական 2 հատ՝ հայերեն և անգլերեն լեզուներով	Ֆինանսավորում չի պահանջում
			b) Հասարակության իրազեկման բարձրացման միջոցառումներ, սոցիալական լրատվամիջոցներում և օնլայն հարթակներում տեղադրումներ իրական սեփականատիրոջ վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների հաշվետվության մասին	Հոկտեմբեր 2018	Համաշխարհային բանկ
			c) Շահառուների հետ իրազեկության բարձրացման միջոցառումներ (հանդիպումներ) իրական	Դեկտեմբեր 2018	Համաշխարհային բանկ

			սեփականատերերի բացահայտման վերաբերյալ		
			d) ՀՀ ԱՃԹՆ-ի մեկնարկային տարվա առաջարկություններին հետամուտ քաղաքացիական հասարակության քննարկումներ	Հոկտեմբեր-դեկտեմբեր 2018	ԱՄՆ ՄԶԳ
V	ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի պատրաստում (2019թ. հունվար-օգոստոս)	1. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, արդյունահանող ոլորտի, ակադեմիական շրջանակի, փորձագետների ներգրավվածություն (ներառյալ՝ իրական սեփականատիրոջ վերաբերյալ հաշվետվություն)	a) Իրական սեփականատերերի բացահայտման թեմայով վերապատրաստումների անցկացում շահագրգիռ պետական մարմինների աշխատակիցների համար	Մայիս 2019	Համաշխարհային բանկ
			b) Իրական սեփականատերերի վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի կիրարկման մասին վերապատրաստումներ բազմաշահառու խմբի և հանքարդյունահանող ընկերությունների համար	Հունիս 2019	Համաշխարհային բանկ
VI	Վավերացման այցեր (2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր)	1. Վավերացման գործընթացը լուսաբանվում է զանգվածային լրատվամիջոցների կողմից	a) Սոցիալական մեդիայի հրապարակումներ	Առնվազն 2 հատ՝ հայերեն և անգլերեն լեզուներով	Ֆինանսավորում չի պահանջում
			b) Մամուլի ասուլիս – հարցազրույց վավերացման պատվիրակների հետ	Առնվազն 1 հատ	Ֆինանսավորում չի պահանջում
			c) ՔՀԿ-ների հետ, ինչպես նաև տեղական քննարկումներն ու բանավեճերը լուսաբանելու նպատակով լրագրողների ներգրավում	Սեպտեմբեր-հոկտեմբեր 2019	ԱՄՆ ՄԶԳ
		2. Լրատվամիջոցները և ՔՀԿ-ի տեղեկացում իրական սեփականատիրոջ բացահայտման վերաբերյալ	a) ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար իրազեկության բարձրացման միջոցառումներ իրական սեփականատիրոջ բացահայտման վերաբերյալ	Սեպտեմբեր 2019	ԱՄՆ ՄԶԳ
VII	ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի հրապարակում (2019թ. նոյեմբեր)	1. Զեկույցը լայն և համակողմանի լուսաբանվում է զանգվածային լրատվամիջոցների կողմից	a) Կրկնել III.1.a-d գործողությունները, կենտրոնանալով ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի վրա	Նոյեմբեր 2019	Ֆինանսավորում չի պահանջում
		2. Ազդակիր համայնքների, ՔՀԿ-ների, արդյունահանող ոլորտի, ակադեմիական շրջանակի, փորձագետների ներգրավվածություն	a) Տարածաշրջանային/մարզային հանդիպումներ	Նոյեմբեր-դեկտեմբեր 2019	Համաշխարհային բանկ
VIII	Երկրորդ զեկույցին հաջորդող ժամանակահատված (ԲՇԽ-ի նոր անդամների ընտրություն և սեփականատ	1. Նոր անդամների մասին տեղեկատվության տրամադրում	a) Սոցիալական մեդիայում և էլեկտրոնային այլ հարթակներում հրապարակումներ	Նոյեմբեր-դեկտեմբեր 2019	Ֆինանսավորում չի պահանջում
7	«Կիպրահայեր»	http://www.hayem.org/en	ayo@cyprusarmenians.com	(+357) 22454540	Կիպրոս
8	«Ազատություն» ռադիոկայան	https://www.azatutyun.am/	armenian@rferl.org	+420221122435	Չեխիայի Հանրապետություն
9	«Յուսաբեր» օրաթերթ	https://www.facebook.com/pg/Housaper-Daily-477643769062432/posts/?ref=page_internal	housaper@ie-eg.com	202 - 25776857	Եգիպտոս
10	«Ֆրանս-Արմենի»	http://www.france-armenie.fr/fr/ https://www.facebook.com/FranceArmenie	veronique@france-armenie.fr	04 72 33 24 77	Ֆրանսիա
11	«Նուվել դԱրմենի»	http://www.armenews.com/	administration@armenews.com	33 1 55 37 97 96	Ֆրանսիա
12	Akhaltskha.net	http://akhaltskha.net/	info@akhaltskha.net	+995 593 98 13 37	Վրաստան
13	«Ալիք մեդիա»	aliq.ge		+995 322 93 23 00	Վրաստան
14	«Ազատ օր»	http://azator.gr/	info@azator.gr	210 95 75 011	Հունաստան
15	«Ալիք»	http://www.alikonline.ir/	info@alikonline.ir	(+98-21) 88768567 - 88761154	Իրան
16	«Comunit AArmena»	http://www.comunitaarmena.it/	email@comunitaarmena.it	3476366517	Իտալիա
17	«Արարատ» օրաթերթ	http://araraddaily.com/Araradnew/Ararad-Daily-Newspaper-Armenian-News-Lebanese-Press-%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80/	Araradorarert@gmail.com	01-565599	Լիբանան
18	Araratonline.com	http://www.araratonline.com/	redactia@araratonline.com	(4021) 314.67.83	Ռումինիա
19	«Ноев Ковчег»/Նոյան Տապան	http://noev-kovcheg.ru/	6894190@mail.ru 0897NK@gmail.com	+7 (495) 369-06-65	Ռուսաստան
20	«Երկրամաս»/Երկրամաս	http://www.yerkramas.org/	info@yerkramas.org	(861) 267-17-98 8-918-026-24-46, 8-918-32-34-256	Ռուսաստան
21	ACC-UK	http://www.accc.org.uk/	info@accuk.org.uk		Միացյալ Թագավորություն
22	«Արարատ», ՀԲԸՄ ամսագիր	http://araratmagazine.org/ https://www.facebook.com/araratmagazine	https://www.facebook.com/araratmagazine		ԱՄՆ
23	«Ասբարեզ»	http://asbarez.com/arm/	asbareznews@asbarez.com, english@asbarez.comeditor@asbarez.com	(323) 284-9222	ԱՄՆ
24	«Հայրենիք» շաբաթաթերթ	https://hairenikweekly.com/	hairenikweekly@hairenik.com	(617) 926-3974	ԱՄՆ
25	«Մասիս փոստ»	https://massispost.com/	info@massispost.com	(626) 797-7680	ԱՄՆ
26	«Օրակարգ» լուրեր և հրատարակություններ	http://www.oragark.com/armenian/	info@oragark.com editor@oragark.com	(818) 649-2014	ԱՄՆ
27	«Հայկական հայելի-դիտակետ»	https://mirrorspectator.com/	editor@mirrorspectator.com	617-924-4420	ԱՄՆ
28	«Հայ դիտորդ»	http://www.thearmenianobserver.com/	okesh@aol.com	323-467-6767	ԱՄՆ

29	«Հայկական շաբաթաթերթ»	https://armenianweekly.com/	editor@armenianweekly.com	1-617-926-3974, 1-617-926-3976	ԱՄՆ
30	«Կալիֆոռնիայի սուրհանդակ»	http://www.thecaliforniacourier.com/	http://www.thecaliforniacourier.com/contact-page/	(818) 409-0949	ԱՄՆ
31	«ԱՄՆ-ում ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔ»	http://www.armenianlife.com/	usarmenianlife@gmail.com	(818) 241-5777	ԱՄՆ

9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

#	Լրատվամիջոցի անվանում	Վեբ-կայք	Էլ. փոստ	Հեռախոսա համար
1.	Financial Times	*www.ft.com*	fte.subs@ft.com	+800 07 05 6477
2.	International Business Times	http://www.ibtimes.com	info@ibtimes.com	+1 646 867 7100
3.	Barron's	https://www.barrons.com	support@barrons.com	1-800-544-0422
4.	Bloomberg	https://www.bloomberg.com	info@bloomberg.net globalrecruiting@bloomberg.com	
5.	Reuters	https://www.reuters.com	info@reuters.com John.Toth@thomsonreuters.com Gabrielle.Powell@thomsonreuters.com	646-223-5707 415-344-6017
6.	Fortune	http://fortune.com	fortunemail_letters@fortunemail.com time-fmg-pr@timeinc.com Advertising_contact@timeinc.com	212 522 4800
7.	Investor's Business Daily	https://www.investors.com	IBDNews@investors.com	+1 800-831-2525
8.	Industry Week	http://www.industryweek.com	iwinfo@industryweek.com	+1 216 696 7000
9.	Financial Times	http://www.industryweek.com	productplacement@ft.com PartnershipRequests@ft.com	+44 20 7873 3000
10.	Market Watch	https://www.marketwatch.com	orders@marketwatch.com	1-888-485-2378
11.	Global Investor Group	https://globalinvestorgroup.com	tim.willmott@globalinvestorgroup.com	+44 (0)20 7779 8999 +44 20 7779 7216
12.	The Street	https://www.thestreet.com	James.Freiman@thestreet.com	+1 212 321 5000
13.	Institutional Investor	https://www.institutionalinvestor.com	Sam.knox@institutionalinvestor.com	+1 212 224 3160 + 1 212 224 3155
14.	Yahoo Finance	https://finance.yahoo.com	https://www.oath.com/advertising/	408-349-5070
15.	Google Finance	https://finance.google.com/finance	press@google.com	1-855-601-6020
16.	The Wall Street Journal	https://www.wsj.com	support@wsj.com WSJplus@wsj.com.	+1 212-416-2000
17.	Harvard Business Review	https://hbr.org	customerservice@harvardbusiness.org	617 783 7500
18.	Forbes	https://www.forbes.com	jsibley@forbes.com	212 367-2621
19.	The Economist	https://www.economist.com	alanpradera@economist.com	+41 (0) 22 5662 483
20.	Globe Investor	https://www.theglobeandmail.com/investing	advertising@globeandmail.com	1-866-999-9237
21.	Business Insider	http://www.businessinsider.com	growthsales@businessinsider.com	

10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաղորդակցության վերը նշված որոշ միջոցներ հասանելի կդառնան տարբեր կազմակերպություններին անդամակցելու միջոցով: Օրինակ, ստորև բերված կազմակերպությունների անդամները կարող են բովանդակային նյութեր տրամադրել այդ կազմակերպությունների տեղեկագրերի և մամլո միջոցառումների համար.

- «GOXI» - http://goxi.org/ («Երկխոսության տարածք, նորարարության և համագործակցության հարթակ նրանց համար, ովքեր ակտիվորեն աշխատում են արդյունահանող ճյուղերում կառավարման հարցերի վրա. . . քննարկեք մեծ գաղափարներ, կիսվեք կարծիքներով և տեղեկատվությամբ, կապ հաստատեք ոլորտում ակտիվորեն աշխատող և նմանատիպ մարտահրավերների հետ գործ ունեցող այլ անձանց հետ, սովորեք, թե ինչ է կատարվում աշխարհում, հայտարարեք ձեր մասնակցությամբ նախաձեռնությունների մասին և դրանց իրագործման նպատակով համագործակցեք մյուսների հետ»:)

- Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդ (ՀՄՄԽ) -- https://www.icmm.com/en-gb («հանուն անվտանգ, արդար և կայուն հանքարդյունաբերական ոլորտի գործող միջազգային կազմակերպություն»)

- Հանքարդյունաբերության, մետալուրգիայի և հետախուզման ընկերակցություն (ՀՄՀԸ) -- https://www.smenet.org/ («Հանքարդյունաբերության, մետալուրգիայի և հետախուզման ընկերակցությունը (ՀՄՀԸ) մասնագիտական կազմակերպություն է (շահույթ չհետապնդող), որն ունի ավելի քանի 100 երկրի հանքարդյունաբերական ոլորտում ներգրավված ավելի քան 15,000 մասնագետների: ՀՄՀԸ-ի անդամներ են ինժեներներ, երկրաբաններ, մետաղագործներ, կրթության ոլորտի աշխատողներ, ուսանողներ, հետազոտողներ: ՀՄՀԸ-ն պաշտպանում է համաշխարհային հանքարդյունաբերական և ստորգետնյա շինարարական համայնքի շահերը տեղեկատվության փոխանակման և մասնագիտական զարգացման միջոցով»:)

11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ, ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

Կան բազմաթիվ միջազգային հանդիպումներ և համաժողովներ, որտեղ Հայաստանից մեկնած մասնակիցները կարող են պրեզենտացիաներ ներկայացնել, ներգրավվել քննարկումներում և միջազգային գործընկերություններ ձևավորել: ԱՃԹՆ-ի նպատակներին ամենաանմիջականորեն առնչվող հարթակը ԱՃԹՆ խորհրդի նիստերն են, որոնք տեղի են ունենում տարեկան երկուսից չորս անգամ (https://eiti.org/about/board-meetings): 2018թ. -ին նախատեսված մնացած հանդիպման ժամանակացույցը ստորև՝

- ԱՃԹՆ միջազգային խորհրդի 40-րդ նիստ, հունիսի 28-29, 2018թ. , Բեռլին, Գերմանիա

Բացի այդ, կան հանքարդյունաբերական հարցերով տարեկան համաժողովներ և գիտաժողովներ, որտեղ կարող են ներկայացվել և քննարկվել ԱՃԹՆ-ին առնչվող հարցեր: Խորհուրդ է տրվում հնարավորության դեպքում մասնակցել այս միջոցառումներին և անպայման ներկայացնել Հայաստանում ԱՃՆ զարգացումները: Ներքևում նշված ցանկը ներկայացնում է 2018թ-ի համար նախատեսված միջոցառումների ժամանակացույցը, որոնցից շատերը տարին մեկ անգամ իրականացվող միջոցառումներ են, որոնք տեղի են ունենալու նաև հաջորդ տարիներին: Ստորև ներկայացվում են այն միջոցառումները, որոնց կարող են մասնակցել և նյութեր ներկայացնել նաև մասնակիցներ Հայաստանից.

- Որոնողների և շահագործողների կանադական ասոցիացիա (PDAC) 2018թ. -ի համաժողով, մարտի 4-7, 2018թ. , Տորոնտո, Կանադա (http://www.pdac.ca/convention): (Տարեկան, հիմնականում տեղի է ունենում մարտ ամսին):

- Ասխենի միջազգային հանքարդյունաբերական գիտաժողով, մայիսի 23-24, 2018թ. , Ասխեն, Գերմանիա (http://www.aims.rwth-aachen.de/call-for-paper): (Տարեկան, հիմնականում տեղի է ունենում մայիս ամսին):

- Հանքարդյունաբերական ներդրումներ Եվրոպա (2րդ տարեկան), հունիսի 6-7 2018թ. , Ֆրանկֆուրտ, Գերմանիա (https://www.mininginvestmenteurope.com/): (Տարեկան, առաջին տարին տեղին է ունեցել դեկտեմբերին, երկրորդ տարին՝ հունիսին):

- Հանքարդյունաբերության համաշխարհային կոնգրես, հունիսի 19-22, 2018թ, Աստանա, Ղազախստան (https://www.wmc2018.org/en/congress/about-congress): (Տեղի է ունենում 2-3 տարին մեկ, տարբեր ամիսների):

- Բաց տվյալների միջազգային 5-րդ համաժողով, սեպտեմբերի 21-22, 2018թ, Բուենոս Այրես, Արգենտինա (http://opendatacon.org, https://twitter.com/opendatacon): (Տեղի է ունենում տարին երկու անգամ, տարբեր ամիսների):

- 18-րդ միջազգային հակակոռուպցիոն համաժողով, հոկտեմբերի 22-24, 2018թ. , Կոպենհագեն, Դանիա (Թրանսպարենսի Ինթերնեշնլ՝ https://iaccseries.org/about/):(Հիմնականում տեղի է ունենում տարին երկու անգամ աշնանը, թեպետ եղել է մեկ բացառություն):

Հանքարդյունաբերության հետ առնչվող համաժողովների և սեմինարների ամբողջական ցանկը հասանելի է հետևյալ հղումով՝http://www.infomine.com/events/:

12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են միջազգայնորեն հաղորդակցվել բազմաթիվ միջազգային ՀԿ-ների, շահերի պաշտպանության խմբերի և ցանցերի միջոցով: Ստորև ներկայացված են այս կազմակերպություններից կամ ցանցերից մի քանիսը: Այս միջազգային կազմակերպությունների և ցանցերի հետ շփումները կհզորացնեն Հայաստանի քաղաքացիական հասարակությանը և նրանց հնարավորություն կընձեռեն միջազգային հաղորդակցություն ծավալել ՀՀ ԱՃԹՆ-ի շուրջ:

- «Publish What You Pay» (PWYP) -- http://www.publishwhatyoupay.org/ («քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ)՝ անդամակցության սկզբունքի վրա հիմնված միջազգային կոալիցիա ավելի քան 40 երկրներում, որոնք միավորվել են հանուն ավելի բաց և հաշվետվողական արդյունահանող ոլորտի, որպեսզի նավթից, գազից և հանքարդյունաբերությունից ստացված եկամուտները բարելավեն կանանց, տղամարդկանց և երիտասարդության կյանքը ռեսուրսներով հարուստ երկրներում, և որպեսզի արդյունահանումը իրականացվի պատասխանատու կերպով, որից կշահեն թե երկրները, թե իրենց քաղաքացիները»:)

- «IndustriALL»համաշխարհային միություն -- http://www.industriall-union.org/sectors-list?sectors=Base+metals («IndustriALL» համաշխարհային միությունը ներկայացնում է հանքարդյունաբերության, էներգետիկայի և արդյունաբերության ոլորտների 50 մլն աշխատողների 140 երկրներում, որը ամբողջ աշխարհում պայքարում է ավելի լավ աշխատանքային պայմանների և արհմիությունների իրավունքների համար»:)

- Բնական ռեսուրսների կառավարման ինստիտուտ (ԲՌԿԻ) -- https://resourcegovernance.org/ (ԲՌԿԻ-ն անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը տրամադրում է քաղաքականության հարցերով խորհրդատվություն և իրականացնում շահերի պաշտպանություն: Նրանք իրենց գիտելիքներով և փորձով ազատորեն կիսվում են քաղաքականություն մշակողների, հաշվետվողականության հարցերով դերակատարների հետ և մասնակցում են միջազգային նորմերի կատարելագործմանն ուղղված համաշխարհային արշավին: «Մենք, մասնավորապես, կարող ենք նախաձեռնել բարեփոխումներին միտված երկխոսություն և ներգրավվել կառուցողական քաղաքականության քարոզչության գործում»:)

- «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) -- https://www.transparency.org/ (ԱՃԹՆ-ի պաշտոնական աջակից ողջ աշխարհում)

- Բաց հասարակության ինստիտուտ (ԲՀԻ) -- https://www.opensocietyfoundations.org/ (ԱՃԹՆ-ի պաշտոնական աջակից ողջ աշխարհում)

- «Գլոբալ Ուիթնես» -- https://www.globalwitness.org/en/ (ԱՃԹՆ-ի պաշտոնական աջակից ողջ աշխարհում: «Համաշխարհային քաղաքական և տնտեսական համակարգի պայմաններում շրջակա միջավայրի և մարդու իրավունքների ամենավատ չարաշահումներն աշխարհում տեղի են ունեցել բնական ռեսուրսների շահագործման և կոռուպցիայի արդյունքում: «Գլոբալ Ուիթնես»-ը պայքարում է սրա դեմ: Մենք իրականացնում ենք ցավոտ հետաքննություններ, բացահայտում ենք չարաշահումներ և փոփոխությունների կոչ ենք անում: Մենք անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն ենք և հանուն արդարության մեր պայքարում համագործակցում ենք մեր գործընկերների հետ ողջ աշխարհում»:)

- Ադամ Սմիթի Ինստիտուտ - https://www.adamsmith.org/ (Ադամ Սմիթի Ինստիտուտը աշխարհի առաջատար գիտահետազոտական կենտրոններից մեկն է, աշխարհում զբաղեցնում է 2-րդ տեղը

ներքին քաղաքականության տնտեսական հետազոտական կենտրոնների շարքում և 2-րդը աշխարհում Փենսիլվանիայի համալսարանի կողմից անկախ հետազոտական կենտրոնների շարքում: Շահույթ չհետապնդող և անկուսակցական, այն աշխատում է ազատ շուկայի և նեոլիբերալ գաղափարների խթանելու ուղղությամբ՝ հետազոտությունների, հրապարակումների, լրատվամիջոցների հետ աշխատանքի և կրթության միջոցով:

- «Օքսֆամ» -- https://www.oxfam.org/ (ԱՃԹՆ-ի պաշտոնական աջակից ողջ աշխարհում)
- «Կարիտաս» -- https://www.secours-catholique.org/ (ԱՃԹՆ-ի պաշտոնական աջակից ողջ աշխարհում)

13. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնագիտական հրապարակումները նպատակաուղղված են փորձագետների, մասնագետների, ոլորտի աշխատողների և քաղաքականություն մշակողների թիրախային խմբերի հետ հաղորդակցությանը: Ստորև ներկայացված են հրատարակությունների հղումներ, որոնք կարող են օգտագործել ՀՀ ԱՃԹՆ-ն, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, արդյունահանող ոլորտը, կառավարությունը, ակադեմիական շրջանակներն ու այլոք.

- Հանքարդյունաբերության ամսագիր -- http://www.mining-journal.com («Հանքարդյունաբերական ներդրումների և գործարար ոլորտի աշխարհի առաջատար ամսագիր, որը լուսաբանում է ոլորտի բոլոր ասպեկտները»)

- Mining.com -- http://www.mining.com/ («Առաջատար թվային հրատարակություն, որն անդրադառնում է համաշխարհային հանքարդյունաբերության հարցերին»)

- «InfoMine» (Ամսագրերի և թերթերի տվյալների բազա) -- http://www.infomine.com/library/links/508/publications/magazines.and.newspapers.aspx

- «InfoMine» (Լրագրերի տվյալների բազա) -- http://www.infomine.com/library/links/505/publications/journals.aspx

14. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառավարման խորհրդատվական ընկերությունները կարող են տեղեկատվության կարևոր օղակ հանդիսանալ միջազգային ներդրողների համար, որոնք ցանկանում են Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտի, կանոնակարգումների ու պետական բարեփոխումների մասին իմանալ ավելին: Նման խորհրդատվական կազմակերպությունների թիվը մեծ է: Ստորև ներկայացված են համաշխարհային մասշտաբով գործող նման չորս մեծ ընկերությունների տվյալներ.

- «McKinsey» -- https://www.mckinsey.com/industries/metals-and-mining/our-insights («McKinsey»-Մոսկվայի գրասենյակի ավագ գործընկերն է Ավետիք Չալաբյանը, ով ղեկավարում է ընկերության համաշխարհային գործունեությունը մետաղների մասով)

- «Deloitte» -- https://www2.deloitte.com/global/en/pages/energy-and-resources/topics/mining.html?icid=top_mining(««Deloitte»-ի՝ հանքարդյունաբերական հարցերով համաշխարհային թիմն առաջարկում է . . . հանքարդյունաբերության ոլորտի փորձ»)

- «EY Metals» -- http://www.ey.com/gl/en/industries/mining---metals

- «PWC Global» -- https://www.pwc.com/gx/en/industries/energy-utilities-resources/mining-metals.html

15. ԱՃԹՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԹ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընտրել ենք հաղորդակցության ռազմավարությունների 8 օրինակ և դրանք ուսումնասիրել ենք հետևյալ 2 տեսանկյունից.

1. Կառուցվածք (էջերի քանակ, ընկալելիության աստիճան, կազմակերպությունների ցանկերի առկայություն, ստուգման և գնահատման հնարավորություն, օրինակելի գործողությունների ծրագիր)
2. Բովանդակություն (միջոցներ, հաղորդակցության միջոցառումներ թիրախային խմբերի համար, կայքի վերաբերյալ առաջարկություններ)

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆԻԳԵՐԻԱ	ԳԵՐՄԱՆԻԱ	ԼԻԲԵՐԻԱ	ՄԹ	ՂԱԶԱԽՍՏԱՆ	ԱԴՐԲԵՋԱՆ	ԳԱՆԱ	ԱԼԲԱՆԻԱ
Էջ	**46**	**53**	**12**	**5**	**5**	**13**	**40**	**10**
Պարզ (դյուրըմբռնելի)	Այո	Ոչ	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո
Նպատակներ	Այո	Այո	Այո	Այո	Ոչ	Այո	Այո	Այո
Հաղորդակցության միջոցներ (ուղիղ/անուղղակի)	Ոչ	Ոչ	Այո	Այո	Այո	Այո	Այո	Ոչ
Հաղորդակցության բաժանում (ներքին/ազգային/միջազգային)	Այո	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո	Այո	Ոչ
Կայք	Այո	Այո	Այո	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
Գործողությունների ծրագիր	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո	Այո	Այո	Այո
Ստուգում և գնահատում	Այո	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո	Այո	Այո
Հանքարդյունաբերական ընկերությունների ցանկ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
ՀԿ-ների ցանկ	Ոչ	Այո	Այո	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
Առաջարկվող մամուլ	Այո	Ոչ	Այո	Ոչ	Այո	Ոչ	Ոչ	Ոչ
Բյուջե	Այո	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո	Ոչ
ՀՌ հղում		https://www.d-eiti.de/wp-content/uploads/2016/12/2016_10_26_DEITI_Kommunikationsstrategie_EN_cleared-version.pdf	http://archive.resourcegovernance.org/sites/default/files/Liberia_communication_strategy.pdf https://ru.scribd.com/document/190660672/LEITI-Communications-2013-15	https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/484744/Updated-EITI_Communications_Plan-_Dec-April_2016-1.pdf	http://eiti.geology.gov.kz/images/stories/IPD0/mediaplan/mediaplan2017.pdf	http://eiti-ngo-azerbaijan.org/wp-content/uploads/2015/04/Azerbaijan_EITI_NGO_Coalition_Communication_Strategy_en_2014.pdf	https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&cad=rja&uact=8&ved=0ahUKEwjXk7rA4ZzWAhWCsxQKHaD8BXcQFggkMAA&url=https%3A%2F%2Fresourcegovernance.org%2Fsites%2Fdefault%2Ffiles%2FGhana%2520EITI%2520Communication%2520Strategy.doc&usg=AFQjCNG41aQ284jCnD1Ij9dbZpe0tn276w	http://www.albeiti.org/wp-content/uploads/2014/11/Strategjia-e-Komunikimit-anglisht-271114.pdf

Որոշ երկրներ (Ալբանիա, ՄԹ) մշակել են համառոտ և հստակ հաղորդակցության ռազմավարություն, որտեղ տրամադրում են ընդհանուր ուղենիշներ հաղորդակցության բաժնի/մասնագետի համար:

Գերմանիայի ռազմավարությունն ունի ավելի բարդ կառուցվածք, որի 3 տարբեր հատվածներ ունեն համընկնումներ ժամկետների և ռազմավարության տարբեր բաժիններում ներառված տեղեկությունների առումով (այդպիսով բարդացնելով նաև դրա իրականացումը): Ղազախստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հասանելի է մամուլի գործողությունների ծրագիրը ռուսերեն լեզվով: Այն նշում է հոդվածների թեմաները, ամսաթվերը և այն թերթը/ամսագիրը, որտեղ դրանք կհրապարակվեն:

16. ԱՄՆ ՄԶԳ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

Հիմնական ուղերձները ըստ թիրախային լսարանի

General Key message: The Enhanced Transparency in the Mining Sector Project promotes transparency and accountability in Armenia's mining sector through assisting the efforts of the Government of Armenia in joining the Extractive Industries Transparency Initiative (EITI) and digitizing the data of the Republican Geological Fund.

Ընդհանուր ուղերձ. «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման» ծրագիրը նպաստում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը՝ օժանդակելով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ) միանալու ՀՀ կառավարության ջանքերին ու ՀՀ երկրաբանական ֆոնդի տվյալների թվայնացմանը:

Key message for the public at large: The purpose of this project is to increase the transparency of government operations and make accessible the public information available in government bodies. By dint of this project huge amount of sector-related data will be accessible to the wider public being a useful resource for policy makers, interested businessmen and civil society representatives, researchers and academic institutions, journalists and citizens.

Ուղերձ լայն հասարակության համար. Ծրագրի նպատակն է բարձրացնել կառավարության գործողությունների թափանցիկությունը և մատչելի դարձնել պետական մարմիններում տեղակայված հանրային տեղեկությունները: Այս ծրագրի շնորհիվ ոլորտին առնչվող հսկայական քանակությամբ տվյալներ հասանելի կդառնան լայն հասարակության համար՝ օգտակար ռեսուրս հանդիսանալով քաղաքականություն մշակողների, շահագրգիռ գործարարների և քաղաքացիական հասարակության, գիտական հաստատությունների ներկայացուցիչների, հետազոտողների, լրագրողների ու քաղաքացիների համար:

Key message for the state agencies and partners: The Enhanced Transparency in the Mining Sector Project promotes improvement of the mining sector governance and investment climate, reduction of corruption, improvement of Armenia's international reputation through transparent and accountable management of the mining sector.

Ուղերձ պետական մարմինների և գործընկերների համար. «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման» ծրագիրը նպաստում է հանքարդյունաբերության ոլորտի կառավարման համակարգի և ներդրումային միջավայրի կատարելագործմանը, կոռուպցիայի կրճատմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարելավմանը՝ հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկ և հաշվետու կառավարման միջոցով:

Key message for extractive business sector: The Enhanced Transparency in the Mining Sector Project promotes improvement of the investment climate, reduction of reputational, financial and legal risks, as well as setting equal rules of game for the business.

Ուղերձ արդյունահանող ոլորտի ընկերությունների համար. «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման» ծրագիրը նպաստում է ներդրումային միջավայրի կատարելագործմանը, հեղինակության, ֆինանսական և օրենսդրական ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև բիզնեսի համար հավասար խաղի կանոնների սահմանմանը:

Key message for media: The Enhanced Transparency in the Mining Sector Project promotes strengthening of the Government and company systems, informing public debate and promoting understanding of the management of natural resources and availability of data.

Ուղերձ ԶԼՄ-ների համար. «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման» ծրագիրը նպաստում է կառավարության և ընկերությունների համակարգերի հզորացմանը, հանրային քննարկումների համար տեղեկություններ տրամադրելուն, բնական ռեսուրսների կառավարման ընկալման մակարդակի բարձրացմանը և տվյալների հասանելիության ապահովմանը:

Key message for CSOs: The Enhanced Transparency in the Mining Sector Project promotes fighting corruption and illicit financial flows, improvement of accountability of the Government and companies, enhancing public trust through active informed dialogue and participation.

Ուղերձ ՔՀԿ-ների համար. «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման» ծրագիրը նպաստում է կոռուպցիայի և ապօրինի ֆինանսական հոսքերի դեմ պայքարին, կառավարության և ընկերությունների հաշվետվողականության բարձրացմանը, բարձրացնում հանրային վստահությունը ակտիվ և տեղեկացված երկխոսության ու մասնակցության միջոցով:

17. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԱՃԹՆ-Ի ԿԱՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայումս ՀՀ ԱՃԹՆ-ին վերաբերող տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ կառավարության կայքէջում՝ ԱՃԹՆ-ին հատկացված անկյունում (www.gov.am/en/eiti/): ՀՀ ԱՃԹՆ կայքի ամբողջական մեկնարկից հետո բոլոր փաստաթղթերն ու տեղեկատվությունը կտեղադրվեն նոր կայքում:

ԱՃԹՆ կայքը ամբողջապես պատրաստ լինելուն պես կդառնա ՀՀ ԱՃԹՆ հաղորդակցության ռազմավարության առանցքային տարրերից մեկը: Կայքը պետք է լինի բոլոր տեսակի հաղորդակցության միջոցառումների համար(ներքին, ազգային և միջազգային) և դրանց համապատասխան թիրախային խմբերի հետ հաղորդակցության առաջնային միջոցը: Այն նաև բրենդավորում իրականացնելու և բրենդավորման նյութերի պահպանման գործիք է (տե՛ս 7-րդ կետը ստորև): Ընդհանրապես Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության հարցերով պետք է հղում կատարվի կայքին:

Հանրային հարցերով ԲՇԽ աշխատանքային խումբը ՀՀ ԱՃԹՆ կայքի բովանդակության, գործառույթների և կարողությունների հետ կապված խնդրել է բովանդակային նյութեր հետևյալ թեմաներով.

1. հիմնական տեղեկատվության և փաստաթղթերի ցանկ, որը հանրամատչելի կերպով պետք է տեղադրվի կայքում
2. համապատասխանություն ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին՝ կապված բաց տվյալների ձևաչափի հետ
3. ընկերությունների և կառավարության կողմից տվյալների անվտանգ և վստահելի փոխանցում՝ ապահովելու համար անկախ ադմինիստրատորին հաշվետվությունների չմիջնորդավորված տրամադրումը
4. տեխնիկական նկարագրություններ, օրինակ, էջի բեռնման արագություն (համակարգչով և հեռախոսով), հեռախոսով բացելու հնարավորություն
5. լեզուներին առնչվող հարցեր— խոսքը գնում է կայքէջի լեզվին (հայերեն, անգլերեն և ռուսերեն) և առանձին հատվածների լեզվին ներկայացվող պահանջների մասին, մասնավորապես, արդյո՞ք պետք է ողջ բովանդակությունը հասանելի լինի բոլոր լեզուներով, թե, հաշվի առնելով թարգմանչական և պահպանման ծախսերը, պետք է լինի ընտրովի մոտեցում, և բոլոր լեզուներով հասանելի լինեն միայն որոշ հատվածներ),
6. վիզուալ գրավչություն և փնտրելու դյուրինություն
7. համեմատություն այլ երկրների և ԱՃԹՆ միջազգային կայքերի հետ:

Հաջորդող բաժիններում անդրադարձել ենք ԲՇԽ-ի այս խնդրանքին և եզրափակիչ մասում ներկայացնում ենք մեր առաջարկությունները կայքէջի վերաբերյալ:

ԿԱՅՔԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐ

ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի համար բովանդակություն և տեխնիկական նկարագրություններ առաջարկելու նպատակով մենք հիմնվել ենք հետևյալի վրա.

a) ԱՃԹՆ քարտուղարության կողմից յուրաքանչյուր երկրի մասին ներկայացված տեղեկատվություն (https://eiti.org/countries)
b) առանձին երկրների կայքերի ուսումնասիրություն (ուսումնասիրվել են ավելի քան 10 կայքեր, սակայն միայն 7-ն են համակարգային գնահատվել)
c) հանրային հարցերով ԲՇԽ աշխատանքային խմբի տեսակետ

ԱՃԹՆ միջազգային քարտուղարության կողմից ԱՃԹՆ-ին առնչվող երկրների մասին ստանդարտ տեղեկատվությունն (https://eiti.org/countries) ընդգրկում է 14 թեմա, թեև կախված տվյալ երկրի կողմից ԱՃԹՆ ստանդարտի իրականացման փուլից՝ կարող են լինել ավելի քիչ թվով թեմաներ: Հայաստանն, օրինակ, վավերացման թեմայի շուրջ ներկայացնելու ոչինչ չունի այս պահի դրությամբ, քանի որ դեռևս չի հրապարակվել ԱՃԹՆ անդրանիկ զեկույցը: Պատկեր Ա-ում բերված է այդ 14 ստանդարտ թեմաների ցանկը:

Պատկեր Ա. Ստանդարտ

- Ընդհանուր ակնարկ
- Նորություններ, բլոգեր և այլ
- Հարկային և իրավական շրջանակ
- Իրական սեփականատերերի բացահայտում
- Արդյունահանում
- Եկամուտների հավաքագրում
- Եկամուտների բաշխում
- Սոցիալական ծախսեր
- Նորարարություն
- Իրականացում
- Վավերացում
- Երկրի գրանցած առաջընթացը
- ԱՃԹՆ զեկույցներ և այլ կարևոր փաստաթղթեր
- Կապ

Նման ձևաչափով տեղեկություններ ունենալը մի շարք առավելություններ ունի: Միջազգային քարտուղարության կողմից առաջարկված ձևաչափի օգնությամբ միջազգային դիտորդները, լրագրողները և այլոք կարող են հեշտությամբ գտնել ՀՀ ԱՃԹՆ-ի մասին հիմնական տեղեկությունները: Այն նաև դյուրին է դարձնում ԱՃԹՆ ստանդարտի գլխավոր պահանջների շուրջ գրանցված առաջընթացին հետևելու գործընթացը:

Ստանդարտ թեմաներից բացի, համակարգային կերպով գնահատվել են յոթ երկրների ԱՃԹՆ կայքեր: Ուսումնասիրվել է դրանց բովանդակությունը (աղյուսակ Ա) և օգտատիրոջն առաջարկվող ընդհանուր փորձառությունը (աղյուսակ Բ): Ինչ վերաբերում է բովանդակությանը, բոլոր յոթ կայքերն ունեցել են «ԱՃԹՆ ստանդարտի մասին», «Ազգային ԱՃԹՆ-ի մասին», «ԲՇԽ աշխատակարգ և նիստերի արձանագրություններ» և «Հրապարակումներ» վերնագրերով հղումներ իրենց համապատասխան տեղեկատվությամբ: Գրեթե բոլորը կիրառել են ինֆոգրաֆիկա և տվյալների վիզուալ պատկերում, թեև ոմանց մոտ դա ավելի արդյունավետ է ստացվել, քան մյուսների մոտ: Միակ բացառությունը Գերմանիան է, ինչը հասկանալի է, քանի որ իրենց կայքի ուսումնասիրման պահին (2017թ.-ի օգոստոս) դեռևս չէին ստացվել տվյալներ և հաշվետվություններ:

Տվյալների ներբեռնում և տաբերակված տվյալներ լայնորեն հասանելի չէին: Մոնղոլիան միակ երկիրն էր, որտեղ տվյալները հասանելի էին ընկերությունների մակարդակում: Բացի այդ, Մոնղոլիան միակ երկիրն էր, որտեղ հաշվետու կազմակերպությունները իրենց տարեկան ԱՃԹՆ հաշվետվությունները ներկայացրել էին առցանց: Այն նաև միակ երկիրն էր, որտեղ համապատասխան պայմանագրերը հասանելի էին առցանց, սակայն, հասկանալիորեն, հասանելի էին միայն մոնղոլերեն տարբերակով:

Զարմանալի էր, որ երկու երկիր՝ Ուկրաինան և Ֆիլիպինները, չունեին կապի կամ արձագանքման համար հղումներ: Բոլորը, բացի ԱՄՆ-ի կայքից ունեին մեդիա անկյուն, և միայն երեք երկիր էին առաջարկում բաժանորդագրվել երկրի ԱՃԹՆ գրասենյակից տեղեկություններ ստանալու համար: Բոլորն ունեին սոցիալական ցանցերի հղումներ, թեև Ինդոնեզիայի պարագայում միայն նշված էր Թվիթերի հղումը:

Աղյուսակ Ա. Յոթ երկրների ԱՃԹՆ կայքերի բովանդակության ուսումնասիրություն

Բովանդակություն Content	Ղազախս. Kazakhstan	Գերմանիա Germany	Ուկրաինա Ukraine	ԱՄՆ USA	Ինդոնեզիա Indonesia	Ֆիլիպիններ Philippines	Մոնգոլիա Mongolia
ԱՃԹՆ սդանդարտ-ի մասին About EITI Standard	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո
Ազգային ԱՃԹՆ-ի մասին About National EITI	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո
ԲՇԽ-ի աշխ. ծրագ. և արձանագր.	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո

MSG Work Plan and meeting minutes							
Զեկույցներ և այլն Publications (annual reports, BO roadmap, etc.)	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո
Ինֆոգրաֆիկա Infographics (summarizing key data, main points)	Այո	Ոչ	Ոչ	Այո	Այո	Այո	Այո
Տվյալների ներբեռնում և մանր. մակ. Data downloads and level of disaggreg.	Ոչ	Ոչ (data port. 9/17)	Ոչ	Այո, ազգային	Հստակ չէ	No	Այո, ընկերություն
Առցանց հաշվետվություն Online e-reporting portal	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո
Պայմանագրեր Contracts	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո
Արձագանքի հնարավորություն Feedback availability (Contact us)	Այո	Այո	Ոչ	Այո	Այո	Ոչ	Այո
Տեխնիկական բառարան և ուղեցույցեր Glossary and guidelines	Այո	Ոչ	Ոչ	Այո	Ոչ	Ոչ	Այո
Մեդիա կենտրոն Press (media) center	Այո	Այո	Այո, թույլ	Ոչ	Այո	Այո	Այո
Բաժանորդագրում Mailing list subscription	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո	Այո	Այո
Սոցյալական ցանցերի հետ կապ Social media links	Այո	Այո	Այո	Այո	Միայն թվիթեր	Այո	Այո
Կայքի հասցե Web address	http://eiti.geology.gov.kz	https://www.d-eiti.de	http://eiti.org.ua/	https://useiti.doi.gov/	http://eiti.ekon.go.id	https://www.ph-eiti.org/	http://www.eitimongolia.mn

Բովանդակությունները ուսումնասիրելուց զատ կայքերը գնահատվել են օգտատիրոջն առաջարկվող փորձառության տեսանկյունից: Արդյո՞ք տեղեկատվություն գտնելը դյուրին է: Էջը արա՞գ է բեռնվում: Արդյո՞ք տեղեկատվությունը հասանելի է միայն տվյալ երկրի լեզվով, թե՞ նաև այլ լեզուներով: Արդյո՞ք այն հասանելի է հեռախոսների համար: Աղյուսակ Բ-ում ամփոփ նկարագրված են յոթ երկրների կայքերի ուսումնասիրման արդյունքում կատարված բացահայտումները ըստ վերոնշյալ պարամետրերի: Ինչ վերաբերում է լեզուներին, բոլոր երկրների կայքերը հասանելի էին իրենց ազգային լեզվով և անգլերենով, բացառությամբ Ֆիլիպինների, որտեղ հասանելի էր միայն անգլերեն լեզվով բովանդակություն: Վիզուալ առումով ամենաբարդը Մոնողոլիայի կայքն էր, ինչը նվազեցնում էր կայքի օգտակարության աստիճանը: Տպավորություն էր, թե օգտատերը պետք է հատուկ մասնագիտացվի կայքից օգտվելու համար:

Բոլոր կայքերն ունեին բեռնման վատ արագություն: Կայքերից չորսը հասանելի էին նաև հեռախոսների համար, իսկ մյուս երեքը հեռախոսների վրա բեռնելիս խնդիրներ էին ունենում: Կարևոր է, որպեսզի կայքը բեռնվի շատ արագ և հասանելի լինի հեռախոսների համար, քանի որ հավանական է, որ օգտատերերի մեծ մասը Հայաստանում կփորձեն կայքի բովանդակությունը դիտել հեռախոսներից: Եթե կայքի դիտումը շատ ժամանակ պահանջի, իսկ բովանդակությունն էլ կարդալու և դրա հետ աշխատելու համար մատչելի չլինի, ապա օգտատերը կայք այլևս չի վերադառնա:

Աղյուսակ Բ. Յոթ երկրների ԱՃԹՆ կայքերի կողմից օգտատիրոջն առաջարկվող փորձառության ուսումնասիրություն

Բովանդակություն Content	Ղազախս. Kazakhstan	Գերմանիա Germany	Ուկրաինա Ukraine	ԱՄՆ USA	Ինդոնեզիա Indonesia	Ֆիլիպին. Philippines	Մոնգոլիա Mongolia
Լեզուների քանակը Number of languages	3 (KZ, EN, RU)	2 (DE, EN)	2 (UK, EN)	1 (EN)	2 (ID, EN)	1 (EN)	2 (MN, EN)
Կայքի վիզուալ պարզությունը Website visual simplicity	Չափավոր	Պարզ	Պարզ	Չափավոր	Չափավոր	Պարզ	Բարդ
Որոնման հեշտությունը Ease of search (site-specific search or site map)	Այո	Այո	Այո	Այո	Այո	Ոչ	Այո
Էջի բեռնման արագություն (սեղանադիր)* Page loading speed (desktop)*	Վատ Poor (41/100)	Վատ Poor (61/100)	Բարելավ. կարիք Needs Work (75/100)	Բարելավ. կարիք Needs Work (72/100)	Վատ Poor (1/100)	Վատ Poor (7/100)	Վատ Poor (36/100)
Էջի բեռնման արագություն (բջջային)* Page loading speed (mobile)*	Վատ Poor (32/100)	Վատ Poor (52/100)	Վատ Poor (64/100)	Վատ Poor (57/100)	Վատ Poor (19/100)	Վատ Poor (5/100)	Վատ Poor (35/100)
Բջջայինհեռ. համատեղելիությունը** Mobile compatibility**	Համատեղելի է Mobile friendly	Համատեղելի չէ. ա) սղմելու ենթակա տարրերը շատ մոտիկ են, բ) Բովանդակությունն էկրանից լայն է	Համատեղելի չէ. ա) սղմելու ենթակա տարրերը շատ մոտիկ են, բ) Բովանդակությունն էկրանից լայն է, այլ խնդիրներ	Համատեղելի էMobile friendly	Համատեղելի էMobile friendly	Համատեղելի էMobile friendly	Համատեղելի չէ. ա) սղմելու ենթակա տարրերը շատ մոտիկ են, բ) Բովանդակությունն էկրանից լայն է
Կայքի հասցե Web address	http://eiti.geology.gov.kz	https://www.d-eiti.de	http://eiti.org.ua/	https://useiti.doi.gov/	http://eiti.ekon.go.id	https://www.ph-eiti.org/	http://www.eitimongolia.mn

(*) Էջի բեռնման արագությունը չափվել է կիրառելով «Google Developers» և «PageSpeed Insights» գործիքները:Վերջինս չափում է կայքէջի աշխատանքը համակարգչից և հեռախոսից օգտվելու պարագայում: Այն կայք հաճախում է երկու անգամ՝ մեկ անգամ հեռախոսային օգտատիրոջ անունից, հաջորդ անգամ՝ համակարգչային օգտատիրոջ: Հղում՝https://developers.google.com/speed/pagespeed/insights/:«PageSpeed Insights»-ը ստուգում է, թե արդյոք կիրառվել են էջի աշխատանքի ապահովման համար լավագույն տեխնիկական լուծումները և տրամադրում է 0-ից մինչև 100 գնահատական՝ կախված այն բանից, թե էջը հետևյալ երեք դասակարգումներից որին է պատկանում.

Լավ. էջը կիրառում է վերջինիս աշխատանքի համար լավագույն տեխնիկական լուծումները և պետք է կարողանա օգտատիրոջն առաջարկել լավ փորձառություն:

Դեռևս աշխատանքի կարիք ունի. էջում առկա չեն աշխատանքը կազմակերպելու համար որոշ տեխնիկական լուծումներ և հավանաբար օգտատիրոջ փորձառությունը կլինի ժամանակատար:

Վատ. էջը օպտիմիզացված չէ և օգտատիրոջ փորձառությունը կլինի ժամանակատար:

(**) Հեռախոսային համատեղելիությունը չափվել է Գուգլի «Mobile-Friendly Test Tool»գործիքի միջոցով, որը փորձարկում է օգտատիրոջ կողմից կայքէջից օգտվելու հեշտությունը: Փորձարկման արդյունքները ներառում են էկրանի պատկեր այն տեսքով, ինչպիսին այն տեսանելի է Գուգլին, ինչպես նաև նշվում են հեռախոսով օգտագործման հետ կապված խնդիրների ցանկը, եթե այդպիսիք հայտնաբերվել են: Հեռախոսով օգտագործման հետ կապված խնդիրները հարցեր են, որոնք ազդում են տվյալ էջը հեռախոսով այցելող օգտատիրոջ փորձառության վրա (փոքր էկրան), ներառյալ փոքր տառաչափերը (որոնք դժվար են կարդալը փոքր էկրանի վրա) և «Flash»ծրագրի օգտագործումը(որը շատ հեռախոսների կողմից այլևս չի կիրառվում):
Հղում՝https://search.google.com/test/mobile-friendly?utm_source=support.google.com

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանրային հարցերով աշխատանքային խումբը և ՀՀ ԱՃԹՆ-ի համակարգող գրասենյակը խնդիր էին դրել, որ դիտարկենք ԱՃԹՆ հաշվետու բոլոր կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ ստանդարտի պահանջած տվյալների առցանց ներկայացման հետ կապված հնարավորությունները և մարտահրավերները: Հաշվետվությունների առցանց ներկայացման նպատակն է ապահովել ԱՃԹՆ համար կարևոր տվյալների փոխանցման հստակ և ապահով ուղի: Հաշվետվությունների նման ճանապարհով ներկայացումը զգալիորեն կկրճատի անկախ ադմինիստրատորի աշխատանքի ծավալը:

Այս պահի դրությամբ ընդամենը մի քանի երկրներ ունեն այս հնարավորությունը: Մոնղոլիան այդ բացառիկներից է: Հաշվետվությունների ներկայացման նման եղանակը սկզբունքորեն կլինի ավելի վստահելի, ապահով և գաղտնի օգտատերերի համար: Կիբեռանվտանգության պատշաճ միջոցառումների և կրկնօրինակների պահպանման շնորհիվ (յուրաքանչյուր հաշվետվության համար PDF ձևաչափի ստեղծում) նվազեցվում է տվյալների արտահոսքի հավանականությունը:

Ստորև բերված պատկերներում ներկայացվում են հաշվետվությունների առցանց ներկայացման երկու այլընտրանքային տարբերակ: Տարբերակները հիմնականում նույնն են բացառությամբ 1-ին տարբերակի (պատկեր Ա), որտեղ հաշվետու կազմակերպությունները կարող են լրացնել առցանց հաշվետվություն ներկայացնելու ձևաչափը, մինչդեռ տարբերակ 2-ում (պատկեր Բ) նրանք պետք է ներբեռնեն Excel ձևաչափի ֆայլը, լրացնել այն, ապա կրկին վերբեռնել կայք: Ընդհանուր առմամբ ԲՇԽ-ի և ՀՀ ԱՃԹՆ համակարգող գրասենյակի հետ քննարկումների արդյունքում որոշվեց, որ նախընտրելի է տարբերակ 1-, քանզի այն թույլ կտա իրականացնել տվյալների ավելի արդյունավետ վերլուծություն, ավելի ուժեղ որակի հսկողություն և ապահովում:

Պատկեր Ա. ԱՃԹՆ հաշվետու կազմակերպությունների կողմից էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման տարբերակ 1.



Պատկեր Բ. ԱՃԹՆ հաշվետու կազմակերպությունների կողմից էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման տարբերակ 2.



Գերադասելի կլիներ, որ հաշվետվությունների ներկայացման նման եղանակը կիրառվեր նաև այլ պետական հաշվետվությունների նկատմամբ (օրինակ՝ տվյալների փոխանցումը հարկային մարմիններին): Հաջորդ բաժնում ներկայացված են մի քանի առաջարկություններ, որոնք նպատակ ունեն ապահովել առցանց հաշվետվությունների համակարգի հաջողությունը:

ԿԱՅՔԻ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով վերոշարադրյալ վերլուծության վրա՝ ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները ՀՀ ԱՃԹՆ կայքի վերաբերյալ.

Առաջարկություններ կայքի բովանդակության շուրջ.

- **Միջազգային ԱՃԹՆ-ի երկրների կայքերի ստանդարտ թեմաներ** – ՀՀ ԱՃԹՆ կայքում տեղադրել հեշտությամբ գտնվող հղում հետևյալ կայքէջին՝ https://eiti.org/countries՝ օգտագործելով միջազգային ԱՃԹՆ կայքի 14 ստանդարտ թեմաները:
- **ՀՀ ԱՃԹՆ** - տեղադրել օրենսդրական բազան, իրականացման մեխանիզմները, ԲՇԽ փաստաթղթերը, առաջընթացի հաշվետվությունները:
- **Միջազգային ԱՃԹՆ ստանդարտ և քարտուղարություն** – տեղադրել հայերեն ԱՃԹՆ ստանդարտը, այլ լեզուներով հղումներ, հղում միջազգային ԱՃԹՆ կայքին և այլն:
- **Կայքէջի և ներբեռնման հնարավորություններով տվյալների կենտրոն** –Ընդերքօգտագործման թույլտվությունների, արդյունահանման, եկամուտների հավաքագրման և սոցիալական ծախսերի ազգային մակարդակում առցանց կերպով հասանելի և ներբեռնման ենթակա աղյուսակներ (ԱՃԹՆ ստանդարտի բաց տվյալների պահանջին համապատասխան) առաջին տարվա համար:
- **Մեդիա կենտրոն և համայնքային ներգրավման ֆորում (բլոգեր)** – պետք է ներառի ինֆոգրաֆիկա, ՀՏՀ և այլն

- **Էլեկտրոնային փոստով բաժանորդագրում** – ՀՀ ԱՃԹՆ-ից տեղեկագրեր, նորություններ և այլն ստանալու համար
- **Սոցիալական մեդիայի հղումներ** – Ֆեյսբուք, Թվիթեր, Ինստագրամ և այլն
- **Կապի և արձագանքման հնարավորություն**–ընդգրկել կոնտակտային տվյալներ և մեկնաբանություններ ուղարկելու հնարավորություն
- **ԱՃԹՆ մասին ուսուցողական նյութեր** – ներառել ուսուցողական տեսանյութեր և գրականություն ԱՃԹՆ-ի մասին Հայաստանում և ընդհանրապես: Սա հատկապես օգտակար է նոր ընտրված ԲՇԽ անդամների համար

Կայքի օգտատերերի համար հարմարավետության և տեխնիկական նկարագրերի շուրջ առաջարկություններ

- **Կայքի հղումներ** – կայքը պետք է պարունակի ՀՀ կառավարության, ԷԵԲՊՆ, ԲՆ, ՏԿԶՆ, ՏԶՆՆ, ՖՆ, ԱԳՆ, ԱՆ, կենտրոնական բանկի, Բաց կառավարման գործընկերության և Հանրապետական երկրաբանական ֆոնդի կայքէջերի հղումներ
- **Ոչ կառավարական կայքերի հղումներ** – խնդրել Հայաստանին վերաբերող կայքերի և սոցիալական մեդիայի էջերի հղումներ ՀԲ-ից, ՄԱԿ-ից, ԵՄ-ից ԱՄՆ ՄԶԳ-ից, ՄԹ դեսպանատնից և այլն
- **Լեզուներ** – Հայերեն և անգլերեն (առնվազն), ֆինանսների առկայության դեպքում ավելացնել նաև ռուսերեն
- **Համակարգչով և բջջային հեռախոսով բեռնման արագություն** – ավելի արագ, քան 70/100
- **Բջջային հեռախոսի համար հասանելիություն** – ապահովել համատեղելիությունը բջջային հեռախոսի համար, հատկապես հայտնի համայնքային մասնակցության էջերի համար
- **Կայքի քարտեզ և փնտրելու հնարավորություն** – առաջարկել կայքի քարտեզ և ՀՀ ԱՃԹՆ-ի կայքում փնտրելու հնարավորություն

Առաջարկություններ առցանց էլեկտրոնային հաշվետվությունների հնարավորության շուրջ (կցված ՀՀ ԱՃԹՆ-ի կայքին)

- **Առցանց էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացում** – ներառել ընկերությունների և պետական կազմակերպությունների կողմից անկախ ադմինիստրատորին առցանց, չմիջնորդավորված հաշվետվությունների ներկայացման հնարավորություն
- Մանրակրկիտ փորձարկել առցանց էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման հնարավորությունը դրա մեկնարկից առաջ
- Սահմանել հստակ վերջնաժամկետ տվյալների ներկայացման համար
- Տրամադրել **առցանց աջակցություն** էլեկտրոնային փոստի և/կամ զրուցարանի (չաթի) միջոցով
- **Ակտիվ կապի մեջ լինել** հաշվետու կազմակերպությունների հետ՝ հաշվետվության պահանջների և գործընթացների ընկալելիությունն ապահովելու նպատակով
- Հաշվետու կազմակերպությունների և նրանց խորհրդատուների համար (ֆինանսական, հաշվապահական և աուդիտորական ընկերություններ և այլն) իրականացնել վերապատրաստումներ հաշվապահությունների ներկայացման պահանջների, ինչպես նաև հաշվետվությունների առցանց ներկայացման կայքից օգտվելու վերաբերյալ:
- Պատրաստել հաշվետվությունների ներկայացման հստակ **ուղեցույցներ** (անդրադառնալ հաշվարկային և կանխիկ հիմքով հաշվապահական հաշվառման հարցերին, հաշվետվության ենթակա վճարումներին/եկամուտներին և այն)
- Ակնկալվող հարցերին անդրադառնալ կայքում տեղադրված **հաճախակի տրվող հարցերի (ՀՏՀ)** միջոցով
- Ունենալ **այլընտրանքային տարբերակ** այն դեպքերի համար, երբ առցանց էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացումը հասանելի չի լինի տեխնիկական պատճառներով:
- Ապահովել, որ կայքը համապատասխանի **ՀՀ ԱՃԹՆ-ի 2017 թ. դեկտեմբերին ընդունած բաց տվյալների քաղաքականությանը:**[6] Սա նշանակում է, որ ներկայացվող տվյալները պետք է

[6]ԱՃԹՆ-Հայաստանի բաց տվյալների քաղաքականությունը հաստատվել է 2017թ.-ի դեկտեմբերին: Փաստաթուղթը հասանելի է այստեղ՝http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Open_Data_Policy_Armenia_eng.pdf

հանրային գործածման համար հասանելի լինեն Excel ձևաչափով կամ ներբեռնման ենթակա նմանատիպ ձևաչափերով: Ներբեռնման ենթակա նման ֆայլերի պահպանման համար ՀՀ ԱՃԹՆ-ի կայքը կլինի լավագույն լուծումը:

ԱՃԹՆ ՊՈՐՏԱԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՝ ՄՇԱԿՎԱԾ ԱՃԹՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Աշխատանքի ծավալ	Development of Portal for the Extractive Industries Transparency Initiative (EITI) **Արդյունահանող ճյուղերի** թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) համար պորտալի մշակում
Ժամանակահատված:	Հունվար – մայիս 2018
Վայր:	Երևան
Ծրագրի անվանում:	ՄԱՋԾ-ՄԲԿ «Շրջակա միջավայրի կրթություն և շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացում» ծրագիր

Նախաբան
Իրավիճակի նկարագրություն
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որին անդամակցում են 51 երկրներ (01.12.2017թ. դրությամբ):
2017 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում ամրագրված ռազմավարական խնդիրներից են Հայաստանի ճանաչելիության և երկրի նկատմամբ վստահության, ներդրումային գրավչության բարձրացումը, պետություն-մասնավոր հատված համագործակցության խթանումը: ԱՃԹՆ-ի ներդրումը Հայաստանում կարևոր և արդյունավետ քայլ է հանքարդյունաբերության ոլորտում պետության ռազմավարական խնդիրների իրագործման համար:
Արդյունահանող ճյուղի արժեքի շղթայում ն ապահովում է տեղեկատվության բացահայտման կայացած, սակայն միաժամանակ՝ ճկուն մեթոդաբանություն և թույլ է տալիս վերահսկել ներպետական մասշտաբով մասնավոր կազմակերպության կատարած վճարումների և պետության ստացած եկամուտների մասին ինֆորմացիայի հասանելիությունը՝ նավթից, գազից և այլ օգտակար հանածոներից: Այն խրախուսում է երկրներին զարգացնելու հաշվետվողականության իրենց համակարգերը և ԱՃԹՆ-ի տվյալների հավաքագրման ընթացակարգերը: ԱՃԹՆ-ի գործընթացն իրականացնող յուրաքանչյուր պետություն մշակում է տեղեկատվության բացահայտման սեփական ընթացակարգը, որը համապատասխանեցվում է տվյալ երկրի կոնկրետ կարիքներին: Սա ենթադրում է բացահայտման ենթակա տեղեկատվության շրջանակի սահմանում և ուսումնասիրություն, թե տեղեկատվության բացահայտման հարցն ինչպես է ներառված և (կամ) ինչպես է հնարավոր ներառել կառավարության և մասնավոր ընկերությունների պորտալներում՝ արդյունահանող ճյուղի կառավարման բարելավմանն ուղղված համընդգրկուն ջանքերը լրացնելու և ամրապնդելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունը ԱՃԹՆ-ի անդամակցության գործընթացը սկսել է 2015 թվականի հուլիսին՝ ՀՀ վարչապետի պաշտոնական հայտարարությամբ: Կազմվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խումբը (ԲՇԽ)՝ բաղկացած տասնհինգ անդամներից.

- ՀՀ կառավարության վեց ներկայացուցիչ,
- հանքարդյունահանող կազմակերպությունների չորս ներկայացուցիչ,
- քաղաքացիական հասարակության (այդ թվում՝ գիտական համայնքի) հինգ ներկայացուցիչ:

2016 թվականի դեկտեմբերի 26-ին ԲՇԽ-ը հաստատել է 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիրը: Իսկ ՀՀ կառավարարությունը՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ պաշտոնապես ներկայացրել է թեկնածուի կարգավիճակ ստանալու հայտը: 2017 թվականի մարտի 9-ին Բոգոտայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստում հաստատվել է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը: Որոշման մեջ նշվել են հիմնական ուղենիշների հետևյալ ժամկետները.

2017թ. մարտի 9-ին ԱՃՊԵՆ-ն Հայաստանի Հանրապետությանը շնորհում է ԱՃՊԵՆ թեկնածու երկրի կարգավիճակ: ԱՃՊԵՆ-ի ստանդարտի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է իր առաջին ԱՃՊԵՆ-ի զեկույցը հրապարակել թեկնածու երկրի կարգավիճակը ստանալու պահից 18 ամսվա ընթացքում (այսինքն՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 9-ը): Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է 2017 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը հրապարակել մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը: Վավերացումը կսկսվի թեկնածուի կարգավիճակ ստանալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում (այսինքն՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 9-ը): ԲՇԽ-ի ներկայացրած աշխատանքային ծրագրի համաձայն՝ ԱՃՊԵՆ-ի խորհուրդն ակնկալում է, որ Հայաստանը մինչև 2018 թվականի հունվարի 1-ը կհրապարակի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը:

Առաջադրանքի նպատակը

Առաջադրանքի նպատակն է ԱՃՊԵՆ-ի հայաստանյան գործընթացի, հանքարդյունաբերության ոլորտի ֆինանսական հոսքերի թափանցիկության բարձրացման, տվյալների հանրամատչելիության ապահովման համար ստեղծել պորտալ՝ նախատեսելով վերջինիս զարգացման և փոփոխության հնարավորությունը երաշխիքային և ընթացիկ սպասարկման միջոցով:

Տեխնիկական պահանջներ

- Պորտալի տեխնիկական իրագործումը պետք է իրականացվի՝ օգտագործելով լայն տարածում ունեցող PHP ծրագրավորման լեզուն և MySQL տվյալների հիմնապաշարը: Այն պետք է ապահովի համապատասխանելիություն տարբեր օպերացիոն համակարգերում աշխատելիս՝ օպտիմիզացված լինելով Linux կամ այլ UNIX օպերացիոն համակարգերի ընտանիքում աշխատող Apache/nginx վեբ սերվերների համար:
- Պորտալի էջկապը պետք է կատարվի xHTML1.0 լեզվով՝ համապատասխան W3C ստանդարտներին, անհրաժեշտության դեպքում կարող է կիրառվել նաև HTML 5:
- Պորտալի արտաքին տեսքը պետք է լինի գրավիչ, ապահովի առավելագույն գործածելիություն: Կատարողը, պատվիրատուի հետ համագործակցելով, կներկայացնի կայքի մուտքի (գլխավոր) և ներքին էջերի տեսքը (գրաֆիկական դիզայնը) այլընտրանքային տարբերակներով: Պատվիրատուն ողջամիտ ժամանակահատվածում կհաստատի տարբերակներից մեկը կամ (և) կներկայացնի իր առաջարկները և դիտողությունները:
- Պատրաստվող պորտալը պետք է ապահովի առավելագույն համապատասխանելիություն գոյություն ունեցող հիմնական տարածված զննման ծրագրային փաթեթների հետ, ինչպիսիք են Internet Explorer (>=10), Mozilla Firefox, Opera, Safari, Chrome և այլն:
- Պորտալը պետք է լինի եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն): Բոլոր լեզուներով գրված տեքստային ինֆորմացիայի անխափան ցուցադրման համար պորտալը պետք է գործի Unicode (UTF-8) տառաշարի հիման վրա:
- Պորտալը պետք է պատրաստված լինի արձագանքող էջկապով (responsive)՝ ապահովելով առավելագույնս գործածելիություն համակարգչով, բջջային հեռախոսով և պլանշետով օգտագործման ժամանակ):
- Պորտալը պետք է ունենա բովանդակության կառավարման համակարգ, որը հնարավորություն է տալիս հատուկ տեխնիկական գիտելիքներ չունեցող (համակարգչային ծրագրավորման լեզուներին չտիրապետող) անձանց ղեկավարել պորտալի կառուցվածքը, ինչպես նաև համալրել էջերի բովանդակությունը և ստեղծել նոր բաժիններ: Բովանդակության կառավարման համակարգը պետք է ունենա մի քանի՝ տարբեր իրավասություններով, օգտագործողների կողմից պորտալը սպասարկելու հնարավորություն:
- Բովանդակության կառավարման համակարգը և պորտալի առաջնային մասի ծրագրային կոդերը ֆիզիկապես պետք է լինեն տարանջատված: Բովանդակության կառավարման համակարգը հասանելի կլինի միայն համապատասխան թույլտվություններ ունեցող հասցեներից (VPN-ի միջոցով) և պարտադիր կերպով SSL արտոնագրերի առկայությամբ:
- Պորտալը պետք է ունենա գլոբալ որոնման համակարգ, որը թույլ է տալու կատարել որոնում պորտալի ցանկացած բաժնում: Համաշխարհային որոնման համակարգերից այցելություններ ապահովելու համար Պորտալում տեղադրված նյութերը պետք է ունենան SEF համատեղելի հասցեներ: Պորտալում գտնվող տեղեկատվության ներկայացման հարմարավետությունը ապահովելու նպատակով պետք է ստեղծվի որոնման առավել հարմար և արդյունավետ համակարգ, որը իր մեջ պարունակի՝ տեքստային բազմալեզու որոնում, որոնում՝ ըստ ամսաթվի, թեմատիկ որոնում, ընդլայնված որոնման միջոցներ:
- Գործածողը պետք է հնարավորություն ունենա բաժանորդագրվելու պորտալի հաճախ թարմացվող բաժիններին, ինչպիսին է օրինակ մեդիա կենտրոնը: Տվյալ բաժինների բաժանորդագրությունը հասանելի պետք է լինի նաև RSS Feed-երի միջոցով:
- Պորտալի ցանկացած էջի ներքևում պետք է տեղադրվի հատուկ մոդուլ, որը հնարավորություն կտա տարածել տրված էջը սոցիալական ցանցերում, ինչպիսին են Facebook, Twitter, Live Journal, GOXI, Youtube և այլն:
- Համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ստեղծել անսահմանափակ քանակի ստատիկ HTML էջեր:
- Պորտալի կառուցվածքը, արտաքին տեսքը և ծրագրային կոդերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պահանջներին (մասնավորապես, 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ կառավարության N 1521-Ն որոշումը «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին»), և այն պետք է ապահովի առավելագույնս գործածելիություն այցելուների համար և համապատասխանի պատվիրատուի ընդհանուր գունային և ոճային դրույթներին:

- Կատարողը պետք է իրականացնի պորտալի համալիր թեսթավորումը և թեսթավորման ընթացքում հայտնաբերված թերությունների վերացումը:
- Կատարողը պետք է իրականացնի համապատասխան աշխատակիցների ուսուցումը:
- Կատարողը պետք է աշխատանքների վերջնական հանձնում-ընդունում իրականացնելուց հետո իրականացնի պորտալի երաշխիքային սպասարկումը 1 տարի ժամկետով:
- Ընդհանուր պահանջները կրում են նկարագրական բնույթ: Պատվիրատուն իր ներկայացվելիք մասնագրում կարող է ապահովել գերազանցող կամ համանման այլ գործառնական հնարավորություններ:
- Գունային և ոճային լուծումները պետք է համապատասխանեն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության պաշտոնական կայքում (www.eiti.org) տրված լուծումներին:
- Հոսթինգը պետք է ապահովի 99 տոկոսանոց հավաստիությամբ անխափան աշխատանք:
- Պետք է իրականացվի ամենօրյա ավտոմատ պահուստավորում (backup), որպեսզի կայքում տեխնիկական խնդրի (խնդիրների) առաջանալու դեպքում հնարավոր լինի վերականգնել կայքը՝ օգտվելով պահուստավորումից (backup) և ապահովելով կայքի անխափան աշխատանքը:
- Կայքի ստեղծման ընթացքում սույն տեխնիկական առաջադրանքի 20 տոկոսը կարող է անվճար կերպով փոփոխվել:
- Պետք է տեխնիկական ուսուցումներ անցկացվեն կայքի ադմինիստրատորի (ադմինիստրատորների) հետ, և նրանց համապատասխան ձեռնարկ (էկրանի վայրկենական պատկերներով (screenshot) պետք է տրամադրվի:
- Անհրաժեշտության դեպքում պետք է պետական մարմինների պաշտոնական այլ կայքերի կամ տվյալների շտեմարանների հետ փոխգործելիության հնարավորություն ապահովվի, օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հետ:
- Պետք է ապահովվի բովանդակության և տվյալների ներկայացումը բաց տվյալների սկզբունքներին (open data principles) համապատասխան:

Պորտալի առաջարկվող կառուցվածքը.

- Home
- ԱՃԹՆ-ի մասին
  - Ինչ է ԱՃԹՆ-ը, նախաձեռնությանը միանալու օգուտները, ԱՃԹՆ-ի սկզբունքները
  - Անդամակցության գործընթացը
  - Կառավարող մարմինները
  - Իրականացնող պետություններ
  - ԱՃԹՆ-ի ստանդարտ
  - Տեխնիկական բառարան և ուղեցույցներ
- ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթաց
  - Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի նկարագիր
  - Պատմությունը
  - ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարություն
  - Միջազգային գործընկերների աջակցություն
  - ԱՃԹՆ-ի փաստաթղթեր
    - ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիր և գործողությունների պլաններ
    - Հանրային հաղորդակցության ռազմավարություն
    - Ուսումնասիրություններ (Նախնական ուսումնասիրություն, Օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն, Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզ)
    - Հղում ԲՇԽ-ի աշխատակարգին
    - Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանք
    - Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ
- ԲՇԽ
  - ԲՇԽ-ի կազմը և Վարչապետի որոշումը՝ այն հաստատելու մասին
  - ԲՇԽ-ի անդամների ընտրության ընթացակարգերը
  - ԲՇԽ-ի աշխատակարգ
  - ԲՇԽ-ի նիստեր
    - Օրակարգ, արձանագրություններ, առնչվող այլ փաստաթղթեր, լուսանկարներ
  - ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր
- Մեդիա կենտրոն
  - Նորություններ
  - Հոդվածներ և հարցազրույցներ
  - Պատկերասրահ
  - Տեսանյութեր՝
    - Հրապարակում
    - ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական հոլովակներ

- Տվյալների կենտրոն և առցանց հաշվետվության համակարգ
- Օգտակար նյութեր և հղումներ
- Կապ

Բովանդակության կառավարման համակարգ (Content management system)
Մոդուլների նախնական նկարագրություն

- ***Home***

Այս բաժնում վերևում երևում են փոփոխվող նկարներ՝ 3 հատ (առցանց հաշվետվության համակարգ, ԱՃՊՆ-ի ստանդարտ, Երկրաբանական ֆոնդի քարտեզ): Ներկայացվում է նկարների տեսքով, որոնցից բացվում են համապատասխան բաժինները, կայքերը:

Ներքևում տրվում է «Կարևոր փաստաթղթեր» բաժինը, որտեղ ներառվում են 3-4 փաստաթուղթ (ԱՃՊՆ-ի աշխատանքային ծրագիր, Վարչապետի որոշում, Նախնական ուսումնասիրություն և այլն): Նշված ֆայլերը ներկայացվում են անվանումով և կարճ նկարագրությունով՝ հղում տալով դրանց հիմնական տեղակայման վայրին (ԱՃՊՆ-ի փաստաթղթեր, ԲՇԽ): Ներկայացվում են անվանումները, կարճ նկարագրությունները (1 նախադասություն) և սիմվոլ (png ֆայլ):

Հաջորդում է «Նորություններ» ենթաբաժինը, որտեղ ներկայացվում են վերջին 4-5 նորությունների վերնագրերը, նկարները և առաջին տողերը: Նորությունների ամբողջական տեքստը բացվում է համապատասխան բաժնից (Մեդիա կենտրոն): Պետք է նախատեսվի նաև Մեդիա կենտրոնից հիմնական էջում տեղեկություններ ներկայացնելու հնարավորություն:

Ամենաներքևի հատվածը կվերնագրվի Մեդիա և այդտեղ կտրվեն լուսանկարներ և տեսահոլովակներ՝ համապատասխան հղումով (Մեդիա կենտրոն):

Բաժնում պետք է նաև նախատեսված լինի նորություններին բաժանորդագրվելու հնարավորություն, ինչպես նաև հղումներ

սոցիալական կայքերին (Facebook, Youtube, GOXI, Twitter և այլն):

Անհրաժեշտ է նաև նախատեսել միջոցառումները live ցուցադրելու հնարավորություն:

- ***ԱՃՊՆ-ի մասին***
  - Ինչ է ԱՃՊՆ-ը, նախաձեռնությանը միանալու օգուտները, ԱՃՊՆ-ի սկզբունքները
  - Անդամակցության գործընթացը
  - Կառավարող մարմինները
  - Իրականացնող պետություններ
  - ԱՃՊՆ-ի ստանդարտ
  - Տեխնիկական բառարան և ուղեցույցներ

Բոլոր ներկայացված ենթաբաժինները տեքստային են: «Իրականացնող պետությունները» ենթաբաժնում հետևյալ հղումն է տրվում. https://eiti.org/countries: «ԱՃՊՆ-ի ստանդարտ» հատվածում տրվում է ստանդարտի տեքստային ամփոփագիրը և pdf ֆայլի հղումը: Ուղեցույցները ներկայացվում են pdf ֆայլերով:

- ***ԱՃՊՆ-ի հայաստանյան գործընթաց***
  - Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի նկարագիր
  - Պատմությունը
  - ԱՃՊՆ-ի ազգային քարտուղարություն
  - Միջազգային գործընկերների աջակցություն
  - ԱՃՊՆ-ի փաստաթղթեր
    - ԱՃՊՆ-ի աշխատանքային ծրագիր և գործողությունների պլաններ
    - Հանրային հաղորդակցության ռազմավարություն
    - Ուսումնասիրություններ (Նախնական ուսումնասիրություն, Օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն, Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզ)
    - Հղում ԲՇԽ-ի աշխատակարգին
    - Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանք
    - Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ

«Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի նկարագիր» բաժնում կտրվի ոլորտի համառոտ նկարագրությունը՝ մասնաբաժինը և դերը տնտեսության մեջ:

«Պատմություն» բաժնում տեքստային կերպով ներկայացվում է ԱՃՊՆ-ի հայաստանյան գործընթացը: Բացի տեքստային հատվածից այստեղ ներկայացվում է գրաֆիկապես խրոնոլոգիան: Գրաֆիկան ինտերակտիվ պետք է լինի, հնարավորություն տա օրինակ նշված ուղենիշերի պատկերների վրա նշելով բացել այդ իրադարձության մասին տեքստ, նկար, հղում և այլն:

«ԱՃՊՆ-ի ազգային քարտուղարություն» ենթաբաժնում ներկայացվում են քարտուղարության աշխատակիցները (տեքստային), տրվում է նրանց էլեկտրոնային փոստի հասցեները և լուսանկարները:

«Միջազգային գործընկերների աջակցություն» ենթաբաժնում տրվում է տեքստային տեղեկատվություն դոնորների և նրանց կողմից օժանդակության մասին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տեղադրվում են նրանց վերաբերող լուսանկարներ կամ տեսահոլովակներ, մասնավորապես.

- ՄԱԶԾ
- ՄԹ դեսպանություն Հայաստանում
- Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ
- ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ:

«ԱՃԹՆ-ի փաստաթղթեր» ենթաբաժնում ներկայացվում է ստորև բերված ֆայլերի կարճ նկարագրությունները և ֆայլերը.

- ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիր
- Հանրային հաղորդակցության ռազմավարություն
- Ուսումնասիրություններ (Նախնական ուսումնասիրություն, Օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն, Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզ)
- Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանք
- Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ

«ԱՃԹՆ-ի փաստաթղթեր» ենթաբաժնում նաև տրվում է հղում ԲՇԽ-ի աշխատակարգին, որի տեղակայման հիմնական վայրը «ԲՇԽ» բաժինն է:

- **ԲՇԽ**
  - ԲՇԽ-ի կազմը և Վարչապետի որոշումը՝ այն հաստատելու մասին
  - ԲՇԽ-ի անդամների ընտրության ընթացակարգերը
  - ԲՇԽ-ի աշխատակարգ
  - ԲՇԽ-ի նիստեր
    - Օրակարգ, արձանագրություններ, առնչվող այլ փաստաթղթեր, լուսանկարներ
  - ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր

Այս բաժնում ներկայացվում է http://gov.am/am/eitimsg/ տեղակայված տեղեկատվությունը՝ համապատասխան հղումներով: «ԲՇԽ-ի կազմը և Վարչապետի որոշումը՝ այն հաստատելու մասին» ենթաբաժնում ներկայացվում են նաև ԲՇԽ-ի անդամների լուսանկարները և էլ. փոստային հասցեները, որոնց վրա սեղմելով կբացվի տվյալ անձի էլ. հասցեին հաղորդագրություն ուղարկելու պատուհան: «ԲՇԽ-ի նիստեր» ենթաբաժնում տրվում է տեքստային կարճ նկարագրություն և լուսանկար՝ հղում կատարելով դեպի ԲՇԽ-ի նիստերի ֆոլդերներ, որտեղ տեղակայված կլինեն նիստի օրակարգը, արձանագրությունը, առնչվող այլ փաստաթղթերը, pdf ֆորմատով և նիստի լուսանկարները (լուսանկարները պետք է գտնվեն Մեդիա կենտրոնում): «ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր» ենթաբաժնում ներկայացվում են ԲՇԽ-ի չորս աշխատանքային խմբերը՝ աղյուսակների տեսքով:

- ***Մեդիա կենտրոն***
  - Նորություններ
  - Հոդվածներ և հարցազրույցներ
  - Պատկերասրահ
  - Տեսանյութեր՝
    - «Հրապարակում»
    - ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական հոլովակներ

«Նորություններ» ենթաբաժնում ներկայացվում են նորությունները տեքստային եղանակով և նախատեսվում է լուսանկար, հոլովակ, հղում տեղադրելու հնարավորություն: Նորությունների տեքստը մասամբ է ներկայացվում. «Ավելին» կոճակը բացում է ամբողջական տեքստը:

«Հոդվածներ և հարցազրույցներ» ենթաբաժնում պետք է նախատեսվեն ինչպես անմիջապես մեր կողմից ներբեռնվող տեքստի և լուսանկարի, հոլովակի հնարավորություն, այնպես էլ հղումների հնարավորություն՝ այլ կայքերից հոդված-հարցազրույցները ներկայացնելու համար:

«Պատկերասրահ» ենթաբաժնում ներկայացվում են ԱՃԹՆ-ին առնչվող բոլոր լուսանկարները, այդ թվում՝ ԲՇԽ-ի նիստերի և աշխատանքային հանդիպումների լուսանկարները:

«Տեսանյութեր» ենթաբաժնում տեղադրվում են «Հրապարակում» հաղորդաշարի թափանցիկ հանքարդյունաբերությանը նվիրված տեսանյութերը (մոտ 10 հատ) և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական հոլովակներ (5 հատ): Տրվում է տեսանյութի վերնագիրը, համառոտ նկարագրությունը և բուն տեսանյութը:

- ***Տվյալների կենտրոն և առցանց հաշվետվության համակարգ***

Այս բաժինը բաղկացած է երկու ենթաբաժնից՝ տվյալների կենտրոն և առցանց հաշվետվության համակարգ: Բաժնի աջ վերևի կողմում պետք է նախատեսված լինի հատված առցանց հաշվետվության համակարգի օգտագործողի ծածկանվան և գաղտնաբառի

միջոցով մուտքի, ինչպես նաև գրանցման համար: Բաժնի հիմնական մասը զբաղեցնում է Տվյալների կենտրոնը: Հետագայում (հանքարդյունաբերական կազմակերպություններից և պետական գերատեսչություններից հաշվետվությունները ստանալուց հետո, նախատեսվում է 2018 թ. մարտ-ապրիլ ամիսներին) «Տվյալների կենտրոնը» գրաֆիկորեն կարտացոլի հանքարդյունաբերական ընկերությունների և պետական մարմինների կողմից հաշվետվություններով ներկայացված ագրեգացված տվյալները՝ տարիների կտրվածքով. կգեներացվեն տարբեր տեսակի գրաֆիկներ՝ հաշվետվություններ ներկայացրած ընկերությունների քանակ, համադրված հաշվետվությունների քանակ, արդյունահանման մասին տվյալներ, հարկային և այլ վճարումներ, լիցենզիայի վճարներ, բարեգործական-հովանավորչական վճարումներ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ, աշխատակիցների թվաքանակ, իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալներ: Օգտագործողները կարող են իրականացնել իրենց վերլուծությունը և տարբեր ֆիլտրների (օրինակ՝ ըստ հաշվետվություն ներկայացրած ընկերությունների, ըստ հաշվետու ժամանակաշրջանների, ըստ տվյալների դաշտերի) միջոցով ստանալ գրաֆիկական արդյունքները՝ ապահովելով տվյալները պատկերի և csv, xlsx ձևաչափով ներբեռնելու հնարավորությունը: Մինչև հաշվետվությունների ստացումը (նախատեսվում է 2018թ. մարտ-ապրիլ ամիսներին) այս ենթաբաժնում կներկայացվեն հետևյալ գրաֆիկները (աղյուսակների line, pie, column տեսակներն են օգտագործվելու)՝

- Հանքարդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում (2008-2015)
- Օտարերկրյա ուղղակի ներդրումները ոլորտում (2008-2015)
- Արտահանման մասին տվյալները
- Զբաղվածության վերաբերյալ տվյալներ

Օգտագործողները տվյալները տարբեր ֆորմատներով ներբեռնելու հնարավորություն կունենան (որպես նկար և որպես csv, xlsx աղյուսակ): Այս գրաֆիկների համար տվյալները վերցվում են Ազգային վիճակագրական ծառայությունից:

Առցանց հաշվետվության համակարգի նկարագրություն

Հանքարդյունաբերական ընկերությունները տարեկան առնվազն մեկ անգամ (պարբերականությունը և վերջնաժամկետները կսահմանվեն ավելի ուշ) հաշվետվություններ են ներկայացնում՝ էլեկտրոնային եղանակով: Ընկերութոնները պորտալում պետք է ունենան օգտվողների հաշիվներ (user accounts): Այդ նպատակով կազմակերպություններին է ուղարկվում առցանց հաշվետվության համակարգի հղումը՝ կազմակերպությունները և պատասխանատու անձանց՝ համակարգում գրանցելու, ինչպես նաև հաշվետվությունն առցանց ներկայացնելու համար:

Առցանց հաշվետվության համակարգում գրանցվելու համար պահանջվող տվյալներ՝ հանքարդյունաբերական կազմակերպությունների համար

Կազմակերպության անվանումը (հայերեն)՝ տեքստային
Կազմակերպության անվանումը (անգլերեն)՝ տեքստային
Կազմակերպաիրավական ձևը՝ Select (ընտրելու հնարավորությամբ՝ ՓԲԸ, ՍՊԸ, ԲԲԸ և այլ): Այլի դեպքում՝ տեքստային
ՀՎՀՀ՝ տեքստային
Գրանցման հասցեն՝ երկու պատուհան՝ մարզ (Select ընտրելու հնարավորություն) և տեքստային
Գործունեության հասցեն՝ երկու պատուհան՝ մարզ (Select ընտրելու հնարավորություն), և տեքստային
Պատասխանատու աշխատակցի անուն և ազգանուն (պետք է ծանոթագրություն լինի. պատասխանատու աշխատակիցը պետք է ունենա ակտիվացված էլ. ստորագրությամբ նույնականացման քարտ)՝ տեքստային
Պաշտոն՝ տեքստային
Էլ. փոստ՝ տեքստային (պահանջելով @-ի առկայությունը)
Հեռախոսահամար՝ տեքստային՝ կոդով
Լոգին՝ տեքստային (գեներացնում է համակարգը՝ ելնելով կազմակերպության անվանումից)
Գաղտնաբառ՝ տեքստային
Գաղտնաբառի ստուգում՝ տեքստային
Գաղտնաբառի ստուգումից հետո անհրաժեշտ է նախատեսել օգտատերի՝ իրական անձ լինելու ստուգման գործիք:
Գրանցումը հաջողությամբ իրականացնելուց հետո գրանցումը հաստատվում է պորտալի մոդերատորի կողմից, որից հետո կազմակերպության աշխատակիցը ստանում է հաջողությամբ գրանցվելու մասին էլ. նամակ:
Կազմակերպության աշխատակիցը, մուտք գործելով համակարգ, տեսնում է լրացման ենթակա երկու էջանոց (մեկ հաշվետու տարի սահմանելու դեպքում) հայտ (էջերի քանակը և դրանց ձևաչափերը կարող են փոփոխվել): Հայտի էջերը համապատասխանաբար կավելանան յուրաքանչյուր հաշվետու տարի ավելացնելու դեպքում այնպես, որ ըստ տարիների ֆիլտրելու հնարավորություն ընձեռվի: Առաջին էջում աղյուսակ է: Աղյուսակի ձախ կողմը ստատիկ է, նշված են ֆինանսական հոսքերի անունները: Օրինակ՝

1. Հարկային մուտքեր՝
    a. շահութահարկ
    b. եկամտային հարկ
    c. ԱԱՀ
    d. Ակցիզային հարկ
    e. Այլ հարկային մուտքեր
2. Ոչ հարկային մուտք

a. Ռոյալթի
b. Բնապահպանական վճար
c. Բնօգտագործման վճար
d. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում
e. Մշտադիտարկումների իրականացման վճար
f. ՇՄԱԳ-ի իրականացման վճար
g. Մաքսային վճարներ
h. Այլ վճարներ

3. Ընդամենը

Համակարգի հաշվետվությունների էջերի յուրաքանչյուր դաշտին կից անհրաժեշտ է նախատեսել «Նշումներ» դաշտ՝ տեքստային ձևով տվյալ դաշտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն տրամադրելու համար: Իսկ յուրաքանչյուր հաշվետվության վերջում լրացնողը պետք է ունենա փաստաթուղթ բեռնելու հնարավորություն՝ հաշվետվության վերաբերյալ օժանդակ փաստաթղթերի տրամադրման համար:

Ֆինանսական հոսքերի դաշտերը վերջնականացվելու են՝ համապատասխան պատվիրատուի առաջարկած ձևաչափի:

Աղյուսակի աջ կողմում օգտագործողը լրացնելու հնարավորություն է ունենում: Աջ կողմում լրացված թվերը պետք է գումարվեն՝ «Ընդամենը» տողում տալով մնացած հոդվածների հանրագումարը:

Երկրորդ էջում լրացվում են զբաղվածության, արդյունահանման ծավալների և այլ համատեքստային տվյալներ (ավելի մանրամասնորեն կներկայացվեն պատվիրատուի կողմից):

Հայտը լրացնելուց հետո օգտագործողը կարող է այն պահպանել որպես սևագիր կամ ուղարկել այն: Հայտի ուղարկման պահին համակարգը պետք է պահանջի օգտագործողից ստորագրել նույնականացման քարտի միջոցով՝ տեղադրելով այն համապատասխան սարքի մեջ, որի միջոցով էլ իսկ որոշման արդյունքում համակարգը տվյալները հիմնապաշարում հիշելուց զատ պետք է կազմի մուտքագրված տվյալներով PDF ֆայլ՝ էլեկտրոնային ստորագրելով այն:

Պետական գերատեսչությունները տարեկան առնվազն մեկ անգամ, ինչպես հանքարդյունաբերական ընկերությունների դեպքում (պարբերականությունը և վերջնաժամկետները կսահմանվեն ավելի ուշ) հաշվետվություններ են ներկայացնում՝ էլեկտրոնային եղանակով: Պետական մարմինների համար պորտալում մոդերատորի կողմից բացվում են օգտվողների հաշիվներ (user accounts), և նրանց է ուղարկվում առցանց հաշվետվության համակարգի հղումը՝ համակարգում պատասխանատու անձանց գրանցելու և հաշվետվություններն առցանց ներկայացնելու համար:

Յուրաքանչյուր հաշվետու պետական մարմնի համար մշակվում է հաշվետվության առանձին էջ: Հաշվետու պետական գերատեսչությունների քանակը (նախնական տվյալներով՝ մինչև 10 մարմին) և յուրաքանչյուր պետական գերատեսչության կողմից լրացման ենթակա հայտերի բովանդակությունը կներկայացվի պատվիրատուի կողմից ավելի ուշ: Դաշտերը հիմականում լինելու են ֆինանսական և համատեքստային տվյալների վերաբերյալ, ինչպես ընկերությունների դաշտերն են:

Իսկ տեղական ինքնակառավարման մարմինների մասին տեղեկությունները լրացվելու են մեկ լիազոր մարմնի կողմից՝ մեկ էջում, որտեղ պետք է արտացոլվեն յուրաքանչյուր համայնքի անունը և վերջինիս վերաբերող բոլոր տվյալները:

Առցանց հաշվետվության համակարգում գրանցվելու համար պահանջվող տվյալներ՝ պետական գերատեսչությունների համար

Պետական մարմնի անվանումը (հայերեն)՝ տեքստային
Պետական մարմնի անվանումը (անգլերեն)՝ տեքստային
Հասցեն՝ տեքստային
Պատասխանատու աշխատակցի անուն և ազգանուն (պետք է ծանոթագրություն լինի. պատասխանատու աշխատակիցը պետք է ունենա նույնականացման քարտ/էլ. ստորագրություն)՝ տեքստային
Պաշտոն՝ տեքստային
Էլ. փոստ՝ տեքստային (պահանջելով @-ի առկայությունը)
Հեռախոսահամար՝ տեքստային՝ կոդով
Լոգին՝ տեքստային
Գաղտնաբառ՝ տեքստային
Գաղտնաբառի կրկնում՝ տեքստային

Գաղտնաբառի ստուգումից հետո անհրաժեշտ է նախատեսել օգտատերի՝ իրական անձ լինելու ստուգման գործիք:

Պետական մարմինների գրանցումը համակարգում կատարվում է պորտալի մոդերատորի կողմից, և լոգինն ու գաղտնաբառը տրվում են պետական մարմինների համապատասխան ներկայացուցչին: Առցանց համակարգում պետք է նախատեսվի գաղտնաբառը փոխելու հնարավորություն՝ առաջարկելով դա պետական մարմնի ներկայացուցչի առաջին անգամ համակարգ մուտք գործելու ժամանակ:

Պետական մարմնի աշխատակիցը, մուտք գործելով պորտալ, տեսնում է լրացման ենթակա առցանց հայտը. հայտի բովանդակությունը կսահմանվի ավելի ուշ՝ ԱՃԹՆ Նախնական ուսումնասիրության իրականացման արդյունքում ԲՇԽ-ի կողմից ընդունված որոշման հիման վրա:

Հայտը լրացնելուց հետո օգտագործողը կարող է այն պահպանել որպես սևագիր կամ ուղարկել՝ նախապես էլեկտրոնային ստորագրություն դնելով: Հայտի ուղարկման պահին համակարգը պետք է պահանջի օգտագործողից՝ տեղադրել

համապատասխան սարքի մեջ նույնականացման քարտը, որի միջոցով էլ իսկ որոշման արդյունքում համակարգը տվյալները հիմնապաշարում հիշելուց զատ պետք է կազմի մուտքագրված տվյալներով PDF ֆայլ՝ էլեկտրոնային ստորագրելով այն:

Անկախ ադմինիստրատորը պետք է մուտք ունենա դեպի տվյալների ամբողջական հիմնապաշար: Այդ նպատակով նա պետք է ունենա օգտվողի հաշիվ (user account): Այդ նպատակով անկախ ադմինիստրատորին է ուղարկվում առցանց հաշվետվության համակարգի հղումը՝ իրեն առցանց ներկայացնելու համար:

Առցանց հաշվետվության համակարգում գրանցվելու համար պահանջվող տվյալներ՝ անկախ ադմինիստրատորի համար
Անկախ ադմինիստրատորի անուն-ազգանունը/անվանումը (հայերեն)՝ տեքստային
Անկախ ադմինիստրատորի անուն-ազգանունը/անվանումը (անգլերեն)՝ տեքստային
Գրանցման հասցե՝ տեքստային
Էլ. փոստ՝ տեքստային (պահանջելով @-ի առկայությունը)
Հեռախոսահամար՝ տեքստային՝ կոդով
Լոգին՝ տեքստային (գեներացնում է համակարգը՝ ելնելով անկախ ադմինիստրատորի անունից/անվանումից)
Գաղտնաբառ՝ տեքստային
Գաղտնաբառի ստուգում՝ տեքստային
Գրանցումը հաջողությամբ իրականացնելուց հետո գրանցումը հաստատվում է պորտալի մոդերատորի կողմից, որից հետո անկախ ադմինիստրատորը ստանում է հաջողությամբ գրանցվելու մասին էլ. նամակ:

Կազմակերպությունների և պետական գերատեսչությունների կողմից լրացված հաշվետվություններն ուղարկում են տվյալների հիմնապաշար՝ այդ մասին էլ. փոստի միջոցով տեղեկացնելով պորտալի մոդերատորին և անկախ ադմինիստրատորին:
Պորտալի մոդերատորը և անկախ ադմինիստրատորը տեսնում են տվյալների ընդհանրական աղյուսակ, որտեղ նշվում է հաշվետվության ներկայացման օրը և ժամը:
Պորտալում պահպանվում են բոլոր ստորագրված հաշվետվությունները pdf ձևաչափով, որոնց վրա նշվում է հաշվետվության ներկայացման օրն ու ժամը (զուգահեռ ապահովելով բաց տվյալների ձևաչափով ներբեռնման հնարավորություն՝ xlsx, csv), և հասանելի են դառնում պորտալի մոդերատորին և անկախ աուդիտորին:
Հաշվետվությունների տվյալներից ստեղծված շտեմարանում պետք է առանձնացված լինեն հանրային՝ բոլոր օգտատերերին հասանելի, և, ելնելով անձնական տվյալների պաշտպանության նկատառումից, մասնակի փակ (հասանելի միայն մոդերատորին և անկախ աուդիտորին) տվյալների հատվածներ:
Այն դեպքում, երբ հաշվետություն ներկայացնող պետական մարմինը կամ հանքարդյունահանող կազմակերպությունները մինչև հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը հայտնաբերել է սխալ իրենց ներկայացրած հաշվետվություններում, ապա նամակով դիմում է մոդերատորին և ներկայացնում նոր հաշվետվություն: Պորտալը պետք է ավտոմատ նախատեսի նախկին հաշվետվության դուրսբերումը տվյալների հիմնապաշարից՝ պահպանելով վերջինիս PDF տարբերակը:
Պորտալի մոդերատորի մոդուլում պետք է նախատեսված լինի համակարգում գրանցումները կառավարելու էջ և հայտերի ձևաթղթերի (դաշտերի և էջերի ավելացում, փոփոխություն) կառավարում: Իսկ անկախ ադմինիստրատորի համար պետք է նախատեսված լինի տվյալների համադրման գործառույթ (reconciliation function): Պետական մարմինների և ընկերությունների կողմից ներկայացված տվյալների համադրման ենթակա դաշտերը կներկայացվեն պատվիրատուի կողմից:

- ***Օգտակար նյութեր և հղումներ***

Այս բաժնում կներկայացվեն ՄԱԶԾ և այլ դոնորների աջակցությամբ ոլորտին առնչվող և ԱՃԹՆ համատեքստին վերաբերող նյութերը: Այս բաժնում կներկայացվեն նաև համապատասխան պետական գերատեսչությունների և ոչ պետական կազմակերպությունների հղումներ:

- ***Կապ***

Այս բաժնում կներկայացվի քարտուղարության հետևյալ տեղեկատվությունը.
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության հայաստանյան քարտուղարություն,
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1,
Հեռախոս՝ +374 10 515 746
Էլեկտրոնային հասցե՝ eiti@gov.am
Քարտուղարության ֆեյսբուքյան խումբ (հղում)
ԲՇԽ անդամների կոնտակտները՝ հղումով կատարելով «ԲՇԽ» բաժին

Պետք է նաև նախատեսված լինի հետադարձ կապի հնարավորություն: Մասնավորապես՝ պետք է լինեն տեքստային դաշտեր՝ հետևյալ վերնագրերով՝ անուն-ազգանուն, էլեկտրոնային փոստ, հաղորդագրություն, հաստատման կոդ: Պետք է նաև լինի ուղարկելու կոճակ:

Ակնկալվող արդյունքներ

Առաջադրանքի արդյունքը կլինի մի համակարգ, որը հնարավոր կդարձնի հասարակության պատշաճ իրազեկումն ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի վերաբերյալ և ԱՃԹՆ-ի գործունեության արդյունքում բացահայտված տվյալների առցանց հասանելիության ապահովումը: Համակարգը կնպաստի քաղաքացիական հասարակության, գործարար հատվածի և պետական մարմինների միջև տեղեկացված շարունակական երկխոսությանը՝ հնարավորություն տալով ՀԼՄ-ներին և հետազոտողներին, ինչպես նաև լայն հասարակությանը օգտվել հավաքագրված և պորտալում ներկայացված տեղեկություններից:

Աշխատանքների իրականացման ժամանակացույց

Համակարգի մշակումն ու ներդրումը կիրականացվի հետևյալ փուլերով 3,5-4 ամսվա ընթացքում.

Փուլ 1. Մեկնարկային շրջան (0.5 ամիս)

- Հանդիպել ԲՇԽ-ի անդամների հետ և որոշել կոնտակտային անձանց,
- Պատվիրատուին ներկայացնել պորտալի արտաքին ձևավորման առնվազն 2 տարբերակ և պատվիրատուի հետ համաձայնեցնել վերջնական տարբերակը,
- Պատվիրատուին ներկայացնել պորտալի քարտեզը (site map), որը կնկարագրի պորտալի կառուցվածքը բաժինների հիերարխիկ դասավորությունն եւ յուրաքանչյուր էջի կառուցվածքը,
- Պարզել հիմնական գործողությունները, տվյալների և գործարքների ծավալը և այլն,
- Հաստատել առաջադրանքի տեսլականը և նպատակները պատվիրատուի հետ,
- Մշակել պահանջների մասնագիր առաջարկվող լուծման օպտիմալ և անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ համապատասխան սարքավորումների վերաբերյալ,
- Ներկայացնել նախնական հաշվետվություն, որն ի թիվս աշխատանքի այլ նկարագրությունների կներառի ներդրվող համակարգի համար պահանջվող սարքավորումների մասնագրերն ու շահագործման պայմանների նկարագրությունը:

Փուլ 2. Համակարգի ստեղծում (1.5-2 ամիս)

- Համակարգի նախագծում, ծրագրավորում եւ ներդրում,
- Տվյալների փոխանակման ենթահամակարգի ներդրում՝ ըստ տեխնիկական առաջադրանքի պահանջների,
- Նոր համակարգի ամբողջական գործարկում,
- Տվյալ փուլի վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Փուլ 3. Առաջադրանքի հանձնում (0.5 ամիս)

- Օգտվողի ձեռնարկի մշակում,
- Համակարգի փոխանցում պատվիրատուին,
- Ծրագրային ապահովման արտոնագրային համաձայնագրի տրամադրում,
- Պատվիրատուի և Խորհրդատուի միջև երաշխիքային սպասարկման համաձայնագրի ստորագրում,
- Գիտելիքների փոխանցում և վերապատրաստում նշանակված աշխատակիցներին,
- Ավարտական հաշվետվության ներկայացում:

Փուլ 4. Առցանց հաշվետվության համակարգում փոփոխությունների իրականացում (1 ամիս) (2018թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում)

- Ֆինանսական հոսքերի անվանումների տեղադրում,
- Կազմակերպությունների և պետական մարմինների կողմից լրացվող այլ տվյալների դաշտերի տեղադրում,
- Տրված ձևաթղթերի մասով նոր էջերի ավելացում,
- Առցանց հաշվետվության համակարգում պատվիրատուի կողմից նշված փոփոխությունների իրականացում:

Փուլ 4-ին կհետևի 12 ամսյա երաշխիքային սպասարկման ժամկետը, որը կներառի համակարգի շահագործման ընթացքում ի հայտ եկած սխալների ուղղումը և բոլոր խնդիրների կարգավորումը:

Ակնկալվում է, որ յուրաքանչյուր փուլի իրականացումը կմեկնարկի նախորդ փուլի հաջող ավարտից հետո: Այնուամենայնիվ, Խորհրդատուն կարող է, հնարավորության դեպքում նախաձեռնել ծառայություններ մի քանի փուլերում զուգահեռաբար՝ օր., ուսուցման ծրագիրը կարող է նախաձեռնվել և իրականացվել առաջադրանքի իրականացմանը զուգահեռ:

IV. Ակնկալվող արդյունքներ

Հանձնարարության ակնկալվող արդյունքը պետք է լինի մի համակարգ, որը հասարակությանը պետք է տեղյակ պահի ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի մասին և պետք է ապահովի տվյալների արտացոլման հնարավորություն, որը կբացահայտվի ԱՃԹՆ-ի գործունեության արդյունքում: Համակարգը պետք է նպաստի քաղաքացիական հասարակության, բիզնեսի ոլորտի և պետական մարմինների միջև շարունակական երկխոսությանը՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին և հետազոտողներին, ինչպես նաև հանրությանը օգտագործել պորտալում հավաքագրված և տրամադրված տեղեկատվությունը:

#	Արդյունքներ	Արժեք	Վերջնաժամկետ
1.	Սկզբնական փուլի մասին նախնական հաշվետվություն, որը կներառի այս փուլում նշված բոլոր պահանջները	15%	Հունվարի 31, 2018
2.	Մշակված ծրագրային ապահովում և ներկայացված զեկույց, որը ներառում է այս փուլում նշված բոլոր պահանջները	30%	Մարտ 31, 2018
3.	Ներկայացված վերջնական զեկույցը (հանձնել, մշակել օգտագործողի ձեռնարկը, իրականացնել ուսուցում և այլն), ներառելով այս փուլում նշված բոլոր պահանջները	35%	Ապրիլ 15, 2018
4.	Առցանց օպերացիոն համակարգ	20%	Մայիս 15, 2018

Ինստիտուցիոնալ մեխանիզմներ

- Կապալառուն կաշխատի ՄԱԶԾ Պորտֆոլիո վերլուծաբանի և Ծրագրի տեխնիկական առաջադրանքի ղեկավարի ուղղակի վերահսկողության ներքո և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հետ սերտ համագործակցությամբ:

- Առաջադրանքի իրականացման ընթացքում կապալառուն պետք է սերտորեն համագործակցի ՄԱԶԾ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հետ:

- Կատարվելիք աշխատանքների որակի ապահովման համար Ծրագրերի համակարգող բաժնի Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի և ընտրված ընկերություն հետ հանդիպումներ կկազմակերպվեն՝ համաձայնեցնելու ակնկալիքները, աշխատանքների շրջանակները, քայլերը և աշխատանքային պլանը: Ծրագրի համակարգող ստորաբաժանման և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հետ պարբերական հանդիպումներ պետք է կազմակերպվեն առաջադրանքների առաջընթացի և ավարտված փուլերի վերաբերյալ, ինչպես նաև քննարկելու ՄԱԶԾ-ի կողմից խորհրդատվություն պահանջող ցանկացած հարց:

- Կապալառուն պետք է ներկայացնի նախագծային կայքը՝ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամներին և ներառի կայքի վերաբերյալ բոլոր դիտարկումները:

- Պորտալը պետք է մշակվի պայմանագրի ստորագրումից հետո 3 ամսվա ընթացքում:

Վճարումների ժամանակացույց

• Վճարը կատարվում է 3 փոխանցումների ձևով, համապատասխան արդյունքները ժամանակին ավարտելու և ՄԱԶԾ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից դրանք ընդունելուց հետո, հիմք ընդունելով ստորագրված ընդունման հանձնման ակտերը և բովանդակային հաշվետվությունները:

• Առաջադրանքի իրականացման համար նախատեսվում է կատարել վճարում հետևյալ կերպ.

- Արդյունք 1 - 15%

- Արդյունք 2 - 30%

- Արդյունք 3 եւ 4 - 55%

• Արդյունքների գնահատումը ՄԱԶԾ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի պատասխանատվությունն է:

• Եթե ՏԱ-ի պայմանները բավարարված չեն, ապա պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վճարը կարող է կրճատվել:

Խորհրդատուների որակավորում
Խորհրդատուի որակավորումները և փորձը պետք է համապատասխանեն ստորև ներկայացված նվազագույն պահանջներին.

- Պորտալը պատրաստող ընկերությունը պետք է ունենա 3 տարվա աշխատանքային փորձ SS ոլորտում և նմանատիպ պայմանագրերի կատարման փորձառնություն: Նմանատիպ են համարվում պետական գերատեսչությունների կայքերի մշակումը, էլեկտրոնային կառավարման ոլորտի համար համակարգչային ծրագրավորման ծառայությունների մատուցումը, տվյալների բազաների մշակումը բաց կոդով տեխնոլոգիաների միջոցով և էլեկրոնային ստորագրության կիրառմամբ համակարգերի մշակման ծառայությունների մատուցումը:
- Պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության փորձ:

Առաջարկվող մեթոդաբանությունը, մոտեցումը և իրականացման պլանը.

• Առաջադրանքի նախագծման մոտեցում, ներառյալ իրականացման փուլային նկարագրությունները.

• Առաջադրանքի իրականացման մոտեցում, ներառյալ առաջարկվող առաջադրանքը կատարելու քայլերը, հստակ փուլերի ժամանակացույցի աղյուսակը, արդյունքների ամփոփման ժամանակացույցով մանրամասն աշխատանքային պլան.

Կառավարման կառուցվածքը և հիմնական անձնակազմը.

- Ընկերությունը պետք է ունենա առնվազն հետևյալ աշխատակազմը՝
  - Նախագծերի ղեկավար – 1
  - Վեբ/UI դիզայներ - 1
  - Frontend ծրագրավորող – 1
  - Backend ծրագրավորող – 2
- Պորտալը պետք է պատրաստվի ընկերության կողմից պայմանագիրը կնքելուց հետո 3 ամսվա ընթացքում,
- Ընկերությունը պետք է ներկայացնի պատրաստված համանման կայքերի և համակարգերի հղումները:

Ներգրավված մասնագիտական անձնակազմի ինքնակենսագրականները.

• Փորձագետ 1 (Թիմի ղեկավար), համակարգչային գիտությունների և / կամ այլ համապատասխան գիտական աստիճան ՝ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ SS ոլորտում, ինչպես նաև ուժեղ համակարգման և թիմի առաջնորդ լինելու հմտություններ:

• Փորձագետ 2, համապատասխան բուհական կրթությամբ և առնվազն 3 տարվա աշխատանքային / փորձով վեբ դիզայնում:

• Փորձագետ 3, համապատասխան բուհական կրթություն և համակարգչային ծրագրավորման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ

• Փորձագետ 4, համապատասխան բուհական կրթություն և համակարգչային ծրագրավորման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ

Գնային առաջարկ

Խորհրդատուն հայտադիմումում ներկայացնելու է առաջարկություններ ինչպես պորտալի ստեղծման, այնպես էլ ընթացիկ աշխատանքների (պորտալի փոփոխություն, լրացումներ, խորհրդատվության համար ծախսեր, հաղորդակցություն և այլն) ծախսային պայմանների վերաբերյալ, ներառելով ամսեկան պահպանման ծախսերը: